

Ա. Շենքար
Բատոն և Ծովինար
թթվական 1896 թ

Լուս
791

2009

930
23 JUN 2005

Հայ
791

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Անկերութիւն

№ 111

Տէղագործ

ՐՈՍԻՈ ԵՒ ԶՈՒԼԻԵՏ



Թարգմ. անդիքսներ

ՅՈՎՅ. ԽԱՆ ՍԱՍԵՔԵԱՆ



7324

ԹԻՖԼԻՍ


Տպографія М. Д. Ротинянца, Гол. пр., соб. д. № 41.

1896

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Հարկ ենք համարում մի քանի խօսք ասել այն բազմաթիւ բառախաղերի մասին, որոնցով լի է «Ռոմէօ և Զուլիէտը»: Բառախաղերը, գրեթէ միշտ, անթարգմանելի են: Եթէ փոխադրողը յաջողի բնագրի սրախօսութիւնների տեղ համանման բառախաղեր տալ,—ի հարկէ ոչ այնքան ընտիր,—որպանից առելին չէ կարելի պահանջնել: Մենք չանք ենք արել, որ որ սրախօսութիւնը բառի վերայ է եւ ոչ մորի՝ յարմարեցնել համապատասխան բառախաղեր հայերէն լեզուից, որով ըստէալէս շեղուել ենք ընագրից: Բոլոր թարգմանիչները իրանց թոյլ են տուած այդքան ազատութիւն: Բայց թէ մեր բառախաղերը ո՞քչափ են յաջողուած այդ չենք կարող ասել. միայն կարող ենք յոյս դնել ընթերցողների ներողամտութեան վերայ:

ԹԱՐԳՄԱՆԻՑ



791-2009



(10-2674)

(4244-57)

1888

ԳՈՐԾՈՂ ԱՆՉԵՐ

ԵՍԿԱՅՈՍ, Վերտնակի իշխան։
ՊԱՐԻՍ, մի երիտասարդ տղնուական, իշխանի ազգական։
ՄՈՒՏԵԳԻԻ, { երկու զերդաստանների գլուխները, ո-
ԿԱՊԻՒԼԵՏ, { րոնք միմևանց հետ թշնամի են։
ՐՈՄԵՅ, Մոնտէգիւի որդին։
ՄԵՐԿՈՒՏԻՅ, { Բոմեյի բարեկամներ։
ԲԵՆՎՈԼԵՅ, { Կապիւլէտի ազգական։
ՏԻԹՈԼԻՏ, Մի Շեր ՄԱՐԴ, Կապիւլէտի հօրեղբօր որդի։
ՀԱՅՐ ԼՈՐԵՆՍ, մի Փրանսիսկեան կրօնաւոր։
ՀԱՅՐ ՅՈՎԱՆՆԵՍ, Նոն կարգից մի կրօնաւոր։
ԲԱՂԳԱՍԱՐ, Բոմեյի ծառակ։
ՍԱՄՍՈՆ, { Կապիւլէտի ծառաներ։
ԳՐԵԳՈՐԻՅ, Ո.ԲՐԱՄ, Մոնտէգիւի ծառակ։
ԵՐԵԲ ԵՐԱԺԻՇՏ, Պակակի ծառակ։
ՊԵՏՐՈՍ, Մոնտէգիւի կին։
ԼԵԳԻ ՄՈՒՏԵԳԻԻ, Կապիւլէտի կին։
ԼԵԳԻ ԿԱՊԻՒԼԵՏ, ԶՈՒԼԵՏ, Կապիւլէտի դուստր, Բոմեյի սիրուհի։
ԳԱՅԵԱԿ, Կապիւլէտի։

ԿԼՈՇՆ, Մանկւաւիկ, Պարխոր ծառան։ Մի Գեղավաճառ։

Վերտնակի քաղաքացիներ, Զանազան մարդիկ և կանաչք։
Երկու զերդաստանների ազգականներ, Դիմակաւորներ, Պահապաններ։ Պահակներ, Պահակներ և ուրիշ Ծառաններ։

Տեսարանը առաջին չորս արարուածների մէջ տեղի ունի
Վերոնայում, իսկ հինգերորդ տեսարանի սկիզբը Ման-
տուայում, մացորդը կրկին Վերոնայում։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Երկու մեծատոհմ գերղաստան կային
Վերոնա կոչուած սիրուն քաղքի մէջ,
Որոնք իրար դէմ հին ոխ ունէին,
Որ պահում էին հանապազ անշէջ,
Հին քէնի վերայ նոր քէն քարդելով,
Միմեանց արեան մէջ ձեռք թաթակնելով:
Այս ոսկների դժպիհ արգանդից
Մի գոյգ չար աստղով սիրահար ծնան,
Որոնց վշտերը եւ մաս ցաւալից
Վերջ տուին տոհմի հին ատելութեան:
Սիրոյ անցքերը այդ սիրողների,
Կատաղի ոխը այդ ծընողների,
Որ ոչ մի քանով յագուրդ չըստացաւ,
Բայց միայն մահով խելմ զատկների
Երկու ժամհուայ նիւթ կըտան մեր քեմին,
Որ եթէ լրսէք դուք համբերութեամք՝
Ինչ որ թերի է կըփոխարինենք
Մեր ծիգ ու ջանքով եւ յօժարութեամք:

Երկու մեծատոհմ գերղաստան կային
Վերոնա կոչուած սիրուն քաղքի մէջ,
Որոնք իրար դէմ հին ոխ ունէին,
Որ պահում էին հանապազ անշէջ,
Հին քէնի վերայ նոր քէն քարդելով,
Միմեանց արեան մէջ ձեռք թաթակնելով:
Այս ոսկների դժպիհ արգանդից
Մի գոյգ չար աստղով սիրահար ծնան,
Որոնց վշտերը եւ մաս ցաւալից
Վերջ տուին տոհմի հին ատելութեան:
Սիրոյ անցքերը այդ սիրողների,
Կատաղի ոխը այդ ծընողների,
Որ ոչ մի քանով յագուրդ չըստացաւ,
Բայց միայն մահով խելմ զատկների
Երկու ժամհուայ նիւթ կըտան մեր քեմին,
Որ եթէ լրսէք դուք համբերութեամք՝
Ինչ որ թերի է կըփոխարինենք
Մեր ծիգ ու ջանքով եւ յօժարութեամք:

ԳՐԱԴՐՈՒՅԹ

Անյա հայության և եկամուտի առջև
 Յի պարագայ նախարար մասնակի
 Միայն յոյ եղան զբաղ զանց
 Անձնա զարդար պատկան է Անց
 Կուլտուրի և Գյուղա ազգական վայ
 Վայու անձնա մասնական պատկան է
 Սահմանագործակց պատկան է Անձնա
 Անձնա կուլտուրա գոյա պատկան է
 Անձնա ազգա պատկան է Անձնա պատկան է
 Անձնա ազգա պատկան է Անձնա
 Անձնա ազգա պատկան է Անձնա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒՀԱՅԻԼԻՑԻՑ *)

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱԿ Ա.

Վերոնա. Մի հրապարակ. Մանում են ՍԱՄՍՈՆ և ԳՐԵԳՈՐԻՕ,
 սրերով և վահաններով զինուած:

ՍԱՄՍՈՆ

Գրեգորիօ, Հաւատու, մենք խալտառակութիւն կուլ
 տուողը չենք:

ԳՐԵԳՈՐԻՕ

Ոչ, այլապէս մենք խալտառակ կլինէինք:

ՍԱՄՍՈՆ

Ուզում եմ ասել, որ եթէ մեզ բարկացնեն՝ որեք
 դուրս կքաշենք:

*) Այն պատմութիւնը, որի վերաէ աևս թատրերզը հիմուած է
 պատմուած է որպէս խսկանած պատահած ձիրուսո զը և աս կօրտէի
 վերոնափ պատմութիւն» գրքի մէջ, և լաւ ծանօթ էր անզլիացի
 բանաստեղծներին Շէկսպիրից առաջ: Աւելի մանրամասն տեղե-
 կութեանց համար տես Ֆրանսուա Վիկտոր Հիւգուի Փրանտիական
 թագմանութեան նախարանը:

Ծ. թ.

ԳՐԵԳՈՐԻՕ

Այս. բայց զգուշ կաց որ վիզի դուրս չքաշեն:

ՍԱՄՍՈՆ

Ես իսկոյն զարկում եմ, հէնց որ ինձ գրգռում են:

ԳՐԵԳՈՐԻՕ

Բայց դու շուտ չես գրգռում զարկելու:

ՍԱՄՍՈՆ

Մոնտէգիւների տան շներից մէկը ինձ գրգռում է:

ԳՐԵԳՈՐԻՕ

Գրգռել նշանակում է շարժել. իսկ քաջ լինել նշանակում է պինդ կանգնել. ուրեմն եթէ դու գրգռում ես՝ նշանակում է դու փախչում ես:

ՍԱՄՍՈՆ

Այդ տան շներից մէկը ինձ գրգռում է պինդ կանգնելու: Մոնտէգիւի տնեցիներից ինչ մարդու կամ ինչ կնոջ որ հանգիպեմ՝ պատի կողմը կբռնեմ *) և նորանից առաջ կընկնեմ:

ԳՐԵԳՈՐԻՕ

Այդ ցոյց է տալիս, որ դու մի անոյժ որիկայ ես եղել. որովհետեւ միշտ անոյժ մարդն է պատի կողմը բռնում:

ՍԱՄՍՈՆ

Ճիշդ է, և հէնց այդ պատճառով է որ կնիկները լինելով աւելի գիւրաբեկ անօթներ՝ միշտ ձգւում են պատի կողմը. ուրեմն երբ որ Մոնտէգիւի տնեցիներին հանգիպեմ՝ տղամարդկանց կհրեմ պատից հեռու, իսկ կնիկներին կը կպցնեմ պատին:

ԳՐԵԳՈՐԻՕ

Վէճը մէր տէրերի, և մեր, նոցա ծառաների մէջն է:

*) Պատի կողմը բռնել անարգանքի նշան էր.

ՍԱՄՍՈՆ

Ինձ համար բոլորը մէկ էս ես ուղղում եմ բռնաւոր դառնալ. տղամարդկանց հետ կառւելուց յետով՝ ես անգութիւնիմ դէպի աղջիկները. ես նրանց կդիմատեմ:

ԳՐԵԳՈՐԻՕ

Աղջիկներին կդիմատեմ:

ՍԱՄՍՈՆ

Այն, կոյսերին, կամ նոցա կուսութիւնը. ինչպէս կուգես այնպէս հասկացիք:

ԳՐԵԳՈՐԻՕ

Նոքա կհասկանան, որոնք կզգան:

ՍԱՄՍՈՆ

Ես նորանց զգալ կտամ՝ որչափ որ դիմանալու ոլժունենամ. և ամեն մտրդ գիտէ որ ես մի լաւ կտոր միս եմ:

ԳՐԵԳՈՐԻՕ

Լաւ է որ ձուկ չես. եթէ ձուկ լինէիր՝ դու անպիտան ձողաձուկ կլինէիր: Դուրս քաշիք գէնքդ, ահա Մոնտէգիւի տնեցիներից: (Մտնում են Աքրամ և Բաղդասար):

ՍԱՄՍՈՆ

Ահա սուրս մերկացրած. դու մէկ կոիւ բաց արա, ես քո կռնակիդ. կանգնած եմ:

ԳՐԵԳՈՐԻՕ

Ի՞նչ. որ յետոյ կռնակդ շըշես և փախչես:

ՍԱՄՍՈՆ

Ինձնից մի վախենար:

ԳՐԵԳՈՐԻՕ

Ոչ, ես իմ հոգիս. ես քեզնից վախենամ:

ՍԱՄՍՈՆ

Այնպէս անենք որ օրէնքը մէր կողմը լինի. թող առաջ նոքա սկսեն:

ԴՐԵԳՈՐԻՕ

Ես նորանց մօտից անցնելիս գէմքս կխռժոռացնեմ.
թող նոքա ինչպէս կուզեն այնպէս հասկանան:

ՍԱՄՍՈՂՆ

Ոչ, այնպէս հասկանան՝ ինչպէս կհամարձակուեն: Ես
նոցա երեսին կնայեմ և բոյթս կկծեմ *): Եթէ հանդուր-
ժեն՝ ալդ նորանց համար մեծ անպատճութիւն կլինի:

ԱԲՐԱՄ

ՄԵՐ վերալ էք ձեր բոյթը կծում, պարոն:

ՍԱՄՍՈՂՆ

Ես իմ բոյթս եմ կծում, պարոն:

ԱԲՐԱՄ

ՄԵՐ վերալ էք ձեր բոյթը կծում, պարոն:

ՍԱՄՍՈՂՆ (ցած Գրեգորիոյին)

Արդեօք օրէնքը մեր կողմը կլինի, եթէ ասեմ այս:

ԴՐԵԳՈՐԻՕ

Ոչ:

ՍԱՄՍՈՂՆ (բարձր՝ Արքամին)

Ոչ, պարոն, ես իմ բոյթս ձեր վերալ չեմ կծում, պա-
րոն. բայց ես իմ բոյթս եմ կծում, պարոն:

ԴՐԵԳՈՐԻՕ (Արքամին)

Կոթւ էք փնտռում, պարոն:

ԱԲՐԱՄ

Կոթւ, պարոն. ոչ, պարոն:

*) Ալդ տեսակ՝ անարդանքը երեխ խտալիակից է ծագում առել,
և Շէկսպիրի ժամանակ Անգլիակամ էլ սովորական է եղել: Մի կտ-
առակերգութեան մէջ, սր դրուած է 1608-ին, չեղնակը, Դէկքէր
բանաստեղծը, խօսում է խառնակիչ մարդկանց խմբերի մասին, ո-
րոնք ման էին գալիս Սէնտ-Պոլի դրօսավարում. և աղ ձեռք մի-
մեանց անարդանք էին անում:

ՍԱՄՍՈՂՆ

Եթէ կոթւ էք փնտռում՝ պարոն, ես պատրաստ եմ
ձեր գէմ. իմ տէրս հօ ձեր տիրոջից պակաս մարդ չէ:

ԱԲՐԱՄ

Աւելի մարդ էլ չէ:

ՍԱՄՍՈՂՆ

Լաւ, պարոն:

(Մտնում է Բենվոլիօ, հեռուից):

ԴՐԵԳՈՐԻՕ (Սամսոնին)

Ասա՞ աւելի լաւ մարդ է. ահա մեր տիրոջ ազգական-
ներից մէկը գալիս է:

ՍԱՄՍՈՂՆ

Այն, աւելի լաւ մարդ է, պարոն:

ԱԲՐԱՄ

Դու սուտ ես ասում:

ՍԱՄՍՈՂՆ

Քաշեցէք ձեր սուրը, եթէ մարդ էք:—Գրեգորիօ, Հի-
մար տեղն է քո այն մեծապանծ հարուածիդ: (Մարտնչում են):

ԲԵՆՎՈԼԻՈ (առաջ գալով)

Բաժանուեցէք, լիմարներ. տեղը գրեցէք ձեր սրերը.
դուք չէք իմանում ինչ էք անում:

(Զարկելով գետին է ձգում ծառաների սրերը:
Մտնում է Տիբալտ):

ՏԻԲԱԼՏ

Ի՞նչ է. այս վախկոտ ո ամիկների մէջ

Դու սուր ես քաշել:—Յետ դարձիր, Բենվոլիօ,
Եւ տես քո մահըդ:

ԲԵՆՎՈԼԻՈ (Տիբալտին)

Ես խաղաղութիւն

Ուզում եմ միայն պահել սորանց մէջ:

Պատեան գիր սուրբդ. կամ թէ ինձ նըման
Դու էլ գործ գիր այն՝ սորանց բաժնելու:

Տիբէլչ

Ի՞նչ, սուրբ ձեռքին խաղաղութեան խօսք!
Օ՛չ, ես այդ բառը այնպէս ատում եմ
Ինչպէս ատում եմ Մոնտեկիւներին,
Քեզ և գժոխքը: Ա՛ռ քեզ, վատասիքտ:

(Մենամարտում են):

(Մտնում են ուրիշ կուսակիցներ երկու զերպաստանների, որոնք նմտնապէս խառնում են կոռուի մէջ. յետոյ գալիս են մի քանի քաղաքացիներ, գաւազաններով):

Ա. ԹԱՂԱՔԱՅԻ

Փալտեր, նիզակներ, զարկեցէք դորանց!
Զարդեցէք բոլոր Կապիւլետներին!
Զարդեցէք բոլոր Մոնտէգիւներին!

(Մտնում են Կապիւլէտ, գիշերազգեստով
և Լէղի Կապիւլէտ):

ԿԱՊԻՒԼԷՏ

Այս ի՞նչ աղմուկ է. — Օհ, տըւէք ինձ
Իմ երկար սուրբ:

Լէղի ԿԱՊԻՒԼԷՏ

Ո՛չ, մի յենացուակ.

— Ինչու ես սուր ուզում:

ԿԱՊԻՒԼԷՏ

Սմբառս, ասում եմ:

— Ահա գալիս է ծերուկ Մոնտէգիւն
Եւ իմ հակառակ սուր է խաղացուա:

(Մտնում են Մոնտէգիւն և Լէղի Մոնտէգիւն):

ՄՈՆՏԷԳԻՒՆ

Դու, որիկայ Կապիւլէտ! — Մի բըոնէք, թողէք ինձ:

Լէղի ՄՈՆՏԷԳԻՒՆ (նրան բռնելով)

Մի քալլ չես գընալ դէպի թըշնամիդ:

(Մտնում է իշխանը հետեւորդներով):

ԻՇԽԱՆ

Ըմբոստ հպատակներ, խաղաղատեացներ,
Դոնչք որ պըղծում էք այս պողովատը
Եղբօր արիւնով. — ԶԵՆ լըսում սոքա:
Ի՞նչ է, հօ, մարդիկ. ի՞նչ է, գտգաններ,
Որ ձեր չար բարկութեան տապն էք զովացնում
Բոսոր աղբիւրներով, որոնք ցալտում են
Ձեր երակներից. Հնազանդեցէք ինձ,
Թէ չէք կամենում, որ ձեզ տանջել տամ:
Զգեցէք արիւնոտ ձեր այդ ձեռքերից
Ոճրամուխ զէնքերդ և ականջ դըրէք
Ձեր՝ զալորչով լի իշխանի վըճոին:
Յարդ, քաղաքական երեք սլատերազմ,
Օդային մի խօսքից միայն ծնունդ առած՝
Քո ձեռքով, Մոնտէգիւն, և քո, ձեր Կապիւլէտ,
Երեք անգամ է որ վըրդովել են
Մեր փողոցների խաղաղութիւնը,
Եւ Վերոնակի ծերունիները
Երրորդ անգամն է որ ցած են դըրել
Իրանց վեհաշուք ծանը հագուստները
Եւ վեր են առել հին-հին նիզակներ
(Որ ժանգոտուել են խաղաղութիւնից)
Նոյնչափ հին ձեռքերով, վերջ տալու համար
Ձեր հին ժանգոտուած տաելութեանը:
Թէ մէկ էլ վըրդովէք մեր փողոցները՝
Ձեր կեանքը տուգանք պէտք է վըճարուի
Մեր խաղաղութեան: Արդ, գնան միւսները.
Իսկ դու, Կապիւլէտ, դու ինձ հետ արի,
Եւ դու, Մոնտէգիւն, կէսօլից յետոյ
Դու էլ եկ լըսել այս գործի մասին

Տալիք վճիռըս Վիլլաֆրանկայում,
Որ սովորական մեր դատավայրն է:
Կըրկնում եմ նորից, մահուան պատուհասով,
Քաշուեցէք բոլորդ:

(Ամենը դուրս են գնում, բացի Մոնտեղիւ
ից, Լէզի Մոնտէզիւից եւ Բենվոլիոյից):

ՄՈՒՏԷԳԻՀԻՒ

Ո՞վ այս հին կոիւը զարթեցրեց կրկին.
Խօսիր, Բենվոլիօ, այստեղ էիր դու
Երբ որ ըսկըսաւ:

ԲԵՆՎՈԼԻՈ

Երբ որ ես եկայ՝
Մոնտեզիւների տան ծառաները
Չերինների հետ կըուուի մէջ էին:
Ես սուր քաշեցի որ նըրանց բաժնեմ.
Հէնց այդ բոսէին կրակոտ Տիբալտը
Սուրը ձեռք տոած մըտաւ կըուուի մէջ,
Եւ պըտոյտ տալով իր գըլխի շուրջը՝
Լուտանք էր թափում իմ ականջներիս
Եւ օդը ճեղքում, որ, անխոցելի՝
Արհամարհանքով սուլում էր նորան:
Այնինչ հարուածներ փոխանակելով
Հզբաղուած էինք՝ նոր մարդիկ եկան
Եւ երկու կողմից կըուուել ըսկըսան,
Մինչեւ որ ինքը իշխանն էլ եկաւ
Եւ նըրանց գատեց:

ԼՇԴԻ ՄՈՒՏԷԳԻՀԻՒ

Օ, ուր է բոմէօն.

— Այսօր դուք նըրան տեսել էք արդեօք.
Ես շատ ուրախ եմ որ չէր կըուուի մէջ:


ԲԵՆՎՈԼԻՈ

Տիկին, մի ժամ տուաջ քան սուրբ արեգը.
Դուրս գար ոսկեցող պատուհաններից

Աերճ Արեւելքի՝ վըրդովուած միտքըս
Ինձ դըրդեց դուրս գնալ և շըրջագայել:
Ժանտաթըզենու մի պուրակի մէջ,
Որ կայ քաղաքից դէպի արեմուտք՝
Տեսայ ձեր որդուն, որ այնքան կանուխ
Արդէն շըրջում էր. նորա կողմ գնացի.
Բայց ինձ տեսնելով՝ նա անյալտացաւ
Անտառի խորքը. իսկ ես դատելով
Նորա յուզերը իմինիս չափով,
Որոնք չեն երբէք այնքան խորասոյզ
Որչափ երբ մենակ են՝ հետապընդեցի
Ոչ նորա խոհերին, այլ իմիններիս,
Եւ ուրախութեամբ փախայ նորանից՝
Որ ուրախութեամբ փախչում էր ինձնից:

ՄՈՒՏԷԳԻՀԻՒ

Շատ առաւօտներ տեսել են նրան այնտեղ,
Որ արտասուքով տւելացնում է
Վաղորդեան զով ցօղը. ամպերի վերայ
Խոր հառաչների նոր ամպ է բարդում.
Բայց անմիջապէս որ ըսկըսում է
Կենսատու արել հեռու արեւելքում
Քարշել ըստուերուտ վարագոյնները
Վարդ Արշալուսի մահճի վերայից՝
Լոյսից փախչում է թըրխպամած որդիս.
Փակում է մենակ իր սենեակի մէջ,
Փակում է նորա լուսամուտները,
Եւ գուրս հանելով գեղեցիկ լուսը՝
Նիգով գոցում է դուռը նորա գէմ,
Այսպէս իր համար մի տրուեստական
Գիշեր շինելով: Աև և չարագոյժ
Կարող է լինել իր այս միտումը,
Թէ չըփարատեն բարի խորհուրդներ
Դորա պատճառը:



ԲԵՆՎՈԼԻՈ
Աղնիւ հօրեղբայր,
Գիտէք պատճառը:
ՄՈՒՏՔԴԻՀԻ
Ոչ ես գիտեմ ալդ,
Ոչ էլ նա կասէ:
ԲԵՆՎՈԼԻՈ
Արդեօք երը և է
Ալդ մասին նըրան ըստիպէլ էք դուք:
ՄՈՒՏՔԴԻՀԻ
Թէ ես, թէ ուրիշ շատ բարեկամներ.
Բայց ինքն է միայն իր տանջանքների
Խորհըրդակիցը:—Որչափ լաւ՝ չըգիտեմ,—
Բայց այնքան գաղտնապահ, անթափանց է նա,
Այնչափ փակ՝ քննութեան, հետախուզանքի՝
Որչափ կոկոնը, որին կըրծում է
Նախանձոտ որդը, նախ քան նա բանայ
Իր անոլշաբուր թերթերը՝ օդին,
Կամ գեղեցկութիւնը ձօնէ արևին:
Թէ իմանալիք ուսկից են գալիս
Նոցա ցաւերը՝ ամենալն փութով
Կաճապարէինք բըժըշկել նորանց:
(Բոմէօն երեւում է հեռուից)

ԲԵՆՎՈԼԻՈ

Ահա գալիս է. հեռացէք խընդրեմ.
Կամ ես կիմանամ նորա ցաւերը,
Կամ շատ խիստ կերպով պէտք է մերժէ ինձ:

ՄՈՒՏՔԴԻՀԻ

Երնէկ, մընալով, բախտ ունենալիք
Լըսել մի անկեղծ խօստովանութիւն:—
Եկ, տիկին, գընանք:
(Մոնտէգիւ եւ տիկին Մոնտէգիւ գնում են)

ԲԵՆՎՈԼԻՈ
Բարի լոյս, Բոմէօ:
ՌՈՄԷՈ
Միթէ գեռ օրը ալսքան կանուխ է:
ԲԵՆՎՈԼԻՈ
Հենց հիմա զարկեց իններորդ ժամը:
ՌՈՄԷՈ
Օչ, տըխուր ժամերն երկար են թըւում:
Միթէ հալլոս էր ալն, որ այնպէս արագ
Հեռացաւ ալստեղից:
ԲԵՆՎՈԼԻՈ
Նա էր:— Բոմէօ,
Ի՞նչ վեշտ է ժամերդ այդպէս երկարում:
ՌՈՄԷՈ
Ալն է որ չունիմ ալն՝ որ թէ ունենալի՝
Ժամերս կըկարճէր:
ԲԵՆՎՈԼԻՈ
Միթէ սիրուց է:
ՌՈՄԷՈ
Ես զուրկ եմ...
ԲԵՆՎՈԼԻՈ
Սիրուց:
ՌՈՄԷՈ
Զուրկ նորա շնորհից՝
Որին սիրում եմ:
ԲԵՆՎՈԼԻՈ
Վայ, Բնչապէս սէրը,
Այնչափ քընքուշիկ ըստ երեսլիթին՝
Կարող է լինել այնչափ բռնաւոր
Եւ այնչափ դաժան՝ իրողութեան մէջ:

ՐՈՒՄԷԾՈ

Վահակ, քնչալէս սէրը, տչքելին մի կապ,
Կարող է, անաչք, տեսնել շաւիղներ
Դէսլ իր փափաքը: Ուր պէտք է ընթրենք:—
Վահակ, միջնէ այստեղ ինչ խռովութիւն կար:
Բայց ոչ. մի ասեր. գիտեմ բոլորը.
Մենք շատ գործ ունինք ատելութեան հետ,
Բայց էլ աւելի ունինք սիրոյ հետ:—
Օհ, կոռւարար սէր, օհ, սիրալից քէն,
Օհ ամենայն բան, չըքից ըստեղծուած,
Ծանր թեթևութիւն, լուրջ ունայնութիւն.
Օհ, անձեւ քառս սիրուն ձևերի,
Կապարեալ փետուր, պայծառ ծուխ, սառն հուր,
Հիւանդ առողջութիւն և քուն միշտ արթուն,
Որ չէ ինչ որ է:—Սյո է այն սէրը,
Որ ես ըզգում եմ. մի սէր, որի մէջ
Ես սէր չեմ ըզգում: Ծիծաղում ես, չէ:

ԲԵՆՎՈԼԻՈ

Ոչ, ի՞մ սիրելի. աւելի միտուած եմ
Ես լաց լինելու:

ՐՈՒՄԷԾՈ

Բարեսիրտ, ինչու:

ԲԵՆՎՈԼԻՈ

Քանզի տեսնում եմ քո բարի սիրտը
Ալդակ ճընշըւած:

ՐՈՒՄԷԾՈ

Աւաղ, ալդակ է սիրոյ լանցանքը:
Իմ իսկ ցաւերըս կուրծքըս ճընշում են,
Եւ գու ուզում ես ծաւալել նըրանց,
Ճընշելով նաև քս սըրտիդ ցաւով:
Նորն իսկ ալդ սէրը, որ ցոյց են տալիս,
Աւելացնում է մի նոր տըրտմութիւն

Արդէն խիստ տրտում իմ սըրտիս վերայ:
Սէրը մի ծուխ է, որ բարձրանում է
Հառաչանքների գոլորշիներից.
Երբ նա արձակ է մի հուր է շողուն
Սիրահարների տչքերի միջին:
Ուրիշ ինչ բան է.— մի խենթութիւն է
Ամենից խելօք. մի խեղդող լեղի
Եւ կենդանարար մի անուշութիւն:—
Մնաս բարով, բենվոլիօ:

ԲԵՆՎՈԼԻՈ

Լսպասիր, ես էլ գալիս եմ քո հետ.
Եթէ ինձ ալսպէս գու թողնես գընաս՝
Դու ինձ կանարգես:

ՐՈՒՄԷԾՈ

Բահ, ես ինձ կորցրել եմ.
Ես այստեղ չեմ հօ, այս Բոմէօն չէ:—
Նա մի այլ տեղ է:

ԲԵՆՎՈԼԻՈ

Ասա ինձ լուրջ կերպով.
Ովկ է սիրածըդ:

ՐՈՒՄԷԾՈ

Ուզում ես ուրեմն,
Որ հեծեծանքով ես ասեմ քեզ այդ:

ԲԵՆՎՈԼԻՈ

Հեծեծանքով. ոչ. բայց ասա լուրջ կերպով:

ՐՈՒՄԷԾՈ

Հըրամալիր հիւանդին, որ նա լուրջ կերպով
իր կըտակն անէ: Ոհ, դա մի բառ է
Որ գուր ես խընդըում ալնալիս մէկից,
Որ այսչափ հիւանդ է: Լուրջ կերպով, բարեկամ,
Սիրում եմ մի կնոշ:

ԲԵՆՎԱՂՈՂԻՕ
Ճիշդ կէտին զարկեցի,
Երբ ենթադրեցի որ դու սիրում ես:

ՐՈՄԷՒ

Լաւ նըշան առնող! Եւ գեղեցիկ է
նա, որին սիրում եմ, և շըլացուցիչ:

ԲԵՆՎԱՂՈՂԻՕ

Որչափ նըշանը շըլացուցիչ է
Ալնչափ գիւրին է, սիրուն Ռոմէօ,
Ճիշդ կէտին զարկել:

ՐՈՄԷՒ

Ոչ. այս նըշանը
Զարկելի բան չէ. Կուսիդի նետերին
Սնմատչելի է: Դիանայի նման է.
Եւ զգաստութեան ամուռ վահանով
Հսպառազինուած՝ նա գերծ է մընում
Սիրոյ մանկական տըկար աղեղից:
Նա չէ թոյլ տալիս սիրային բառերին
Պաշտրել նըրան, ոչ էլ ենթարկւում
Յարձակուող աչքերի ընդհարումներին,
Ոչ էլ յօժարւում բանալ իր գոգը
Այն սըրբակաշտու մամոնի առաջ:
Օ՛, նա հարուստ է գեղեցկութեան մէջ.
Աղքատ է միայն, քանզի երբ մեռնի
Կըմեռնի գանձը իր գեղեցկութեան:

ԲԵՆՎԱՂՈՂԻՕ

Միթէ ուխտած է յաւիտեան կոյս ապրել:

ՐՈՄԷՒ

Այս, ուխտած է. և այդ խնայումը
Առաջացնում է մի շատ մեծ կօրուստ,
Գեղեցկութիւնը իր խըստութիւնից

Այսպէս սովատանջ՝ զըրկում է իսպառ
Ապագայ սերունդը գեղեցկութիւնից:
Խիստ սիրուն է նա, խիստ ըզգաստ է նա,
Խիստ ըզգաստ սիրուն. և նա, եղուկ ինձ,
Արժան է երկնային բախտաւորութեան՝
Պատճառելով ինձ յուսահատութիւն:
Նա ուխտ է արել չըսիրել երբէք.
Եւ իր այդ ուխտով ես մեռած ողջ եմ,
Քանզի գեռ ողջ եմ որ յայտնում եմ այդ:

ԲԵՆՎԱՂՈՂԻՕ

Լըսիր խորհըրդիս. մոռացիր խորհել
Այդ սիրոյ վերայ:

ՐՈՄԷՒ

Մի ձև ցոյց տուր ինձ,
Որով կարենամ խորհելլ մոռնալ:

ԲԵՆՎԱՂՈՂԻՕ

Դու քո աչքերիդ աղատութիւն տուր.
Նըկատիր ուրիշ գեղեցկութիւններ:

ՐՈՄԷՒ

Այդ մի միջոց է՝ որ ընաշխարհիկ
Սնուանուի նորա գեղեցկութիւնը:
Այս դիմակները, որոնք բախտ ունին
Գեղեցիկ կանանց դէմքը պագնելու՝
Իրանց սկութեամբ մեզ լիշեցնում են
Պալծառ դէմքերը, որոնց ծածկում են:
Կուրացած մարդը ինչպէս մուանայ

Իր տչքի լոյսի այն անգին գանձը
Որ կորցըրել է: Ցոյց տուր ինձ մի կին,
Որ անզոյդ լինի գեղեցկութեան մէջ:
Ի՞նչ բանի է պէտք նորա այդ գեղը՝
Թէ ոչ մի էջ է, ուր կարդալ կարող եմ

Թէ ով է նա որ գերազանցում է
Գերազանց գեղուհուն: Մնաս բարով, ինչպոլիս,
Չեսկարող մոռացում սովորացնել ինձ:

ԱԾՆՎՈՂԻՕ

Կամ այդ գաղտնիքը պէտք է ես գընեմ
Կամ պարտքով մեռնեմ:

(Դուրս են գնում),

ՏԵՍԱՐԱՆ

Փողոց.

Մտնում են Կ.Պ.Ի.Լ.Տ., ՊԱՐԻՍ և ՇԱՌԱՆ.

ԿԱՊԻԻԼԵՑ

Մոնտեգիւն կապուած է նոյնակէս տուգանքով
Որպէս ես ինքըս. և, մտածում եմ,
Դրժուար չէ մեզ պէս ծեր մարդկանց համար
Խաղաղ ապրելու:

ՊԱՐԻՍ

Պուգ երկուսըդ էլ
Պատուաւոր մարդու համարում ունիք.
Եւ ցաւալի է, որ այսքան երկար
Դրժութեան մէջ էք միմեանց հետ ապրել:
Բայց այժըմ, տէր իմ, ինչ է ձեր խօսքը
Իմ առաջարկիս:

ԿԱՊԻԻԼԵՑ

Ես պէտք է կըրկնեմ ինչ որ ասացի.—
Զաւակս աշխարհին դեռ անծանօթ է.

Հազիւ է տեսել տասնուշորս տարի: Երկու
Երկու ամառ էլ թող թառամին դեռ
Իրանց սիգանքով՝ նախ քան թէ նըրան
Հասուն համարենք մի հարս դառնարու:

ՊԱՐԻՍ

Նատ կան նորանից մանկահասակներ,
Որոնք բախտաւոր մարեր են արդէն:

ԿԱՊԻԻԼԵՑ

Եւ շուտ են թօշնում այդքան վաղահաս
Ամուսնացածներ: Երկիրը կլանել է
Բոլոր լոյսերըս բացի Զիւլիէտից:

Նա է կալուածիս յուսալից ժառանգն:

Սէր յալտնիր նորան, սիրելի Պարիս,

Զեռք բեր իր սիրտը. իմ հաճութիւնը

Մի մասն է միայն իր յօժարութեան:

Թէ նա ընդունի՝ իր ընտրութիւնից

Կախուած է նաև իմ հաճութիւնը

Եւ իմ ի սըրտէ համաձայնումը:

Եօ մի խընջուք եմ տալիս այս գիշեր,

Որ վազուց ի վեր սովորութիւն է,

Որին շատ հիւրեր հրաւիրած եմ եօ:

Թէ գու էլ ուզես նորանց հետ լինելու աշխեն ու

Մեծ ուրախութիւն կըպատճառես ինձ:

Իմ խեղճիկ տան մէջ յուսա այս գիշեր

Դիտել բազմաթիւ երկրածեմ աստղեր:

Որոնք լոյս կըտան մըթին երկընքին:

Ալնպիսի հեշտանք, որպէս ըզգում են

Կայտառ ջահիլներ, երբ որ Ապրիլը

Գեղեցիկ զուգուած ձեմում է գալիս

Կազ ու կոր ձմեռի կըրունկի ետե՝

Ալնպիսի հեշտանք կըզգաս այս գիշեր

Ալն թարմ կանացի կոկոնների մէջ,

Որոնց մեր տանը դու կարժանանաս:
 Լըսիր բոլորին, նայիր բոլորին.
 Հաւանիր նորան՝ ով որ ամենից
 Աւելի արժան է. և իմ աղջիկս է,
 Կըլինի մէկը այդ շատերի մէջ,
 Մէկը լոկ թըլով, այլ հաշուով ոչինչ:—
 Գընանք, եկ ինձ հետ:
 (Ծառային)

— Գընա, այ տըղայ,
 Ոտքի տակ արա սիրուն Վերօնան.
 Գըտիր այն մարդկանց, որոնց անուններն
 Գըրուած են այստեղ, և ասա նորանց,
 (Տալով մի Թուղթ)

Որ տունըս և ջերմ հիւրընկալութիւն
 Կան նորանց համար:
 (Կապիւլէտ եւ Պարիս դուրս են գնում):

ԺԱՌԱՅ

Գտնել այն մարդկանց, որոնց անունները գրուած են
 այստեղ: Գրուած է, որ կօշկակարը պէտք է գործ ածէ իր
 կէս-գաղը, և դերձակն՝ իր կաղապարը. ձկնորսն՝ իր վրձինը
 և նկարիչն՝ իր ցանցը: Իսկ ինձ ուղարկում են գտնել այն
 մարդկանց, որոնց անունները գրուած են այստեղ. այն ինչ
 ես մինչև անդամ չեմ կարողանում գտնել, թէ գրողը ինչ
 անուններ է գրել այստեղ: Ես պէտք է գիմեմ գիտուննե-
 րին:— Լաւ հանդիպեցինք:

(Վանում են Բննվոյի եւ Թոմէօ):

ԲԵՆՎՈՂԻՕ

Բահ, մարդ. մէկ բոցը մարում է միւսը,
 Մի ցաւ ամոքւում միւսի խայթիչով:
 Թէ գլուխըդ դառնում է՝ միւս կողմ պըտոյտ եկ.
 Մէկ բուռն վիշտը բուժւում է միւսով.
 Առ քո աչքիդ մէջ մի նոր վարակում.—
 Հընի ժանտ թոյնը կըջընջուի իսկոյն:

ՐՈՄԷՅ

Պլանտանի *) տերևն այդ բանի համար
 Շատ օգտակար է:

ԲԵՆՎՈՂԻՕ

Ի՞նչ բանի, խընդրեմ:

ՐՈՄԷՅ

Կոտրած ոլոքի:

ԲԵՆՎՈՂԻՕ

Ի՞նչ է, Թոմէօ,

Խելագարուել ես:

ՐՈՄԷՅ

Խելագար, ոչ. բայց աւելի կապուած
 Քան մի խելագար. բանտի մէջ կախուած,
 Կերակրից զըրկուած, ձաղկուած, տանջըւած,
 Եւ...

(Ծառային)

Բարե քեզ, բարեկամ:

ԺԱՌԱՅ

Աստծու բարին:—

Խընդրում եմ, պարոն, գուք կարդալ գիտէք:

ՐՈՄԷՅ

Այո, իմ բախտըս թըլշուառութեան մէջ:

ԺԱՌԱՅ

Գուցէ այդ բանը գուք սովորել էք

Առանց գըրքերի. բայց ասէք, խընդրեմ,

Կարող էք կարդալ ինչ բան որ տեսնէք:

ՐՈՄԷՅ

Եթէ ճանաչեմ տառերն ու լեզուն:

*) Մի բուս, որ ինչպէս ենթադրում էին մեծ զօրութիւն ու-
 նէր վէրքեր բժշկութ:

Ծ. թ.

— 28 —

ԾԱՌԱՅ

Թու ճիշդ ես խօսում: Մնաս բարով: Տէր ընդ քեզ:

ՐՈՒՄԷՕ

Կաց, այ մարդ. մի գնար. կարող եմ կարդալ:
(Կարդում է):

«Սինիօր Մարտինօ, իր կինը եւ աղջիկները. կոմն
Անսելմ՝ եւ իր գեղանի քոյրերը. որքեարի տիկին Վիտ-
քովիօ. սինիօր Պլաչենտիօ եւ իր սիրատոն եղար աղ-
ջիկները. Մերկուտիօ եւ իր եղայրը Վալենտին. իմ հօր-
եղայր Կապիւլէտ, իր կինը եւ աղջիկները. իմ սիրուն
Եղաօր դուտոր Ռոզալին, Լիվիա. սինիօր Վալենտին եւ
իր հօրեղաօր որդի Տիրալու. Լուչիօ եւ գուարթ Հէլէնան»:

Գեղեցիկ ժողով: (Թուղթը յև տալով) Ո՞րտեղ պէտք է գան:
ԾԱՌԱՅ

Վերել:

ՐՈՒՄԷՕ

Որտեղ:

ԾԱՌԱՅ

Մեր տանը, ընթրելու:

ՐՈՒՄԷՕ

Ում տանը:

ԾԱՌԱՅ

Տիրոջս:

ՐՈՒՄԷՕ

Իրմւ, պէտք է ամենից առաջ այդ հարցնէի:

ԾԱՌԱՅ

Հիմայ դու չհարցրած, ես քեզ կասեմ: Իմ տէրս նշա-
նաւոր հարուստ Կապիւլէտն է. և եթէ դու Մոնտէգիւների
տնից չես՝ դու էլ եկ մի բաժակ գինի քամիր: Տէր ընդ քեզ:
(Դուրս է զնում):

ԲԵՆՎՈԼԻՕ

Սա Կապիւլէտի այն հին խընջուքն է,

Ուր և ընթրում է քո այնքան սիրած
Զըքնաղ Ուզալինը, բոլոր Վերոնի
Այն հիանալի սիրունների հետ:
Գնա այնտեղ. յետոյ, անաշառ աչքով
Բաղդատիր իր գէմքը մի ալ գէմքի հետ,
Որ քեզ ցոյց կըտած. և դու կըտեսնես,
Որ քո կարապը ագռաւ է եղել:

ՐՈՒՄԷՕ

Եթէ իմ աչքը, հակառակ ջերմեռանդ
իր պաշտողութեան, այդպիսի սուտ խօսի՝
Թող ապա փոխուին իր տրցունքները
եւ բոցեր գառնան. և այս աչքերը—
Յաճախ ջըրահեղձ, բայց դարձեալ անմահ—
Որպէս թափանցիկ հերետիկոսներ
Թող հըրկէզ լինին իբրև խաբեբալ:
Ասաւել գեղեցիկ քտն իմ սիրածը:
Ոչ, ամենատես արեգակն անգամ
Զէ երբէք տեսել նորա նըմանը
Ոլի օրից ինչ որ աշխարհն ըսկըսեց:
ԲԵՆՎՈԼԻՕ

Բահ, դու տեսել ես նըրան գեղեցիկ՝
Քանզի չես տեսել ոչ ոք նորա մօտ.
Նա ինքըն իր հետ կըշռուել է միան,
Երկու աչքումդ էլ նա ինքն է եղել:
Բայց այն բիւրեղեալ նըժարների մէջ
Դիր սիրուհուդ մօտ մի ալ մանկամարդ,
Որ քեզ ցոյց կըտամ, որ կըշողշողայ
Այս խնջուքի մէջ. և դու կըտեսնես,
Որ հազիւ ապա սիրուն կըթըւալ
Նա որ թըւում է ամենից սիրուն:

ՐՈՒՄԷՕ

Լաւ, կըդամ, ոչ թէ մի այդպիսի բան

Տեսնելու համար, այլ իմ սիրածիս
Չքնաղութեան վրայ ըսքանչանալու: (Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱԿ Պ.

Մի սենեակ կապիլէտի տան մէջ:

Մտնում են լեդի ԿԱՊԻԼԻԼ և ԴԱՅԵԱԿԸ

ՀԷԴԻ ԿԱՊԻԼԻԼ
Դայեակ, ուր է գուստը. գնա կանչիր նըրան:
ԴԱՅԵԱԿ

Վ. ՀԿԱՅ կուսութիւնս—երբ որ տասներկու
Տարեկան էի. — ասել եմ որ գալ: (Կանչելով)

— Ուր ես, գառնուկը, ուր ես թրաչնուհիս,
Ուր մնաց աղջիկը. Տէր Աստուած... Զուլիէտ:

(Մտնում է Ջուլիէտ)

ԶՈՒԼԻՀԻԼ

Ինչ է, ով է կանչում:

ԴԱՅԵԱԿ

ԶԵՐ մայրն է կանչում:

ԶՈՒԼԻՀԻԼ

Տիկին, աշա ես. ինչ է ձեր կամքը:

ՀԷԴԻ ԿԱՊԻԼԻԼ

Աշա գործն ինչ է: — Դայեակ, Հեռացիր,
Ծածուկ խօսք ունինք: Ո՛չ, դայեակ, յետ եկ.
Միտքը փոխեցի. դու մեր ժողովին
Պէտք է գըտընուիս: Գիտես, իմ գուստըը
Սիրուն տարիք ունի:

ԴԱՅԵԱԿ
Այս, ես իմ հոգիս,
Նորա տարիքի մինչև իսկ ժամը
Կարո՞ղ եմ ասել:

ՀԷԴԻ ԿԱՊԻԼԻԼ

Տասնուչորս չըկալ:

ԴԱՅԵԱԿ

Ես գրաւ կըդալի տասնուչորս ատամ,—
Բալց ափսոս, միայն ես չորս հատ ունիմ,—
Որ ալդքան էլ չէ: Ո՞րչափ է մնացել
Լամմասի^{*)} տօնին:

ՀԷԴԻ ԿԱՊԻԼԻԼ

Մի տասնուհինդ օր.

Քիչ աւել կամ պակաս:

ԴԱՅԵԱԿ

Աւել կամ պակաս,

Տարուալ օրերից Լամմասի գիշեր
Նա կըլըրացնէ տասնուչորս տարին.
Նա և Շուշանը (Հոգին լոյս դառնայ
Ամեն քրիստոնէի) տարեկից էին:
Շուշանը հիմա Աստուծոյ մօտ է.
Նա շատ էր ինձ համար. բայց ինչպէս ասացի
Լամմասի գիշեր նա կըլըրացնէ
Տասնուչորս տարին. իրաւ, կըլըրացնէ,
Ես լաւ լիշում եմ. այն երկրաշարժից
Տասնումէկ տարի անցել է արդէն.

Մենք կաթից կտրեցինք - բնաւ չեմ մոռանալ,—
Տարուալ օրերից հենց ճիշտ ալդ օրը:
Ես ծըծիս վրայ օշինդը էի քսել

^{*)} «Լամմաս» անգլօ-սակածն լեզուով նշանակում է հացի տօն,
որ օգոստոսի 1-ին էր լինում: Ծ. Թ.

Եւ նըստել էի արեգակի տակ
Աղաւնանոցի պարըսպի ներքեւ.
Իմ տէրըս և դուք Մանտուա էիք—
Լաւ ուղեղ ունիմ:—Բայց ինչպէս ասացի,
Երբ որ նա առաւ օշինդրի համը
Եւ տեսաւ դառն է՝ վահ, այնպէս դըժուեց.
Տեսնելու բան էր, ինչպէս բարկացած
Զարացաւ ծծիս վրայ: Աղաւնանոցը
Տակն ու վեր արաւ: Ճրշմարիտ, հարկ չըկար
Ինձ ասել՝ փախիր:
Եւ այն օրուանից տասնումէկ տարի է.
Նա այն ժամանակ ինքը կանգնում էր.
Բահ, խաչը վրկալ, նա մինչեւ անդամ
Կարող էր վազել, ամեն կողմ գընալ:
Հենց նախորդ օրը ճակատը կոտրեց.
Յետոյ ամուսինս, (հոգին լուս դառնայ,
Շատ ուրախ մարդ էր), նըրան վեր տուաւ
Եւ ասաց. «Ի՞նչ է, երեսի վըրայ
Ընկել ես գետին. երբ խելքը կըտրէ՝
Մէջքիդ վրայ կընկնես. այնպէս չէ Զուլի»:
Եւ սիրուն չարը իր լացը կըտրեց
Եւ ասաց «Այս»: Հիմա նայեցէք,
Ինչպէս կատակը ճիշդ տեղին եկաւ:
Հաւատացնում եմ, հազար տարի ապրեմ՝
Զեմ մոռանայ այդ: «Այնպէս չէ, Զուլի»,
Ասաց իմ մարդը, և պլզտիկ խենթը
Իր լացը կըտրեց և ասաց «Այս»:
ՀԵԴԻ ԿԱՊԻՀԻՀԵՑ

Բաւ է. սուս կացիր:

ԴԱՅԵԱԿ

Լաւ, տիկին, բայց ինչպէս
Չըծիծաղեմ ես՝ երբ միտ եմ բերում
Որ լացը կտրեց, և ասաց «Այս»:

Եւ սակալն հաւատա, ճակատի վերայ
Նա մի գունս ունէր փոքրիկ ձուի չտփ.
Ի՞նչ սաստիկ հարուած, և խիստ էր լալիս:
Ամուսինս ասաց. «Ի՞նչ, երեսի վրայ
Ընկել ես գետին. լաւ, երբ մեծանաս՝
Մէջքիդ վրայ կընկնես: Զես ընկնիլ, Զուլի»:
Նա լացը կըտրեց, և ասաց «Այս»:

ԶՈՒԼԻՀԵՑ

Դու էլ ձայնդ կըտրիր, խնդըռում եմ, դալեակ:
ԴԱՅԵԱԿ

Լաւ է, վերջացրի: Աստուած օրհնէ քեզ.
Դու ես ամենից սիրուն լամուկը՝
Որին ծիծ եմ տուել. թէ այնքան ապրեմ
Որ քեզ հարս տեսնեմ՝ սըրտիս փափաքը
Առած կըլինիմ:

ՀԵԴԻ ԿԱՊԻՀԻՀԵՑ

ՀԵնց այդ է նիւթը
Որի վրայ ուզում եմ խօսել նրա հետ:—
Ասա ինձ, աղջիկս. Ի՞նչ է քո կամքը
Ամուսնութեան մասին:

ԶՈՒԼԻՀԵՑ

Դա մի պատիւ է, որ չեմ երազում:

ԴԱՅԵԱԿ

Ի՞նչ է, պատիւ է. եթէ ես չէի
Միակ դալեակը՝ ապա կասէի,
Որ իմաստութիւն ծըծել ես պլտկից:

ՀԵԴԻ ԿԱՊԻՀԻՀԵՑ

Լաւ. խորհիր այսուհետ ամուսնութեան վրայ.
Քեզնից ջահիլներ այստեղ Վերոնում՝
Յարգելի տիկիններ, մայրեր են դարձել:

Թէ չեմ սըխալում՝ ես ինքս մալրէի
Նախ քան այդ տարիքը՝ երբ գու աղջիկ ես:
Կարճ ուրեմն. լըսիր. ազնիւ Պարիսը
Քո ձեռքդ է խընդրում իր սիրոյ համար:

ԴԱՅԵԱԿ

Խնչ մարդ է, օրինրդ. օրինրդ, մի մարդ
Աշխարհի նըման. վահ, մոմի՛ մարդ է *):

ԼԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Վերոնի ամառն ալդպիսի ծաղիկ
Է՛լ ուրիշ չունի:

ԴԱՅԵԱԿ

Իրաւ, ծաղիկ է,

Իսկական ծաղիկ:

ԼԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Լաւ, ինչ ես ասում.

Կարնղ ես սիրել այդ ջէնտելմէնին:
Սիս գիշեր նըրան մեր խընջուքի մէջ
Կրտեսնես անշուշտ. լախժամ գու կարդա
Զահել Պարիսի դէմքի հատորը
Եւ գրտիր այնտեղ այն հրապոյըները,
Որ գեղեցկութեան գրիչն է գըծագրել.
Քըննիր երեսի ամեն մէկ գիծը.

Տես ինչպէս մէկը միւսին տալիս է
Ներգաշնակութիւն. և եթէ մի բան
Սիդ պերճ հատորում քեզ անլայտ մընայ
Կըզըտնես գըրուշած նըրա աչքերի
Լուսանցքի միջին: Սիդ՝ սիրոյ թանկ գերքը,
Սիդ մինչև հիմա անկազմ սիրողը,
Կատարեալ գեղեցիկ լինելու համար՝

* Անպէս գեղեցիկ է, որ կարծես մոմից չինած արձան լինի:

Կազմի պէտք ունի. ծովի մէջ ձուկը
Շատ մեծ փայլ ունի. և շըքեղ բան է
Որ դըրսից սիրունը ներսից թագցընէ
Նոյնպէս մի սիրուն: Շատերի աչքին
Պերճ է այն գերքը, որ պարփակում է
Ոսկի հէքեաթը ոսկի կըզպանքով.
Նոյնպէս էլ և գու, առնելով նըրան՝
Առնում ես բաժին բոլոր բաներից
Ինչ որ նա ունի, առանց որ քեզնից
Մի բան պակասի:

ԴԱՅԵԱԿ

Մի բան պակասի:
Ոչ, կաւելանայ. կանաչք մարդկանցով
Հստուարանում են:

ԼԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Լաւ, ինձ կարճն ասա.

Ընդունելու ես Պարիսի սէրը:

ՃՈՒՂԻԼԵՑ

Տեսնեմ, ջանք կանեմ ես նըրան սիրել,
Եթէ տեսնելը սիրել է բերում:
Բայց ես իմ աչքը չըպէտք է մըխեմ
Առաւել խորունկ՝ քան որչափ նըրան
Գեր յօժարումը ոյժ տալ և թըռիչք:
(Մտնում է մի ծառայ):

ԺԱՌԱՅ

Տիկին, հիւրեն եկել են. ընթրիքը պատրաստ է. ձեզ
Կանչում են. օրիորդին ուզում են. դայեակին անիծում են
ամբարում, և ամեն բան տակն ու վրայ է: Պէտք է գնամ
գործիս. խնդրեմ, շուտ եկէք:

ԼԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Հետեւում ենք քեզ:—Եկ, Զուլիէտ. կոմսը
Մեզ ըսպասում է:

ԴԱՅԵԱԿ

Գընա, այ աղջիկ,
Երջանիկ օրերիդ գընա տւելցրու
Երջանիկ գիշերներ:
Գուրս են զնում:

ՏԵՍԱՐԱԿԻ

Մի փողոց:

Վանում է ԲՈՄԷՕ, ՄԵՐԿՈՒՏԻՕ, ԲԵՆՎՈԼԻՕ, ՀԻՆԳ-ՎԵց գիմակա-
ռոբներով, ջահակիրներով, ևն:

ԲՈՄԷՕ

Հարկ կալ ճառ խօսել ներում խընդքելու,
Թէ պէտք է մըտնել առանց խօսքերի:

ԲԵՆՎՈԼԻ

Այդ երկար ճառերի դարն անցել է այժմ.
Պէտք չունինք այլ ես մի կուպիդոնի,
Աչքերը կապած մի աչքակապով,
Ուսին կըրելով մի փալտեալ աղեղ
Թաթարի ներկած, որ տիկիններին
Սարսափեցնում է որպէս խըրտութլակ.
Ոչ էլ անգիր արած մի նախաբանի,
Թոյլ արտասանուած, մի յուշարարով,
Մեր մուտքի համար: Թող նոքա մեղ չափեն,
Ի՞նչ չափով կուզեն. իսկ մենք կըչափենք
Մի քանի ոտնաչափ, յետոյ կըմեկնենք:

ԲՈՄԷՕ

Տըւէք ինձ մի ջահ. — ես պարող մարդ չեմ.
Ես որ տըխուր եմ կըկըրեմ ջահը:

ՄԵՐԿՈՒՏԻ

Ոչ, պէտք է պարես, անուշիկ Ռոմէօ:

ԲՈՄԷՕ

Ոչ, հաւատացէք. ահա գուք ունիք
Պարի կօշիկներ և թեթև ներբան:
Ես ունիմ հօգի կապարի նըման,
Որ ինձ գետնի հետ գամում է, պլըկում,
Եւ չէ թոյլ տալիս իմ տեղից շարժուիլ:

ՄԵՐԿՈՒՏԻ

Գու սիրահար ես. ինչու փոխ չառնես
Կուպիդի թևեր, նորանցով սուրաս
Բարձըր քան թէ մեր հասարակ թոկչըր:

ԲՈՄԷՕ

Նա ինձ իր նետով այնպէս է խոցել,
Որ ես չեմ կարող այլերս սուրալ
Իր թեթև թևերով. և այսպէս կապուած,
Ես անկարող եմ կալթել բարձրանալ
Իմ անշարժ ցաւից. սիրոյ բեռան տակ
Ես ընկճըւում եմ:

ՄԵՐԿՈՒՏԻ

Եթէ զրան ընկճուես՝
Դու կընկճես նըրան. խիստ ծանըր բեռ է
Ալգչափ քնքակազմ մի բանի համար:

ԲՈՄԷՕ

Մէրը քընքոյչ է. օհ, նա շատ բիրտ է,
Շատ կոշտ, շատ բուռն, փլշի պէս խալթիչ:

ՄԵՐԿՈՒՏԻ

Թէ սէրը բիրտ է քեզի հետ՝ գու էլ
Բիրտ եղիր նըրա հետ. նա քեզ խալթում է.

Խալթիր դու նըրան. և դու այդ կերպով
Սէրին կըազթես:

(Սառաներին)

Տուէք ինձ մի դիմակ

Դէմքը ծածկելու:

(Դիմակ է դնում)

Դիմակ դիմակի վրայ:

Այժմ ի՞նչ հոգ, թէ ո՞ր խուզարկու աչքը
Կարող է դիտել տըզեղութիւններ.

Ահա հաստ ունքեր, որոնք իմ տեղակ

Կարող են շիկնել:

ԲԵՆՎՈՂԻՕ

Եկ բաղխենք և մըտնենք,
Եւ հէնց որ ներս գնանք՝ թող ամեն մէկը
Գործ դընենք ոտքերս:

ՐՈՄԷՅ

Մի ջահ տըւէք ինձ.

Թող թեթևասիրտ հեշտասէրները
Իրանց կրունկներով խտրդացնեն
Անըզզայ փսխաթը. իսկ ինձ համար է
Այն պապենական հին ասացուածը:
Ես ճրագ կըպահեմ և լոկ կըդիտեմ.
Խաղի մէջ չըկար բընաւ նենքութիւն,
Բայց ես յաղթուած եմ: Օ՛հ, սիրտըս սե է:

ՄԵՐԿՈՒՅԻ

Ագռաւներն են սե. թէ սիրտըդ սե է
Մենք դուրս կըքաշենք նըրան սե տըզմից,
Կամ—ներողութիւն—այն սիրոյ տըզմից,
Ուր դու խըրուած ես մինչև ականջներդ:
Եկ, մենք վատնում ենք մեր ճըրագները
Օրը ցերեկով:

ՐՈՄԷՅ

Ի՞նչ ես ուզում ասել:

ՄԵՐԿՈՒՅԻ
Ուզում եմ ասել, որ ուշանալով
Զուր տեղ վատնում ենք մեր ճըրագները,
Որպէս կանթեղներ օրը ցերեկով:
Դուք ուշ դարձըրէք մեր լաւ դիտմանը.
Մեր արժանիքը հինգ անգամ առաւել
Այդ բանի մէջ է, քան թէ մի անգամ
Մեր հընգապատիկ ունակութեանց *) մէջ:

ՐՈՄԷՅ

Եւ մենք գընալով այս մասկարադին՝
Լաւ դիտում ունինք, բայց ոչ թէ լաւ խելք:

ՄԵՐԿՈՒՅԻ

Կարելի է հարցնել, թէ ինչու համար:

ՐՈՄԷՅ

Այս անցած գիշեր մի երազ տեսայ:

ՄԵՐԿՈՒՅԻ

Նոյնպէս ես:

ՐՈՄԷՅ

Զերն ի՞նչ էր:

ՄԵՐԿՈՒՅԻ

Այն էր՝ որ յաճախ
Երազտեսները ճիշդը չեն խօսում:

ՐՈՄԷՅ

Այս, չեն խօսում երբ որ քընած են.
Բայց երազում են ճըշմարտութիւններ:

ՄԵՐԿՈՒՅԻ

Ա՛հ, ես տեսնում եմ, որ թագուհին Մար

*) Հինգ ունակութիւններն սոքա էին համարուած. պարզ ըմբռնում, երեակ սկսթիւն, մտապատկերացում, դնահատում և զիշութիւն:

Ծան. Ալ. Շմիդտի:

Զեզ ալցելել է: Նա է ֆերիների
Մանկաբարձուհին. և նա գալիս է
Ոչ աւելի մեծ քան թէ մի ագատ
Մի ալդերմանի *) ցուցամատի վրայ.
Նըրան քարշում են մի լուծ հիւլէներ,
Մարդկանց քթի վրայ, երբ որ քընած են:
Նըրա կառանուի շառաւիղները
Նինուած են սարդի երկար ոտքերից.
Ծածկոցը՝ ճպուռի փոքրիկ թևերից.
Երասմները՝ տմենաբարտկ
Սարդի ոստայնից. ձիերի սարքը՝
Լուսնի խոնաւիկ ճառագայթներից,
Եւ խարազանը՝ ծղրիտի ոսկընից.
Մըտրակի կաշին՝ ոստայնի թելից.
Եւ կառավարը՝ մի փոքրիկ մըժդուկ,
Գորշ համազգեստով, հազիւ կէսի չափ
Մի աղջկայ ծոյլ մատից ասեղով հանուած
Փոքր կլոր որդնի. և նորա կառքն է
Մի հատ փուր կաղին, որ կառուցած է
Հիւսըն ըսկիւռը կամ սրառաւ ճըճին,
Որ անիշելի ժամանակներից
Այդ փերիների կառագործըն է:
Այդ վիճակի մէջ գիշերից գիշեր
Նա արշաւում է սիրահարների
Ուղեղի միջին, որոնք այն ատեն
Տեսնում են պէսոսէս սիրոյ երազներ.
Պալատի մարդկանց ծընկների վըրայ,
Որոնք երազում են խոնարհութիւններ.
Փաստաբանների մատների վըրայ,
Որոնք երազում են իսկոյն միջնորդչէք,
Եւ տիկինների շըրթունքների վրայ,

*) Ալդերման՝ նշանակում է քաղաքային վարչութեան անդամ
Անգլիակի մէջ:

Որոնք երազում են իսկոյն համբոյրներ:
Բարկացած Մարզ յաճախ ծածկում է
Այդ շըրթունքները վէրք ու պալարով,
Զի նոցա շունչը ապականուած է
Քաղցրաւենիով *): Մերթ սըլանում է
Պալատականի հէնց քըմի ծայրին.
Եւ այն ժամանակ նա երազում է
Որ շուտ առնում է մի պաշտօնի հոտ.
Երբեմն էլ գալիս է տասանորդ—խոզի
Պոչի հետ մէկտեղ, և քոր է բերում
Քահանայի քիթը՝ քընած ժամանակ.
Յետոյ քահանան շուտ երազում է
Այլ պարզեացու: Երբեմն հեծնում է
Զինուորի վըզին, որ երազում է
Թըշնամիների վըզեր կըրտատել
Եւ ականների, դրանների վրայ
Եւ սպանիական սըրերի վըրայ ԾԱՀԱՀԵՑ 169
Եւ կենացների, հինգ կանգուն խորանի,
Եւ թըմբուկների, որոնք զարկում են
Նորա ականցին. որոնցից սարսելով
Զարթնում է քընից. և ալսպէս վախեցած՝
Մէկ հայհոյում է, մէկ աղօթք անում,
Եւ կըրկին քընում: Այդ հէնց նոյն Մարն է,
Որ գիշերն հիւսում է ձիերի բաշը,
Եւ կարծրացնում է ելֆերի կապեր
Գարշ կեղտոտ մազերում **), որ եթէ բացուին՝

*) Այդ քաղցրաւենին մի տեսակ սալորից շինուած անուշա-
հոտ քան էր, որ կանաչք ուտում էին՝ իրանց շունչը անուշահոտ
դարձնելու համար. կոչուած է նաև Kissing confits, ալսինքն համ-
բոյրի կոնֆէտ:

**) Դա մի տարածուած սնանաւատութիւն է եղէլ, որ պէտք է
ծագում առած լինի „Plica Polonica“ անուանուած սոսկալի հի-
ւանդութիւնից:

ՄԵԾ աղէտների պատճառ կըդառնան:
Դա այն վըհուկն է, որ երբ աղջըկերք
Պառկած են մէջքի վրայ՝ ճընշում է նըրանց
Եւ սովորեցնում որ բեռներ կըրեն,
Դարձնելով նըրանց պնդակազմ կանայք.
Նա է որ...

ՐՈՒՄԷՕ

Բաւ է, բաւ, Մերկուտիօ, բաւ է.
Դու մեղ խօսում ես փուչ բաների վրայ:

ՄԵՐԿՈՒԺԻԾԻՕ

Ճիշդ է, խօսում եմ երազների վրայ,
Որոնք ծոյլ ուղեղի երեխաներն են,
Որոնք ծընուած են ունայն ցընորքից,
Որ այնչափ աննիւթ է՝ որչափ օդն ինքը,
Եւ փոփոխական՝ քան թէ այն հողմը,
Որ այս ըոսէիս գրգում է հիւսիսի
Սառցապատ կուրծքը, և որ, զայրացած՝
Փըչում է թեքում, դարձնելով դէմքը
Դէպի ցօղասփիւռ անոյշ հարաւը:

ԲԵՆՎԱԼԻՀԻՕ

Հէնց ալդ քո հողմը փըչում է տանում
Մեր ուշք ու միտքը. ընթրիքը պըրծել է.
Մենք ուշ կըհասնենք:

ՐՈՒՄԷՕ

Վախենում եմ խիստ վաղ.

Քանզի իմ հոգիս կարծես ըզգում է,
Որ մի չար աղէտ, դեռ աստղից կտխուած,
Հսկըսելու է ժամստ թըւականը
Հէնց ալս գիշերուալ ալս խընջոյքներից.
Եւ վերջ կըդընէ, վաղահաս մահու
Մի նըւաստ պատժով, այն անարդ կեանքին,
Որ ամփոփուած է իմ կուրծքիս միջին:

Թող նա, որ ունի իմ նաւիս ղեկը՝
Ուղեցնյց լինի իմ առաջաստիս:—
Օ՞ն, ուրախ, տըզերք:

ԲԵՆՎԱԼԻՀԻՕ

Զարկէք, թըմբուկներ:

(Դուրս են գնում),

ՏԵՍԱՐԱԿՆԵ.

Մի սենեակ կապիւէտի տան մէջ.

Երաժիշտներ սպասում են: Մանում են ԾԱՌԱՆԵՐ:

Ա. ԾԱԽԱՅՑ

Ուր է Պոտպանը, որ չէ գալիս ինձ օգնէ սորանք հա-
ւաքենք. բահ, նա սման փոխէ, աման լուայ:

Բ. ԾԱԽԱՅՑ

Երբ մի տան մաքրութիւնը յանձնուած է մի երկու
հոգու ձեռքերին, և ալդ ձեռքերն էլ անլուալ են՝ դա կեղ-
տոտ բան է:

Ա. ԾԱԽԱՅՑ

Դուրս տար աթոռակները. վեր առ բուֆէտը. նալիր
պնակներին. ընկեր, ինձ համար մի կտոր քաղցրեղէն պա-
հիր, և եթէ ինձ սիրում ես՝ ասա գոնապանին, որ Նուշան
Գրայնդստոնին և նելլին ներս թողնէ:—Անտօն, Պոտպան:

Բ. ԾԱԽԱՅՑ

Ի՞նչ է, ալ տղալ, հրամայիր:

Ա. ԾԱԽԱՅՑ

Ձեզ սպասում են, ձեզ կանչում են, ձեզ ինդրում են,
ձեզ փնտում են մեծ սրահում:

ԲԱՐԵ. ԾԱՌԱՅՑ

ՄԵՆՔ ՀԵՆՔ ԿԱՐՈՂ թէ այստեղ լինել, թէ այնտեղ:—
ԵՌԵՄ արէք տղերք, մի քիչ աշխոյժ եղէք. ով որ ամենից
շատ մնայ՝ թող ամենը տանէ:

(Դուրս են գնում):

(Մտնում են կապիլէտ, եւն, հիւրերով և դիմակաւորներով):

ԿԱՊԻԼԵՐԸ

Բարով, պարոններ. բարով էք եկել:
Այն տիկինները, որոնց ոտները
Զերծ են կոշտերէց՝ ձեզ քարշ են տալու:
Ահ, հա՛, օրիորդներ. ձեզնից որ մէկը
Հիմա կարող է պարելուց փախչել:
Ով որ նազ անէ՝ ես կերդուեմ որ նա
Ոտքին կոշտ ունի:—Լաւ կէտին զարկեցի:—
Դուք էլ, պարոններ, բարով էք եկել:
Կար մի ժամանակ, երբ որ ես ինքս էլ
Դիմակ եմ գըրել. երբ կարող էի
Մըրմընջալ հեղիկ դիւրեկան խօսքեր
Մի գեղեցկադէմ տիկնոջ ականջի:
Գընաց, գընաց, գընաց:

(Նոր հիւրերի)

Բարե, պարոններ:—Նըւագածուներ,
Եկէք նուագեցէք. տեղ բացէք, տեղ բացէք
Հալդէ, աղջրկերք:

(Երաժշտութիւնը նուագում է, եւ պարում են, Ծառաներին)

Ելի ճրագ բերէք,
Թշուառականներ. սեղան շիտեցէք.
Կրակը մարեցէք, խիստ տաք է սենեակը:
—Ահ, դու սիրելի. ճիշդ ի դէպ հասաւ
Այս անակընկալ ուրախութիւնը:
Եկ, նըստիր, նըստիր, սիրելի Կապիլէտ,
Պարելու օրերն անցան մեզ համար:—

Ո՞րչափ է անցել այն ժամանակից,
Երբ վերջին անգամ դիմակներ դըրինք:

Բ. ԿԱՊԻԼԵՐԸ

Երեսուն տարի, սուրբ Կոյսը վըկալ:

Ա. ԿԱՊԻԼԵՐԸ

Ի՞նչ, այ մարդ. ոչ այդքան. ոչ, այդքան չըկալ:

Այդ Լուչէնտիօլի հարստնիքին էր:

Պենտեկոստէին, որչափ շուտ որ գալ՝

Անցած կըլինի քըսանհինդ տարի.

Այդ ժամանակն էր, որ դիմակուեցանք:

Բ. ԿԱՊԻԼԵՐԸ

Բահ, աւելի է, շատ աւելի է.

Նորա մեծ որդին իսկ աւելի մեծ է.

Պարոն, երեսուն տարեկան է նա:

Ա. ԿԱՊԻԼԵՐԸ

Բահ, ինչ ես ասում. երկու տարի առաջ

Դեռ նորա որդին անչափահաս էր:

ՐՈՄԵՈ (ցայց տալով Զուլիէտը)

Ի՞նչ տիկին է այն,

Որ այն ասպետի ձեռքը պըճնում է:

ԾԱՌԱՅՑ

Չըգիտեմ, տէր իմ:

ՐՈՄԵՈ

Օհ, նա վառւում է

Աւելի պայծառ քան թէ ջահերը.

Այնպէս է նորա գեղեցկութիւնը

Գիշերի թըշին՝ որպէս մի գոհար

Մի եթովպուհու ականջից կախուած:

Օհ, գեղեցկութիւն, չափազանց հարուստ

Տիրելու համար, խիստ չընաշխարհիկ

Աշխարհի համար: Այսպէս է երեսում

Զիւնաթոլը աղաւնին ագռաւների մէջ,
Որպէս այն տիկինն՝ իր ընկերների:
Այս պարէց լետոյ պէտք է լաւ դիտեմ,
Թէ որտեղ կանգնած է, և իմ բիրտ ձեռքը ըս
Բախտաւորացնեմ հաղելով նրա ձեռքին:
Արդեօք սիրել է սիրտը մինչև ալժմ:
Երդուեցէք, իմ աչքեր, որ նա չէ սիրել.
Քանզի ճշշարիտ գեղեցկութիւնը
Մինչև այս գիշեր ես չէի տեսել:

ՏիբԱԼՏ

Այս մարդն, իր ձայնից, ինձ երեռում է
Որ Մոնտէգիւ է:—Սուրբս բեր, տըղալ:—
Ի՞նչ, այս թըշուառը լանդրգնում է գալ
Կոպիտ գիմակով իր դէմքը ծածկած,
Մեր տօնը ծաղրել, հեգնելու համար!
Երդուում եմ տոհմիս պատուով ու հնութեամբ
Նըրան մեռցնելը ես մեղք չեմ սեպում:

Ա. ԿԱՊԻՀԻԼԵՏ

Վահ, բնչ կայ, Տիբալտ, ինչու ես փըրփըրել:

ՏիբԱԼՏ

Այս մարդը, հօրեղբայր, մի Մոնտէգիւ է,
Մեր թըշնամին է. մի թըշուառական,
Որ հենց մեր ջիգրու եկել է ալստեղ՝
Մեր խընջուքն այս գիշեր հեգնելու համար:

Ա. ԿԱՊԻՀԻԼԵՏ

Ռոմէօն է նա:

ՏիբԱԼՏ

Այս, նա ինքն է,
Այն սրիկալ Ռոմէօն:

Ա. ԿԱՊԻՀԻԼԵՏ

Հանդարտ կաց, սիրելիս,

Հանգիստ թող նըրան. նա իրան պահում է
Մի շատ բարեկիրթ ջէնտելմէնի պէս.
Եւ ճիշդն ասելով՝ նա մեր քաղաքի
Փառք ու պարծանքն է. և նա ծանօթ է
Որպէս առաքինի և կիրթ պատանի:
Այս բոլոր քաղաքի հարցստութիւնը
Եթէ ինձ տալին՝ ես չէի կամենալ
Այստեղ, իմ տան մէջ, անպատուել նըրան:
Ուշ մի գարձըներ, մի նայիր նորան.
Իմ կամքը այս է: Թէ յարգում ես այն՝
Ցոյց տուր մի լաւ դէմք, հեռացըու քեզնից
Այդ խէթ նայուածքը, որ անվայել է
Մի տօնի համար:

ՏիբԱԼՏ

Նատ էլ վալել է,
Երբ որ մեզ հիւր է այսպիսի սրիկան:
Չեմ թոյլ տալ նորան:

Ա. ԿԱՊԻՀԻԼԵՏ

Դու պէտք է թոյլ տաս:
Ի՞նչ է, այ տըղալ. ասում եմ, պէտք է.
Եկ, գընա բանիդ. ով է տան տէրը,
Ես թէ դու. գնա բանիդ: Նորան թոյլ չես տայ:
Վահ, Տէր ողորմեա, միթէ ուզում ես
Մի աղմուկ հանել իմ հիւրերի մէջ,
Մի կըուիւ սարքել, և մարդ ձեանալ:

ՏիբԱԼՏ

Սակայն, հօրեղբայր, դա մեզ ամօթ է:

Ա. ԿԱՊԻՀԻԼԵՏ

Գնա բանիդ, գնա բանիդ, աներես տըղալ:—
Ճիշդ որ այնպիս է:—Այս յոխորտանքը՝
Կարող է զըլիսիդ մի փորձանք բերել:
—Գիտեմ ինչ կլինի:—Դու ինձ դէմ կենաս.

Դահ, ես իմ հոգիս, հէնց այդ էր պակաս:
(Պարողներին)

Կեցցէք, սիրելիներ:

(Տիբալտին)

— Շատ աներեսն ես.

Գընա. հանգիստ կաց, և կամ...
(Ծառաներին)

Ճրագ ըերէք,
Ելի ճրագ ըերէք, ամօթ. այս ի՞նչ է:

(Տիբալտին)

Ես քեզ կարող եմ լաւ հանգարտացնել:
(Պարողներին)

Աշխոյժ, հոգիներ:

Տիբալտ (Առանձին)

Համբերութիւնը
Իրոնի ըստիպուած, դէմ տռ դէմ գալով
Մ' ինքնայօժար սըրտմըտութեան հետ՝
Ոյդ ընդհարումից բոլոր մարմինըս
Դողահարում է. ուզում եմ գընալ:
Այս բըռնի մուտքը, արտաքուստ հանգարտ,
Փոխարկուելու է մի գառըն մաղձի:

ԹՈՒՐԷԾ (Զուլիէտին)

Եթէ պղծում եմ այս սուրբ խորանը
Անարժան ձեռքով
Ապա քաղցը է ինձ տուժել իմ մեղքը
Այս իմ տուզանքով.
Իմ շըրթունքները, որպէս շիկնադէմ
Երկու ուխտագնաց՝
Ոյդ բիրտ հըպումը քընքոյշ համբոլով
Կըջընջեն ի բաց:

ԶՈՒՐԷԾ

Դուք խիստ էք դաժան դէպ ձեր ձեռքերը,
Բարի ուխտաւոր.

Նոքա ցոյց տըւին յարգանքներ միայն,
Եւ չեն մեղաւոր:

Սըրբոց ձեռքին էլ հըպում են ձեռքերն
Ուխտաւորների.

Եւ ափ ընդ ափ՝ է սուրբ համբոլը
Զերմեռանդների:

ԹՈՒՐԷԾ

Միթէ սըրբերը կամ ուխտաւորքը
Չունին շըրթունքներ:
ԶՈՒՐԷԾ

Այո՛, ուխտաւոր, ազօթքի համար
Ունին շըրթունքներ:

ԹՈՒՐԷԾ

Օ՛հ, թող ուրեմըն շըրթունքներն անեն
Ձեռքի արածը.

Նրանք ազօթում են. լրսիր ազօթքին,
Տուր հայցըւածը,

Որ մի՛ գուցէ թէ հաւատքը փոխուի
Յուսահատութեան:

ԶՈՒՐԷԾ

Սըրբերն անշարժ են, թէև ազօթքին
Կատարում էլ տան:

ԹՈՒՐԷԾ

Մի՛ շըրթուիր ապա՛ երբ ես ազօթքիս
Արդիւնքը քաղեմ.

Թող քո շըրթունքով իմ շըրթունքներից
Իմ մեղքըս քաւեմ:
(Համբուրում է նրան):

ԶՈՒՐԷԾ

Շըրթունքներս ուրեմն այդ քաղած մեղքը
Իրանք պահեցին:

ՌՈՒՄԷՕ
ՄԵՂՔ իմ շրթունքից. օհ, անոյշ յանցանք.—
Յետ տուր ինձ կըրկին:
(Արկին համբուլում է),
ԶՈՒՄ պատեղական գույնու մասին առաջ առաջ առաջ առաջ
Գուրք համբուլում էք գըրքի երեսով *):

ԴԱՅԵԱԿ

Տիկին, ձեր մայրը ձեզ մի խօսք ունի:

ՌՈՒՄԷՕ

Ո՞վ է իր մայրը:

ԴԱՅԵԱԿ
Պատանի ասպետ,
Այս տան տիրուհին է նորա մայրը,
Մի բարի տիկին և շատ իմաստուն
Եւ առաքինի: Ես եմ կաթ տըւել
Նորա աղջրկան, որի հետ հիմա
Գուրք խօսում էիք: Լաւ, ձեզ ասում եմ,
Ով որ կարենայ ձեռք բերել նըրան՝
Նա հընչուն ոսկի շահած կըլինի:

ՌՈՒՄԷՕ

Մի կապիւլէտ է. օհ, քնզցը պահանջ.
Կեանքըս ուրեմբն պարտք է թըշնամուս:

ԲԵՆՎՈԼԻՒԾ (Բոմէօյին)

Գընանք, խընջուքը իր զենիթին է:

ՌՈՒՄԷՕ

Աւաղ, ալդպէս է և իմ տագնասը:

Ա. ԿԱՊԻՒՀԻԼԵՑ

ԱՇ, ոչ, պարոններ. միք գընալ դեռ ես.
Մենք ալժմ կունենանք մի փոքրիկ ընթրիք:—

* Այսինքն անքան գեղեցիկ բառերով, որ կարծես թէ ձեր
խօսքերը նախապատրաստուած են, որպէս դրքի մէջ: Ս. Թ.

Անպատճառ գնում էք: Ուրեմն բոլորիդ
Շնորհապարտ եմ ես. շընորհակալ եմ,
Պարկեշտ պարոններ, ձեզ բարի գիշեր:—
Ճրագ բերէք պատեղ:— Գնանք, հանգըստանանք:—
(Բ. Կապիւլէտին)
Մնաս բարով, բարեկամ. բաւական ուշ է,
Գընում եմ քընել:
(Բոլորը դուրս են գնում, բացի Զուլիէտից եւ դայնակից):

ԶՈՒՄ ՀԻԼԵՑ

Եկ ալստեղ, դայեակ. այն պարոնն ով է:

ԴԱՅԵԱԿ

Տեր Տիբերիոյի ժառանգն ու որդին:

Ո՞վ է նա, որ այժմ դուրս է գնում դունից:

ԴԱՅԵԱԿ

Նա՝ Պետրուչիոյի որդին է կարծեմ:

ԶՈՒՄ ՀԻԼԵՑ (Բոմէօյին ցոյց տակով)

Իսկ նա, որ ետևից գընում է ալստեղ

Եւ պարել չուզեց, նա ով է:

ԴԱՅԵԱԿ

Զգիտեմ:

ԶՈՒՄ ՀԻԼԵՑ

Գնա, անունը հարցըու:

(Գայեակը հեռանում է)

Թէ ամուսնացած է

Դագաղը կլինի իմ առագաստը:

ԴԱՅԵԱԿ (Գալով)

Անունն է Բոմէօ, մի Մոնտէգիւ է,

Զեր մեծ թըշնամու մէկ հատիկ որդին:

ՃՈՒՅԱՅ ՃՈՒՅԱՅ
Մէկ հատիկ սէրըս, աւաղ, ծագում է
Հէնց իմ մէկ հատիկ ատելութիւնից.
Նատ շուտ տեսալ ես նըրան անձանօթ,
Եւ շատ ուշ եղայ նորա հետ ծանօթ:
Անօրինակ սէր ծընաւ իմ սըրտում,
Երբ պէտք է սիրեմ իմ ժանտ թըշնամուն:

ԴԱՅԵԱԿ

Ի՞նչ է այդ, ի՞նչ է:

ՃՈՒՅԱՅ

Մի ոտանաւոր,

Որ այս ըոսէիս ինձ սովորեցրեց
Մի աղարոն, որի հետ պարեցի ես այժմ:
(Ներսից կանգում են «ՃՈՒՅԱՅ»):

ԴԱՅԵԱԿ

Իսկոյն, իսկոյն. Եկ. Եկ մենք էլ գընանք.
Բոլոր հիւրերը արդէն մեկնել են:
(Դուրս են գնում):

Մանում է ՆԵՐԿԱՅԱՑՈՒԽԻՇԻԶԼ

Ալժըմ հին տենչը մեռել է գնացել,
Եւ մի նոր տարփանք նորա տեղն անցել:
Այն գեղեցկուհին, որի ետեկից
Հեծծում էր սէրը, մեռնում էր ցաւից՝
Զուլիկտի կողքին նըսեմացել է,
Քնքոյշ կոյսի մօտ տըգեղացել է:
Նա և Ռոմէօ սիրել են միմեանց,
Եւ հայեացքներով թովել են միմեանց:
Բայց զեռ Ռոմէօն պատմել է ուզում
Իր ոսոխուհուն կըսկիծն իր ոըրտի.
Զուլիկտն էլ տնոյշ խայծ է գողանում
Խիստ վըտանգաւոր ծալիքիցն այդ կարթի:
Ռոմէօն ոսոխ ենթագըրուելով՝

Զէ կարող ազատ ասպարէզ գըտնել,
Եւ սիրողների սիրած ուխտելով
Իր բուռըն սէրը այն կոյսին յայտնել:
Եւ Զուլիկտ նոյնչափ սիրահարուած է,
Բայց չունի միջոց մի տեղ հանդիպել
Իր տարփածուին, որին յարուած է.
Բայց կերքը նորանց նոր ոյժ է տըւել.
Եւ ժամանակը կըտալ առիթներ
Որ տեսնեն միմեանց, յայտնեն միմեանց սէր,
Խառնելով նոցա ծալրայեղ վըշտին
Նոյնչափ ծալրայեղ ուրախութիւններ:

(Դուրս է գնում):

յանոցք բժիշկաւ տարս բայով ՅՈ
իոյժմադր ծայրս կյամբոցին և
ըմբուլայ միջյար մյա ցայտն մցուոց ո՛վ
։ Յաւապահացին փաշալու աշխանք և

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

քայլ և երաց բայցն ցգղին ըլու
կմանից բայցը ցթունահան ու յ
ովն ընածնին մասաւա անածնին ձևածն ով
այսմայն անախացուոց անազուած փաշալու

Մի բացօթեալ տեղ, կապիւլէտի պարտէղին կից,
Մտնում է ԲՈՄԵՅ.

ԲՈՄԵՅ

Ի՞նչպէս առաջ գնամ, երբ սիրտս այստեղ է:
Յետ դարձիր, թո՛վ հող, գըտիր կեդրոնըդ:

(Մալցում է պատից եւ ցատկում է պարտէղի
մէջ: Մտնում են Բննվոլիո եւ Մերկուտիո):

ԲԵՆՎՈԼԻՈ

Բոմէօ, Բոմէօ:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՈ

Նա խելօք մարդ է.

Ես երդում կանեմ, որ տուն է փախել
Եւ մըտել քնել է:

ԲԵՆՎՈԼԻՈ

Նա այս կողմ վազեց

Եւ այս պարտէղի պատից ներս ցատկեց:
Կանչիր, Մերկուտիօ:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՈ

Ոչ միայն կըկանչեմ,

Այլ կըթախանձեմ: — Բոմէօ, քմահաճ,

Ա՛յ գիմ, այ տարիածու, այ գում սիրահար.
Մի հառաջանքի կերպարանքն առ գու
Եւ երեա մեզ, մի յանդ միայն ասա՝
Եւ գոհ կըլինիմ. հէնց մի «ախ» քաշիր,
Մէկ իրար կըցիր համբոյր ու հրապոյր.
Սանամայր Վենուսին մէկ քաղցը բառ ասա.
Տուր մէկ մականուն նորա կոյր որդուն,
Այն մանկահասալ Աղամ կուպիդոնին,
Նորան, որ այնքան ճիշտ իր նետն արձակեց՝
Երբ սիրահարուեց կոֆետուա արքան
Մուրացկանուհուն *): — Բայց նա չէ լրսում,
Չէ շարժում, չէ գալիս. կապիկը մեռած է.
Ես նորա ոգուն պէտք է թախանձեմ:
Երդում եմ տալիս լոնուն Ոոզալինի
Պայծառ աչքերի, բարձըր ճակատի,
Մարջան շըրթունքի, սիրունիկ ոտի,
Գեղուղէշ ազգըրի, սարսըռուն զիստի,
Եւ նորան յարակից այն կալուածների.—
Երեա գու մեզ քո կերպարանքով:

ԲԵՆՎՈԼԻՈ

Թէ նա քեզ լըսէ՝ նա կըբարկանալ:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՈ

Այս բանը չէ կարող
Բարկացնել նըրան: Նա կըբարկանար՝
Թէ նրա սիրուհու շըրջանակի մէջ
Ես գուրս բերէի մի ինչ-որ ոգի,
Ալլանդակ ընութեան տէր, թողնելով նըրան
Ալնտեղ կանդ առած՝ մինչեւ որ սիրուհին

*) Մի երեակալական թաղաւոր, որ ամուսնացել է մի մուրացկան աղջկակ հետ. պատմութիւնը պահուած է մի հին բալլազի մէջ, որ գտնում է զոկսոր Պերսիի «Reliques of ancient English Poetry» ժողովածում:

Ծան. Ս. Էզզկոֆի:

Նըրան թախանձէր և չիք դարձընէր։
Այդ բանը մի տեսակ անարգանք կըլ'նէր։
Բայց շատ պարկեշտ է իմ թախանձանքը։
Քանզի ես, յանուն նորա սիրուհու։
Հենց իրան եմ կանչում։

ԲԵՆՎՈԼԻՕ

ԵԿ. Նա անպատճառ

Թագըրած է իրան այս ծառերի մէջ՝
Որ ընկերակցի մըռալլ գիշերին։
Իր սէրը կոյր է, և մութը միան
Յարմար է նորան։

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Թէ կոյր է սէրը՝
Նա անկարող է նըշանին զարկել։
Հիմա Ռոմէօն թող գընալ նըստի
Խնձորի ծառի տակ, և թող երազէ,
Որ ինքն ուտում է սիրուհու ձեռքից
Սըգելուած ծառի անոլ պըտուղը։
Մնաս բարով, Ռոմէօ. — Պէտք է գնամ պառկեմ
Իմ մահճակալում։ Այս դաշտի անկողինն
Ինձ համար ցուրտ է. չեմ կարող քընել։—
Գալիս ես թէ ոչ։

ԲԵՆՎՈԼԻՕ

Գընանք. ի զուր է
Որոնել այստեղ նըան՝ որ կամք չունի
Իրան ցոյց տալու։

(Դուրս են գնում)

ՏԵՍԱՐԱԿԻ

Կապիլէտի պարտէզը.

Մտնում է բութէօ.

ՌՈՄԷԶՈ

Ով որ չէ երբէք մի վէրք ըստացել՝
Նա կըծիծաղի սպիների վըրալ։—
Բայց լուշ է, որ ծագում է ալժմ
Այն պատուհանից։ Արևելքն է այն,
Եւ Զուլիկտ—արևել։

(Զուլիկտ երեւում է մի պատուհանից)։

Ծագիր, պէրճ արեգ,
Եւ ըսպանիր դու նախանձուտ լուսնին,
Որ արդէն ցաւից հիւծուել է, ծիւրուել։
Նա նախանձում է, որ դու, իր նաժիշտն,
Այնքան աւելի սիրուն ես քան ինքը։
Մի լինիր ալլ ես նորա նաժիշտը,
Քանի որ ալդպէս նախանձուտ է նա։
Այն, վեստալական նորա հագուստը
Տըգենուն է և հիւանդ. և միայն խենթերն
Լզգենում են այն. դուրս ձըգիր գըրան։—
Ահա տիրուհիս. օհ, իմ սիրուհիս։
Երնէկ իմանար, թէ ինքն ալդպէս է։—
Թէև խօսում է բայց բան չէ ասում։
Բայց լինչ. իր աչքը խօսում է ինձ հետ։
Թող տամ պատասխան։ Ո՛չ, շատ յանդուգն եմ։
Ինձ հետ չէ խօսում։ Ահա երկընքի
Ամենից սիրուն երկու հատ աստղեր,
Որ պէտք է գործով ուրիշ տեղ գընան՝
Խընդըում են նորա սիրուն աչքերից։

Գալ փալել իրանց պարսւնակներում
Մինչ իրանց դարձը:
Ի՞նչ կըստահէր, թէ այն աչքերը
Երկնակամարում տեղափոխուէին,
Եւ այն աստղերը նորա գըլխի մէջ:
Նորա թըշերի պայծառութիւնը
Ամօթ կըբերէր այն վառ աստղերին,
Զերթ օրուայ լոյսը՝ նրսեմ կանթեղին:
Նորա աչքերը երկնակամարում,
Այն եթերալին տարածութիւնից
Այնպիսի պայծառ լոյս կարձակէին՝
Որ թըռչունները երգել կըսկսէին,
Կարձելով գիշերը անցել է արդէն:
Տես ինչպէս թուշը լենում է ձեռքին:
Ախ, ես այդ ձեռքին ձեռնոց լինէի
Որ կարենալի գըպչել այդ թըշին:

ԶՈՒՀԻԾ

Խօսնում է. — Օ՛հ, խօսիր կըրկին,
Լուսեղէն հրեշտակ. դու շողշողում ես
Այնպէս փառահեղ, իմ գըլխիս վերև,
Այս գիշերի մէջ՝ որպէս շողում է
Երկնի թեաւոր պատգամաբերը
Մահկանացուների ճերմակ, վերամբարձ
Ապշած աչքերին. որ լետ են թեքւում
Նըրան դիտելու երբ աշտանակած
Հանդարտիկ ճեմող ամպերի վըրայ՝
Նաւարկում է նա եթերքի կուրծքին:

ԶՈՒՀԻԾ

Օ՛, Ռոմէօ, Ռոմէօ. ինչու ես Ռոմէօ.
Ուբացիր հօրըդ, ժըխտիր անունըդ:

Դոկ թէ կամք չունիս՝ երդուիր ինձ սիրել,—
Եւ ես կապիւղէտ չեմ լինի ալևս:

Լըսէմ դեռևս, թէ պատասխան տամ:

ԶՈՒՀԻԾ

Անունըդ միայն է ինձ թըշնամի.

Դու Մոնտէգիւ չես. ինչ որ կաս, այն ես:

Ի՞նչ է մի Մոնտէգիւ. ոչ կեանք է, ոչ ոտք,
Ոչ բազուկ, ոչ դէմք, ոչ էլ մի այլ մաս:

Ի՞նչ բան կալ միթէ մի անունի մէջ:

Այն բանը, որին վարդ ենք անուանում:

Մի որեիցէ ուրիշ անունով:

Դարձեալ կըսըփոէր նոյնչափ անուշ բոյր.

Նոյնպէս Ռոմէօն, եթէ չունենար

Ռոմէօ անունը՝ դարձեալ կունենար

Այն նոյն թանկագին ձիրք ու շընորհքը՝

Ի՞նչ որ այժմ ունի, առանց այդ տիտղոսին:

Ռոմէօ, բաց թող քո այդ անունըդ,

Եւ իբրև տրիտուր մի բանի, որ չէ

Քո մարմնի մի մաս՝ առ գու ինձ ամբողջ:

ԶՈՒՀԻԾ

Ես քեզ բըռնում եմ հէնց քո այդ խօսքով:

Դու ինձ անուանիր քո սիրականըդ,

Եւ ես կըլինիմ նորից մըկըրտուած.

Ել այսուհետեւ չեմ ես Ռոմէօ:

ԶՈՒՀԻԾ

Այդ ինչ մարդ ես դու, որ վարագուրուած

Գիշերի քօղով՝ գալիս գալթում ես

Իմ գաղտնիքիս գէմ:

ԶՈՒՀԻԾ

Քեզ ինչ անունով

Ասեմ թէ ով եմ: Օ՛հ, իմ անունը,

Սիրելի սըբուհի, ինձ ատելի է,
Քանի որ նա մեզ մի թշշնամի է:
Թէ գըրուած լինէր այդ անունն այստեղ՝
Եւ պատառ պատառ կանէի նըրան:

ԶՈՒՀԻԵՑ

Իմ ականջներըս չեն ըմպել դեռևս
Հարիւր բառ՝ այդ լեզուի արտասանութեամբ.
Բայց ճանաչում եմ նորա հընչիւնը:—
Չես դու Ռոմէօն, և մի Մոնտէգիւ:

ՅՈՒՄԷԾ

Ոչ այս և ոչ այն, սիրուն սըբուհի,
Եթէ երկուսն էլ քեզ ատելի են:

ԶՈՒՀԻԵՑ

Ի՞նչպէս եկար այստեղ, ասա ինձ, և ինչու:
Պարտէզի պատերն անելանելի
Եւ սաստիկ բարձր են: Մահ է այս վայրը՝
Եթէ նըկատուի քո ով լինելըդ,
Կամ մերիններից մի ոք տեսնէ քեզ:

ՅՈՒՄԷԾ

Ես թըռալ սիրոյ թեթև թերով
Այս պարիսպներից. քարեալ պատնէշներ
Չեն կարող լինել պատուար սիրոյ գէմ:
Ինչ որ կարող է սէրը կատարել՝
Սէրը պատրաստ է խիզախել առ այն:
Ուրեմն չեն կարող ազգականներըդ
Ինձ կասեցընել:

ԶՈՒՀԻԵՑ

Եթէ տեսնեն քեզ՝

Կըխողխողեն քեզ:

ՅՈՒՄԷԾ

Աւազ, քո աչքում
Առաւել վտանգ կալ՝ քան նոցա սըրերից

Քըսան հատի մէջ: Դու քաղցըր նայիր՝
Եւ ես այնուհետ անխոցելի եմ
Նոցա սիսի դէմ: ԶՈՒՀԻԵՑ

Աշխարհն ինձ տալին՝
Չէի կամենալ քեզ տեսնեն այստեղ:

ՅՈՒՄԷԾ

Գիշերուալ վերարկուն ինձ կըթաքցընէ
Նոցա աչքերից: Բայց թէ ինձ չես սիրում:
Ապա թող նոքա գըտնեն ինձ այստեղ:
Աւելի լաւ է կեանքըս վերջ գըտնէ
Նոցա տաելութեամբ, քան մահն անագան,
Երբ գուրկ քո սիրուց:

ԶՈՒՀԻԵՑ

Ո՞վ առաջնորդեց
Քեզ գէպ այս վայրը:

ՅՈՒՄԷԾ

Սէրը, որ իսկոյն
Թելադրեց ինձի հարց ու փորձ անել:
Նա ինձ խելք տըւաւ, ես նորան՝ աչքեր:
Վեկավար չեմ ես. բայց թէ լինէիր
Այնքան հեռաւոր, որքան ընդարձակ
Այն ծովափունքը, որ ողողուած են
Ամենից հեռաւոր ծովի ալիքով
Ես այդ վըտանգը յանձըն կառնէի
Այդչափ թանկագին մըթերքի համար:

ԶՈՒՀԻԵՑ

Գիշերի գիմակը, գիտես, գէմքիս է.
Թէ ոչ կուսական մի շիկնածութիւն
Կըներէր թուշըս այն խօսքի համար,
Որ գուայս գիշեր ինձնից լըսեցիր:

Երանի մնայի պատշաճութեան մէջ,
Երանի, երանի ասած չըլնէի
Ինչ որ ասացի: Բայց թողնենք ձևերը:
Սիրում ես դու ինձ: Գիտեմ, «այս» կասես.
Եւ ես քո խօսքիդ հաւատ կընծալեմ.
Բայց եթէ երգուես՝ գուցէ երգումը
Կըդաւաճանես: Դիոսն, ասում են,
Սիրականների երգմազանցութեան վրայ
Ծիծաղում է միայն: Օ՛հ, քաղցըը Ռոմէօ,
Եթէ սիրում ես՝ յալտնիր այդ անկեղծ:
Եւ եթէ կարծում ես, թէ շուտ շահուեցայ
Դէմքս կըխոժոռեմ, անգութ կըլինիմ,
Եւ քեզ «ո՞չ» կասեմ, որ թախանձես ինձ.
Եթէ ոչ ապա թէ աշխարհն ինձ տան:
Ես այդ չեմ անիլ: Սիրուն Մոնտէգիւ,
Ճիշդն ասեմ, ես խիստ սիրահարուած եմ:
Գուցէ իմ վարքըս թեթէ համարես.
Բայց հաւատա ինձ, ով տղնիւ պարոն,
Ես քեզ կըլինիմ էլ հաւատարիմ,
Քան նոքա որ ունին խորամանկութիւն
Պաղ երևալու: Ես էլ աւելի
Պաղ կըլինէի, խոստովանում եմ.
Բայց դու լըսեցիր, ինձանից ծածուկ,
Իմ անկեղծ սիրոյ անգուսու բորբոքը:
Ներիր ինձ ուրեմն և մի վերագրեր
Սիրու թեթևութեան այս թուլութիւնը,
Որ մութ գիշերը քեզ յալտնագործեց:

ՇՈՒՄԷՇ

Տիրուհի, երգում եմ այն օրհնեալ լուսնով,
Որ արծաթաթուր գեղազարդում է
Այս բոլոր պտղաւէտ ծառերի ծալը...
ԶՈՒՀԻՑ

Օ՛հ, լուսնով մի երգուիր, լեզեղուկ լուսնով,

Որ ամեն ամիս վոխում է ձեր
Իր շըրջանաւոր պարունակի մէջ.—
Մի գուցէ սէրըդ նոյնպէս վոփոխուի:

ՇՈՒՄԷՇ

Ի՞նչ բանով երգուեմ:

Մի երգուիր բընաւ.
Կամ, թէ ուզում ես՝ հէնց քո շնորհաշուք
Անձովդ երգուիր, որ է աստուածը
Իմ պաշտողութեան, —և կըհաւատամ:

ՇՈՒՄԷՇ

Եթէ իմ սըրտիս այս խորին սէրը...

Լաւէ. մի երգուիր: Թէպէտև սիրտըս
Հրձւում է քեզնով՝ բայց չեմ հրձւում ես,
Որ հէնց ալս գիշեր սիրոյ ուխտ կըռենք:
Գր շատ անկարծ է, շատ անգիտակից,
Նատ դիպուածական, շատ նման վայլակի,
Որ չըքանում է նախ քան թէ ասես՝
Ահա վալում է: Բարի գիշեր, հոգիս:
Սիրոյ ալս կոկոնն, ամառուայ շընչով
Հասունանալով՝ կարող է դառնալ
Գեղանի մի ծաղիկ՝ երբ կըրկին անգամ
Հանդիպենք միմեանց: Օ՛հ, բարի գիշեր.
Թող այն նինջը քաղցը և հանգիստն անոյշ,
Որ կան իմ լանջում՝ լինին քո սըրտում:

ՇՈՒՄԷՇ

Ուրեմն ինձ ալսպէս անլագ ես թողնում:

ԶՈՒՀԻՑ

Ի՞նչ յագուրդ կուզես առնել այս գիշեր:

ԹՈՄԷՕ
Փոխադարձ սիրոյ անվլկանդ ուխտը
Իմիս փոխարէն:

ԶՈՒՀԼԻՀԸ

Ես տըւի քեզ իմս՝
Նախ քան ուզէիր: Բայց դարձեալ կուզէի
Որ նա տակաւին տըրուած չըլինէր:

ԹՈՄԷՕ

Միթէ կուզէիր յետ առնել ինձնից.
Եւ ինչո՞ւ, սէր իմ:

ԶՈՒՀԼԻՀԸ

Որ առատաձեռն
Կարենալի լինել, և քեզ տալ կըրկին:
Բայց տենչըս այն է՝ ինչ արդէն ունիմ:
Առատաձեռնութիւնս նոյնչափ անեզը է՝
Որչափ ծովն ինքը. սէրըս նոյնչափ խոր:
Որչափ քեզ տալիս եմ այնչափ շատ ունիմ.
Երկուսն էլ չունին ոչ չափ, ոչ սահման:

(Դայեալը ներսից կամում է):

Մի ձայն է գալիս: Մնաս բարով, սիրական:—
Եկայ, բարի դայեակ:— Սիրելի Մոնտէգիւ,
Հաւատարիմ եղիր:— Բայց կաց մի բոսէ.
Ես կըրկին կըգամ:

(Գնում է):

ԹՈՄԷՕ

Օրհնեալ, օրհնեալ գիշեր:
Ես վախենում եմ, գիշեր լինելով,
Որ այս բոլորը մի երազ լինի. (Անձայ)
Քանզի չէ կարող ալսքան անոյշ բան
Իրական լինել:

(Նորից դալիս է Զուլիէտ վերեւից):

ԶՈՒՀԼԻՀԸ

Միրելի Ռոմէօ, և բարի գիշեր:—
Թէ պատուալոր է սիրոյդ գիտումը,
Եւ նըպատակը ամուսնութիւն է՝
Վաղը ինձ լուր տուր, մի մարդու ձեռքով
Որ քեզ կուզարկեմ, թէ որտեղ և երբ
Մըտագիր ես դու ծէսը կատարել:
Եւ բոլոր բախտըս ոտքիդ կըդընեմ,
Եւ, տէր իմ, մինչև աշխարհիս ծալըը
Կըհետեւմ քեզ:

ԴԱՅԵԱԼ (Ներսից)

Տիկին:

ԶՈՒՀԼԻՀԸ

Գալիս եմ:—

Բայց եթէ երբէք միտքըդ բարի չէ՝
Սղաչում եմ քեզ... (Անձայ)

ԴԱՅԵԱԼ (Ներսից)

Տիկին:

ԶՈՒՀԼԻՀԸ եմ այս

Բոկոյն, եկալ:—

Որ դադարեցնես սիրաբանելըդ
Եւ ինձ լըքանես իմ ոըրտիս ցաւին:
Վաղը կուզարկեմ:

ԹՈՄԷՕ

Ալկան է հոգիս... (Անձայ)

ԶՈՒՀԼԻՀԸ

Դէհ, հազար անգամ քեզ բարի գիշեր:

(Գնում է):

ՐՈՒՄԷԾ

Օ՛Հ, հազար անգամ չար է գիշերը՝
Երբ զուրկ քո լուսից:

(Կամաց կամաց հեռանում է):

Սէրը դէպի սէր

Վազում է խուճապ՝ ինչպէս փախչում են
Աշակերտները իրանց գըրքերից:
Իսկ սէրը սէրից այնպէս է զատւում
Ինչպէս գընում են նոքա գըլիիկոր
Դէպի վարժարան:

(Կրկին գալիս է Զուլիէտ, վերեւից):

ՃՈՒԼԻՒԾ

Սս, Բոմէօ, սս!

Օ՛Հ, երանի թէ մի բազէպանի
Չայնն ունենալի, որ այս բազէին
Ես յետ կանչէի: Ստըրկութիւնը
Կերկերուած ձայն ունի, և անկարող է
Բարձրաձայն խօսել. թէ ոչ՝ կցընցէի
Այն քարանձաւը, ուր արձագանգը
Նիբհած է, և նրա օդալին ձայնը
Աւելի կերկերուած կըդարձնէի ես՝
Քան թէ իմ ձայնըս, իմ Բոմէօիս
Անունը կրկնելով:

ՐՈՒՄԷԾ

Ա՛խ, իմ հոգեակս է.

Որ կանչում է ինձ իմ անունովս:
Ինչ արծաթաձայն հընչում է անոյշ
Գիշեր ժամանակ սիրուհու ձայնը.—
Որպէս քաղցրակուր երաժըշտութիւն
Ուշադիր ականջին:

ՃՈՒԼԻՒԾ

Բոմէօ:

ՐՈՒՄԷԾ

Հոգիս:

ՃՈՒԼԻՒԾ

Վաղը որ ժամին ուզարկեմ քեզ մօտ:

ՐՈՒՄԷԾ

Իններորդ ժամին:

ՃՈՒԼԻՒԾ

Ես չեմ մոռանալ.

Քըսան տարի է մինչեւ այն ժամը:—

Մոռացալ թէ քեզ ինչն կանչեցի:

ՐՈՒՄԷԾ

Թող կանգնեմ այստեղ՝ մինչեւ միտ բերես:

ՃՈՒԼԻՒԾ

Ես կըմոռանամ, որ դու շարունակ
Կանգնած մնաս այստեղ, յիշելով միայն
Ո՛րքան քաղցը է ինձ ներկայութիւնըդ:

ՐՈՒՄԷԾ

Ես էլ շարունակ կանգնած կըմընամ՝
Որ դու շարունակ մոռացած մընաս.
Եւ կըմոռանամ, թէ սորանից զատ
Ուրիշ տուն ունիմ:

ՃՈՒԼԻՒԾ

Լոյսը բացւում է. ուզում եմ գընաս,
Բայց ոչ աւելի հեռու թըռչըտես՝
Քան թէ խաղասէր մանուկի թռչնակը,
Որ թոյլ է տալիս նորան ոստոստել
Իր ձեռքից քիչ հեռու, որպէս խեղճ բանտարկեալ,
Կապած կաշկանդած իր զպիթաներով.
Եւ նըրան կըրկն իր մօտ է քարշում
Մետաքսեալ թելով, այնքան նախանձոտ
Նրա ազատութեան:

ԶՈՒՀԻՒՅՑ

Հոգիս, երանի:

Բայց շատ գըգուելով կըսպանէի քեզ:—
Ա՛խ, քարի գիշեր: Այնքան անոյշ վիշտ է
Մեր բաժանումը՝ որ քարի գիշեր»
Կասեմ ես մինչև առաւօտ լինի:

(Գնում է)

ՌՈՒՄԵՐ

Նինջ գալ աչքերիդ, և հանգիստ՝ լանջիդ:
Երնէկ ես հանգիստ և նինջ լինէի,
Որ ալդչափ անոյշ մի տեղ հանգչէի:
Դընամ հոգեսոր իմ հօրըս խուցը,
Որ հայցեմ նորա աջակցութիւնը
Եւ պատմեմ բախտիս իմ պատմութիւնը:
(Գորս է գնում)

ՏԵՍԱՐԱԿ

Մի մենաստան.

Առնում է ՀԱՅՐ ԼՈՒԿԱՆՈ, մի զամբիւդ ձեռքին:

ՀԱՅՐ ԼՈՒԿԱՆՈ

Գորշաշեալ արփին ժըպտում է գէմքին
Խոժոռ գիշերի,
Լոյսի շերտերով գոյն գոյն ներկելով
Հոյլը ամալերի.
Խատուտ խաւարը գինովի նըման
Ալժմ երերում է,
Տիտանի կառքի լուսեղէն շաւղից
Նա խոտորում է:

Նախ քան արևը իր կիզող աչքով
Կեանք տայ ցերեկուան,
Եւ ճաճանչներով ըմակէ խոնաւիկ
Յօղը գիշերուան՝
Ես պէտք է լըցնեմ ալս մեր զամբիւդը
Պէսպէս բոյսերով,
Եւ ծաղիկներով հեւթեղ թանկագին,
Ժահրոտ խոտերով:
Ալս մեր երկիրը, որ մալըն է բնութեան՝
Է՛ և դամբանը.
Ծընող արգանդը՝ իր զաւակների
Է՛ գերեզմանը:
Նորա արգանդից ծընում ելնում են
Պէսպէս զաւակներ,
Եւ իր մալըական կըրծքից ծընում են
Ամեն տեսակներ:
Շատերըն ունին շատ յատկութիւններ,
Ոլժեր զանազան,
Ամեն մէկն ունի իր արժանիքը,
Ամենքն այլազան:
Ինչպէս անբաւ է այն զօղութիւնը,
Որ կայ տունկերում,
Խոտ ու բոյսերի, քար ու ժայռերի
Ցատկութիւններում.
Չըկալ ոչ մի բան, այնքան աննըշան
Երկրի երեսին՝
Որ մի տռանձին օգուտ չընծալէ
Մեր հողագլնտին.
Ոչ էլ այնքան լաւ, որ իր կոչումից
Բըռնի շեղուելով՝
Ըմբոսա չըդառնալ իր ծագումի գէմ,
Եղծում զառնալով:
Ազնըւութիւնը վատ գործածուելով
Վատթարանում է.

Եւ մոլութիւնը գործով երբեմըն
Աղնըւանում է:
Այս քընքոյշ ծաղկի մանուկ բաժակում
Հաստատած ունի
Թոյնը իր բոյնը, դեղը իր տեղը,
Երկուսն էլ գաղտնի:
Եթէ հոտ առնես՝ կըզրւարթացնէ
Նա մարդուս հոգին.
Եթէ ճաշակես՝ մահ կըտալ բոլոր
Ըզգայաբանքին:
Երկու ալսպիսի անհաշտ ոսոխներ
Մըղում են պայքար,
Թէ մարդու սըրտում, թէ տունկերի մէջ,
Միշտ և անդադար:
Առաքինութիւն և կամք անհամբոյր՝
Են միշտ միասին.
Երբ չարը յաղթէ՝ մահուան թըրթուրը
Կուտէ այդ բոյսին:

ՐՈՒՄԷՕ

Բարի լոյս, հալը սուրբ:

ՀԱՅԻ ԼՈՐԷՆՍ

Աստուած քեզ օրհնէ:
Ինչ ձախն վաղորդեան այսչափ քաղցրալուր
Ինձ ողջունում է:
Դեռահաս որդիս, դա ցոյց է տալիս
Մի սիրտ խանգարուած,
Երբ այսքան կանուխ է իր անկողնից
Մի մարդ հրաժարուած:
Միշտ ցաւ ու հոգսը ծերուկի աչքում
Հըսկում է արթուն.
Ուր ցաւ ու հոգսը տուն է հաստատում
Այնտեղ չըկալ քուն.

Բայց ուր որ առողջ պատանութիւնը
Կայտառ և ուժեղ
Ընկողմանում է՝ ոսկեղէն նինջը
Տիրում է այնտեղ:
Ուրեմըն այդքան քո վաղ գարթնելուց
Այնպէս է թըրտում,
Որ զարթեցրել է քեզ մի հոգեկան
Սաստիկ վըրդովում:
Կամ, թէ այդպէս չէ՝ ուրեմըն այս է,—
Ես լաւ եմ գըտել,—
Չէ մեր Ռոմէօն բընաւ այս գիշեր
Անկողին մըտել:

ՐՈՒՄԷՕ

Վերջինը ճիշդ է. բայց իմ հանգիստը
Քընից անուշ էր:
ՀԱՅԻ ԼՈՐԷՆՍ
Մեղալ քեզ, Տէր իմ. Ռոզալինի՞ մօտ
Էիր այս գիշեր:

ՐՈՒՄԷՕ

Ռոզալինի մօտ. օհ, ամենաին,
Հայր իմ հոգեսոր.
Ես մոռացել եմ թէ այդ անունը,
Թէ ցաւեր բոլոր՝
Որ այդ անունին
Յարակից էին:
ՀԱՅԻ ԼՈՐԷՆՍ

Լաւ, օրհնեալ լինիս, ուրեմըն որտեղ
Քընացել էիր:

ՐՈՒՄԷՕ

Ես քեզ կըպատմեմ՝ նախ քան գու կըրկին
Ինձ հարց անէիր:

Գընացել էի ես մի խընջուքի
Իմ թշնամուս հետ.
Եւ լանկարծ այնտեղ մէկը արձակեց
Իմ սըրտիս մի նետ.
Նա ինձ վէրք տըւաւ, բայց և վէրք առաւ:
Այժմ մեզ համար
Քո օգնութիւնից և քո սուրբ դեղից
Հսպասում ենք ճար:
Տեսնում ես, սուրբ մարդ. ես ատելութիւն
Չունիմ իմ սըրտում.
Թէ ինձ համար եմ, թէ իմ թշնամուս
Քո մօտ միջնորդում:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Թէ՛, անկեղծ խօսիր, որդեակ սիրելի,
Ասա ով էր այն:
Երկմիտ խոստովանք՝ երկմիտ թողութեան
Է արժան միայն:
ՌՈՄԷՕ
Ուրեմն իմացէք, որ Կապիւլէտի
Չըքնաղ աղջըկան
Տըւել եմ սիրտըս. նա ինձ է սիրել
Ինչպէս ես՝ նըրան:
Ամեն ինչ արդէն զուգուած է մեր մէջ,
Բայց միայն հէնց այն
Որ ինքը պէտք է զուգես՝ կապերով
Սուրբ տմուսնութեան:
Թէ երբ, ուր, ինչպէս մենք իրար տեսանք,
Սիրաբանեցինք և նըրանուեցանք՝
Այդ ճանապարհին ես ձեզ կըպատմեմ:
Բայց նախ և առաջ ես ձեզ կաղաչեմ,
Որ ալսօր և եթ տաք մեզ օրհնութիւն
Եւ ալսօր լինի մեր ամուսնութիւն:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ
Սուրբ Փրանսուա, ինչ է, ինչ փոփոխութիւն
Յանկարծ պատահեց,
Որ Ռողալինը, այնքան սիրածը
Այսպէս մոռացուեց:
Զահելի սէրը չէ իր սըրտի մէջ,
Այլ իր աչքերում:
Տէր Աստուած, որքան աղի արտասուք
Էիր դու թորում.
Ո՞րչափ լըւացիր թըշերըդ վըտիտ՝
Ցօղելու մի սէր,
Որ այժմ ալեւըս իր նախկին բոլից
Ոչինչ չէ պահեր:
Դեռ չէ արևը ջընջել երկընքից
Հառաչանքներըդ,
Դեռ զօղանջում են ծեր ականջներիս
Հին հեծծանքներըդ.
Ահա տեսնում եմ, քո թըշիդ վրայ
Տըպաւորուած է
Դեռեւս մի բիծ, որ մի հին արցունք
Այնտեղ թողած է:
Թէ այն դու էիր, և քոնըդ էին
Այն մարմաջները՝
Թու Ռողալինին էիր նըրելին
Այն հառաչները:
Ա՛յդքան ես փոխուելո ձայնակցիր ապա
Եւ դու այս խօսքին,
Որ կանալք կարեն վրիպել՝ երբ մարդիկ
Այդքան ոլժ չունին:
ՌՈՄԷՕ
Պուշատ անգամներ, հայր իմ հոգեոր,
Ինձ կըշտամբել ես,

Եւ Ոռղալինին սիրելուս համար

ինձ նախատել ես:

ՀԱՅՐ ՀՈՐԷՆՍ

Ոչ թէ սիրելուդ, —պաշտելուդ համար

իին խօսքերըս:

ԻՌՄԵՒԾ

Ինձ ասում էիր, որ պէտք է զանամ

Թաղել իմ սէրս:

ՀԱՅՐ ՀՈՐԷՆՍ

Ոչ թէ մէկ սէրը գերեզման դընել՝

Մի այլը հանել:

ԻՌՄԵՒԾ

Մի կշտամբեր ինձ. այժմ սիրածըս

Ալնպէս չէ անում. —

Սիրոյ տեղ նա սէր, շնորհի տեղ շընորհ

է հատուցանում.

Միւսը այսպէս չէր:

ՀԱՅՐ ՀՈՐԷՆՍ

Օ՛հ, նա լաւ գիտէր,

Որ քո այն սէրը

Կարդում էր անգիր՝ նախ քան գիտենար

Հեղել բառերը: —

Բայց եկ, դեռահաս թափառաշըրջիկ,

Պէտք է օգնեմ քեզ.

Մի պատճառ միայն ինձ ըստիպում է

Որ սատարեմ քեզ:

Գուցէ արդիւնքը բարի կըլինի

Այս խրնամութեան,

Եւ նա վերջ կըտալ ձեր ընտանեկան

Հին թշնամութեան:

ԻՌՄԵՒԾ

Օ՛հ, գնանք այստեղից. ես ըշտապում եմ.

Շուտ արա, արի:

ՀԱՅՐ ՀՈՐԷՆՍ

Դանդաղ և խոհեմ: Արագ վազողը

Կըդիպչի քարի:

ՏԵՍԱՐԱԿԻ Դ.

Փողոց.

Մանում են ԲԵՆՎՈԼԻՅ և ՄԵՐԿՈՒՏԻՅ.

ՄԵՐԿՈՒԻԺԻՅ

Ո՞ր գժոխքն է գնացել այս Ռոմէօն: —ՄՔթէ այս գի-
շեր տուն չէ եկել:

ԲԵՆՎՈԼԻՅ

Ոչ եր հօր տունը. ես խօսեցի նորա ծառալի հետ:

ՄԵՐԿՈՒԻԺԻՅ

Օ՛հ, այն կարծրասիրտ գունատ աղջիկը,

Այն Ոռղալինը, այնքան տանջում է

Զարչարում նըրան, որ նա կըգրժուի:

ԲԵՆՎՈԼԻՅ

Ծեր կապիւլէտի ազգական Տիբալտը

Նամակ է ուղարկել նըրա հօր տունը:

ՄԵՐԿՈՒԻԺԻՅ

Օ՛հ, արևս վկալ, մենամարտի հրաւեր պէտք է լինի:

ԲԵՆՎՈԼԻՈ

ՌՈՄԷՕՆ ԿԱՊԱՏԱՍԽԱՆԷ ԴՊՐԱՆ:

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Ամեն մարդ որ գըել գիտէ՝ կարող է պատասխանել մի
նամակի:

ԲԵՆՎՈԼԻՈ

Ո՞չ, նա կապատասխանէ նամակ գրողին՝ սպառնալիքի
դէմ սպառնալիքով:

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Աւազ, խեղճ Ռոմէօ. նա արդէն մեռած է, մի սպի-
տակ աղջկայ սև աչքից դաշոյնահար, մի սիրային երգով
ականջից նետահար եղած. նորա սրտի ճիշդ մէջ տեղը
խոցուած է կոր աղեղնաձիգ տղայի սլաքից: Միթէ այդ
տեսակ մարդը կարող է Տիբալտի հետ կրուի դուրս գալ:

ԲԵՆՎՈԼԻՈ

Վահ, միթէ Տիբալտը ի՞նչ է:

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Ինչ է. աւելի է, քան թէ կատուների մի իշխան *),
հաւատացէք: Օ՛, նա կոմպլիմէնտների քաջասիրտ հարիւ-
րապետն է. նա մենամարտում է՝ ինչպէս դուք մի ձայնա-
գրած երդ էք երգում. կանոնաւոր կերպով պահում է չա-
փը, ժամանակը և համեմատութիւնը, պահում է ամենա-
փոքրիկ դադարը. մէկ, երկու, —և երրորդը ձեր կրծքի մէջ է:
Մետաքսէ կոճակների կատարեալ սպանդագործ. մի դուէլ-
լիստ, մի դուէլլիստ. ամենաառաջին տնից մի ճէնտելմէն,

*.) Այս համուածը հասկանալու համար պէտք է գիտենար, որ
«Աղուէս» անունով մի անդիմական հին հէքեաթի մէջ կատուների
իշխանը, շատ երկշու և զգուշ Տիբալտ կամ Տիբերտ է անուանուած:
Ծան. Ֆ. Վ. Հիւգով:

առաջին կամ Երկրորդ պատճառը լաւ իմացող *): — Ա՛Հ,
այն անմահ պետքադն, այն պունտօ ուելիրսօն, այն «ՀԷՂ-ը»:

ԲԵՆՎՈԼԻՅ

Այն ի՞նչը:

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Ա՛Հ, գրողը տանի այս խենթ ու խելառ թոթովախօս,
Ճեքծեքուղ սեթևեթներին, այս նոր շեշտով խօսողներին:
(Զայնը փոխելով) — «Տէր Աստուած, ի՞նչ սքանչելի սուր խալա-
ցնող, —ի՞նչ բարձրահասակ մարդ. — ի՞նչ գեղեցիկ պոռնիկ»: —
Վահ, պապիկ, ցաւալի չէ այս, որ մենք շարունակ պէտք է
տանջուինք այս օտարերկրեալ մոծակներից, այս «pardon-
ne» տօւներից, որոնք այնքան թունդ կպել են նոր մո-
դալին, որ մինչև անգամ չեն կարող հանգիստ նստել մեր
նստարանների վերալ: Օ՛Հ, սորանց բոները, բոները **):

(Մտնում է Ռոմէօ):

ԲԵՆՎՈԼԻՅ

Ահա Ռոմէօն, ահա Ռոմէօն:

ՄԵՐԿՈՒԻԺԻՕ

Առանց ձկնկիթի, մի չորացրած հէրինգի նման: — Օ՛Հ,
միս, միս, ի՞նչպէս ես ձկնացել: Հիմա նա էլ կասէ այն
ոտանաւորներից, որոնք այնքան առատ բղխում էին Պետ-
րարքի բերանից: Լառւան բաղդատելով սորա սիրուհու հետ՝
մի խոհանոցի աղջիկ է եղել. բայց ես իմ հոգիս, նորա սի-
րականը աւելի լաւ բանաստեղծութիւններ է նուիրել սի-
րուհուն. Պիգոնը՝ մի փողոցալին կնիկ է եղել. Կլէոպա-
տրան՝ մի գնչու. Հելէն և Հէրօ՝ պոռնիկներ և հարճեր. Թիս-
բէն՝ մի գորշ աչք, մի ալբակո բան, բայց ոչ ինչ որ պէտք

*) Ակախքն մենամարտութեան արուեստին քաջ տեղեակ, որ
կարող է ասել, թէ որնէ առաջին պատճառը կամ մըն է երկրորդը,
որի համար մարդ պարտաւոր է մինամարտել:

Ծ. թ.

**) Ակախքն բօն-ժուռ, բօն-սուառ ասողները:

Ծ. թ.

Է:—Սինթօր Ռոմէօ, բօն-ժուռ. ահա քեզ մի ֆրանսիական
բարեւ քո ֆրանսիական վարտիքիդ: Դու երէկ գիշեր լաւ
խաղ խաղացիր մեր գլխին:

ՐՈՄԷՕ

Բարի լոյս երկուսիդ էլ: Ի՞նչ խաղ խաղացի:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Փախուստդ, պարոն, փախուստդ, չես հասկանում:

ՐՈՄԷՕ

Ներողութիւն, սիրելի Մերկուտիօ, հարկաւոր գործ ու-
նէի. և այն տեսակ պարագայում, ինչպէս ես էի մարդ կա-
րող է քաղաքավարութիւնից թեքուիլ:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Այդ նշանակում է, որ այն տեսակ պարագայում, որ-
պէս դու էիր՝ մարդ պարտաւոր է ծունկը թեքել:

ՐՈՄԷՕ

Ալսինքն, մեծարանք անելու համար:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Ճիշտ դիպար, շնորհակալ եմ:

ՐՈՄԷՕ

Մի շատ քաղաքավարի մեկնութիւն է:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Իմացիր, ես քաղաքավարութեան մեխակն եմ:

ՐՈՄԷՕ

Մեխակ, ալսինքն ծաղիկը:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Ճիշտ:

ՐՈՄԷՕ

Լաւ, ուրեմն իմ կօշիկս լաւ ծաղկել է ^{*)}:

^{*)} Ալսինքն լաւ մեխակի գոյն է:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Լաւ ասացիր. հիմա ալնքան հետապնդիր ալդ կատա-
կին՝ մինչև որ կօշիկներդ մաշուին. այնպէս որ, երբ բարակ
տակը մաշուի, կատակդ մնալ անկօշիկ:

ՐՈՄԷՕ

Օ՛չ, տակը ծակ կատակ, իր բոքկութեամբ միայն նը-
շանաւոր:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Եկ ինձ օգնիր, բարի բենզոլիօ. իմ սրամտութիւնս ու-
ժամապան է եղել:

ՐՈՄԷՕ

Խթիր ու մտրակիր, խթիր ու մտրակիր. եթէ ոչ ես
յաղթութիւն կպուամ:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Բահ, եթէ քո սրամտութիւնդ վայրենի սագ որսա-
լու համար է վազում՝ ես յաղթուած եմ, որովհետեւ քո
ունակութեանցդ մէկի մէջ աւելի շատ վայրի սագ ^{*)} կաէ
քան թէ իմ հինգի մէջ. միթէ ես էլ քեզ հետ էի սագ
որսալիս:

ՐՈՄԷՕ

Եթէ սագ որսալիս ինձի հետ չէիր՝ ուրեմն երբէք չես
եղել:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Ես ալդ կատակիդ համար պէտք է ականջդ կծեմ:

ՐՈՄԷՕ

Ո՛չ, բարի սագ, մի կծեր:

ՄԵՐԿՈՒԽԻԾԻՕ

Քո միտքդ մի շատ թթու ինձոր է, շատ թունդ
սօս է:

^{*)} Սագը անգլիերէնում վամարին են ասում:

ՐՈՄԷԾՈ

ՄՔԹԵ քաղցր սագը համեմելու համար թունդ մօս չէ
Հարկաւոր:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Քո միտք հիմա այծի կաշու նման է, որ մի մատ
նեղութիւնից կարող է մի կանգուն լայնութեան հասնել:

ՐՈՄԷԾՈ

Եւ հենց այդ լայն բառի համար եմ խելքս լայնա-
ցնում, որ աւելանալով սագի վերալ՝ կլինի մի լայն սագ,
ինչպէս որ դու հռչակուած ես ամբողջ աշխարհում:
(Նորա ծիծաղում են):

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Լաւ, միթե այս աւելի լաւ չէ, քան թէ նստել սիրոյ
համար հեծեծել: Հիմա դու ընկերութեան մարդ ես. Հիմա
դու Ռոմէօն ես. Հիմա դու այն ես՝ ինչ որ կաս, թէ արուես-
տով, թէ բնութեամբ: Այդ խելքաբար սէրը նման է մի
մեծ տխմարի, որ լեզուն դուրս ձգած վազում է վեր ու
վար, իր ցուպը^{*)} մի ծակ խրելու համար:

Այդտեղ կանգ առ, այդտեղ կանգ առ:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Դու կամենում ես, որ ես կանգ առնեմ իմ պատմու-
թեան մէջ մի մազի դէմ:

ԲԵՆՎՈԼԻՅՈ

Պախենում եմ, որ պատմութիւնդ շատ երկարես:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Օ՛, սխալւում ես. ես ուզում էի կարճացնել, որովհե-
տեւ ես հասել էի իմ պատմութեան բոլոր խորութեանը, և
միտք ունէի, հաւատա, աւելի երկար ժամանակ չըռնել
իմ տեղը:

^{*)} Ցուպը խորիս ատակների պարագաներից մէկն է:

ՐՈՄԷԾՈ

Այդ լաւ խօսք է:

(Մտնում եմ Դայեակը եւ Պետրոս):
Այժմ սիմբուլ առեղու ամենու պահանջ այ
դաստիարակ բնուր և բայց ու այ յան նմի չ բայց
Մի առագաստ, մի առագաստ:

ԲԵՆՎՈԼԻՅՈ

Երկու առագաստ, — մի վարտիք և մի եռապկա^{*)}:

ԴԱՅԵԱԿ

ՊԵՏՐՈՍ: Պատմեն սիմբուլ զան ու ու պահանջ
ՊԵՏՐՈՍ

Ի՞նչ է:

ԴԱՅԵԱԿ

ՀՈՎԱՀԱՐՍ, ՊԵՏՐՈՍ:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Տուր նորան, բարի ՊԵՏՐՈՍ, որ դէմքը ծածկէ, որով-
հետեւ հովահարը նորա դէմքից սիրուն է:

ԴԱՅԵԱԿ

Բարի լոյս ձեզ, պարոններ:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Բարի իրիկուն ձեզ, գեղեցիկ տիկին:

ԴԱՅԵԱԿ

ՄՔԹԵ հիմա բարի իրիկուն է:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕ

Այս, հաւատացէք. որովհետեւ արևի ժամացոյցի լիրը
ձեռքը հիմա շեշտ կանգնած է կէսօրուալ մէջ տեղին:

ԴԱՅԵԱԿ

Գրողը քեզ տանի. ի՞նչ տեսակ մարդ ես:

ՐՈՄԷԾՈ

Մի մարդ է, տիկին, որ Աստուած ստեղծել է, ինքն
իրան նախատինք անելու համար:

^{*)} Աւոխնքն, մի մարդ և մի կին:

ԴԱՅԵՍԱԿ

Իմ արև, լաւ ասացիր.—ինքն իրան նախատինք անելու համար, այնպէս չէ:—Պարոններ, արդեօք ձեզնից մէկը կարող է ինձ ասել, թէ ուր կարող եմ գտնել երիտասարդ Ռոմէօլին:

ՐՈՄԷՒԾՈ

Ես կարող եմ ասել. բայց երիտասարդ Ռոմէօն աւելի կլինի երբ որ նրան գտնես՝ քան թէ էր, երբ սկսար նրան որոնել: Ես եմ այդ անունը կրողներից ամենաերիտասարդը, ի չգոյէ վատագոյնին:

ԴԱՅԵՍԱԿ

Նատ լաւ:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Մէթէ. ուրեմն վատագոյնը շատ լաւ է, շատ լաւ ես նկատում, ես իմ հոգիս. խելացութիւն է, խելացութիւն:

ԴԱՅԵՍԱԿ

Եթէ դուք էք, պարոն, ես ուզում եմ ձեզ հետ առանձին խօսել:

ԲԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Հնթրիքի է հրաւիրելու:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Կաւատ է, կաւատ. սօ հօ *):

ՐՈՄԷՒԾՈ

Ի՞նչ որս ես գտել:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Նապաստակ չէ, պարոն. կամ գուցէ մի նապաստակ է, մի պասուալ խմորեղէնի մէջ. փտած և բորբոսնած նախ քան պրծնելլ:

*) Որսորդները նապաստակ գտնելիս այդ ձախն էին հանում,

Փրտած, բորբոսնած
Մի պառաւ ճագար
Մի լաւ կերակուր
է պասուայ համար:
Բայց մի հին ճագար
Երկար է տևել,
Թէ չըվերջացած
Հոտել է փրտել:

Ռոմէօ, չէս գտլիս հօրդ տունը. մենք գնում ենք
այնտեղ ընթրիքին:

ՐՈՄԷՒԾՈ

Ես կգամ ձեր ետևից:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ (Ողջունելով դայեսակին)

Մնաք բարով, պառաւ տիկին. մնաք բարով, տիկին,
տիկին, տիկին *):

(Մերկուտիո և Բենվոլիո դուրս են գնում):

ԴԱՅԵՍԱԿ

Ասացէք ինդրեմ, պարոն, ով էր այս անտմօթ չար-
չին **), որ այսքան լի էր լրբութիւններով:

ՐՈՄԷՒԾՈ

Մի ազնուական է, դայեակ, որ սիրում է ինքն իր ա-
սածին ականջ դնել. և աւելի կարող է խօսել մի ըստէի
մէջ՝ քան թէ լսել մի ամսուալ մէջ:

ԴԱՅԵՍԱԿ

Եթէ երբէք մի քան ասէ իմ դէմ՝ ես նորան ցոյց կը
տամ... որքան էլ աւելի ուժով լինի քան թէ է, և քսան

*) Մի հին երգի լանգերդն է եղած.

**) Անզիերէնի մէջ merchant—վաճառական, զետաքրքիր է
նկատել, որ ազդ ժամանակ վաճառական բառը անարգական միտք
է ունեցել, հակադրութեամբ ձէնտելմէնի. Մենք լարմար դատեղինք
թարգմանել «չարչի» գտւառական բառով, որ մեր մէջ վատ նշա-
նակութիւն ունի.

հատ ալդ տեսակ թեթևաօլիկների։ Եթէ ես ինքս չըկարողանամ՝ ես մարդ կդժնեմ որ կարողանայ։ Թըշուառական անպիտան։ Ես նորա կարծած խունջիկ-մունջիկներից չեմ. Ես նորա լիրք ընկերուհիներից չեմ։ — (Պետրոսին) Իսկ դու կանգնել ես հանգարտ և թոյլ ես տալիս, որ ամեն սրիկավի ինչպէս կուզէ այնպէս վարուի։

ՊՆՄՐԴՈՒ

Ես ոչ ոքի չեմ տեսել, որ իր ուզածի պէս ձեզ հետ վարուած լինի. եթէ տեսած լինէի՝ սուրս իսկոյն դուրս կդար, հաւատացէք։ Ես ամեն մարդուց շուտ սուրբս դուրս կդաշեմ։ Եթէ տեսնեմ մի կարգին կոռուի տեղիք կայ, և օրէնքը իմ կողմն է։

ՊԱՅԵԱԿ

Աստուած վկալ, ես այնպէս բարկացած եմ, որ բոլոր անդամներս դողում են։ Շուն, շան որդի։ — Խնդրեմ, պարոն, մի բառ ունիմ ձեզ ասելու. ինչպէս ասացի ձեզ՝ իմ մանկահասակ տիրուհիս ինձ հրամայել է գալ ձեզ գտնել. ինչ որ նա ինձ հրամայել է ձեզ ասել՝ ես կպահեմ ինձ էք նրան տանել լիմարների դրախտը, ինչպէս ասում են՝ քա ձեր կողմից մեծ կոպտութիւն կլինէր, ինչպէս ասում գա ձեր կողմից մեծ կոպտութիւն կլինէր, ինչպէս ասում որովհետեւ օրիորդը մանկահասակ է, և եթէ դուք նույն. որովհետեւ օրիորդը մանկահասակ է, և եթէ դուք նույն հետ երկուերեսանի վարուեք՝ դա շատ վատ բան կը լինէր մի օրիորդի համար, և շատ ստոր մի դորձ։

ԲՈՂՄՀՈ

Դալեակ, լանձնարարիր ինձ քո տիկնոջ և տիրուհուդ մօտ։ Ես երդւում եմ քեզ…

ՊԱՅԵԱԿ

Ս.զնիւ սիրտ, հոգիս վըկալ, ես ալդ կասեմ նորան։ Տէ՛ր Աստուած, ինչքան կուրախանայ։

ԲՈՂՄՀՈ

Ի՞նչ կասես նորան, դալեակ. դու ինձ չես լսում։

ՊԱՅԵԱԿ

Ես նորան կասեմ, որ գուք երդւում էք, որ իմ կարծիքով մի ազնուավալել գործ է։ վաճառ վաճառ

ԲՈՂՄՀՈ

Դու նորան ասա՝ մի միջոց գըտնէ, Որ կէս օրից յետ գայ խոստովանքի, այդ եղբայր Լորէնսի խուցի մէջ. այնտեղը կըխոստովանի և կտմուսնանայ։ Ահա այս էլ քեզ նեղութեանդ համար։ (Մի բակ է տալիս նորան).

ՊԱՅԵԱԿ

Ո՞չ, տէր իմ. ճշմարիտ. ոչ մի դահեկան։

ԲՈՂՄՀՈ

Առ քեզ ասում եմ։ ՊԱՅԵԱԿ (Բասկը առնելով) Այս կէսօրից յետ։ Լաւ, այնտեղ կինի։ Միանձնէ դու ժողով ըստ ԲՈՂՄՀՕ ըստից մասն մեզզն ոչ աւագ զանուն անուն և Երանել, քարի դաշտում, ուստի զարդարակ, ունք սերի Գուշի կլ կըսպասես վաճքի պատի տակ. Սի գաղտնական հաւատաց մասն անուն է Սի ժամից յետոյ ըսպասաւորը և եւս անուն Քեզ մօտ կըսինի, և քեզ կըսերէ վեն և (ա զայդ Պարանէ սանդուխք, որ պէտք է լինի Կայմաշըւանը, մըթին գիշերում, այս Դէպ իմ ցընծութեան բարձրագոյն կալմը։ Այս Դէպ կէհ, գընաս բարով. հաւատարիմ եղիր, Ես կըվարձատրեմ քո նեղութիւնը։ Գնաս բարով. տիրուհուդ լանձնարարիր ինձ։

ՊԱՅԵԱԿ

Երկնալին տէրը օրհնէ ձեզ, պարոն։ Բայց, լըսեցէք ինձ։

ՐՈՄՇՅՈ

Ի՞նչ ունիս ասելու,

Սիրելի դայեակ:

ԴԱՅԵԱԿ

Արդեօք ձեր ծառան:

Գաղտնապահ՝ մարդ է: ԶԵՔ լըսել միթէ,
Որ երկու հոգի գաղտնիք կըպահեն:
Երբ մէկը դուրս թողուի:

ՐՈՄՇՅՈ

Միամիտ կաց. իմ ծառաս պողովատի պէս հաւատա-
րիմ է:

ԴԱՅԵԱԿ

Լաւ, պարոն. իմ տիրուհիս ամենից անուշիկ օրիորդն է,
որ... ՏԷՐ Աստուած, ՏԷՐ Աստուած. երբ նա մի պատիկ
շաղակատ բան էր... Օ՛հ, մի ազնուական կայ քաղաքում,
Պարիս անունվ, որ շատ է ցանկանում նրան իր ճանկը
ձգել... Բայց իմ տիրուհիս, ախ, հոգիս, նա ուրախ է որ
մի գորտ տեսնէ, մի ճշմարիտ գորտ, և նրան չտեսնէ:
Ես երեխն նրան բարկացնում եմ ասելով, որ Պարիսը ամե-
նից աւելի յարմար մարդն է նորա համար. բայց, հաւա-
տացէք, երբ ես այդ բանն ասում եմ՝ նա այնպէս գու-
նատում է, ինչպէս աման լուալու լաթ: Միթէ Ռոմա-
րէնը *) և Ռոմէօն երկուսն էլ նոյն տառով չե՞ն սկսում:

ՐՈՄՇՅՈ

Այն, դայեակ. բայց ի՞նչ միտք ունի. երկուսն էլ «Թ»-ով
են սկսում:

ԴԱՅԵԱԿ

Ա՛հ, ծաղրաբան. դա շան անուն է. «Թ»-էն շան հա-
մար է **): Ոչ, ես գիտեմ, մի ուրիշ տառով է սկսում: Իմ

*) Ռոմարէն—ինկունի, փշատակի նշանակ էր:

**) Միջն դարու մէջ, «Թ» բաղաձանը կոչւում էր շան տառը,
որովհետև նորա հնչինը նման է շան մոււալուն:

Ծան. Ֆ. Վ. Հիւգովի:

տիրուհիս այնքան սիրուն ոտանաւորներ է շինել ձեր և
Ռոմարէնի վերայ, որ եթէ լսէք՝ խելքերդ կգնայ:

ՐՈՄՇՅՈ

Յանձնարարիր ինձ քո տիրուհուդ: Իրա՞ մաս
ԴԱՅԵԱԿ

Աչքիս վերայ հազար անգամ: —Պետրոս: (Բուժօ դուրս է գնում):

ՊԵՏՐՈՎ

Ի՞նչ է: պարագան սակա ևս պարագան ամ
ԴԱՅԵԱԿ

Պետրոս, առաջիմ հովահարս, և առջեկց գնա: (Պուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ

Կապիլէտի պարտէզը.

Մտնում է ԶՈՒՒԵՏ:

ԶՈՒՀԻՒԵՏ

Երբ ուղարկեցի ես այն դայեակին՝
Իններորդ ժամը զարկում էր արդէն:

Նա ինձ խոստացաւ կէս ժամում լետ գալ.
Ո՞վ գիտէ, գուցէ չէ գըտել նըրան:

Բայց ոչ, այդպէս չէ. Կաղ է այդ կինը:

Պէտք էր որ սիրոյ սուրհանդակները
Խոհեր լինէին, բիւր անգամ արագ

Քան թէ արեգի ճառագալթները,
Որ փարատում են մոալ բըլուբներից
Մըթին ըստուերներ: Սորա համար է,

Ո՞ր արշաւասովը աղաւմիները մազմու ովհացիս
Ալծուած են լինում միշտ սիրոյ կառքին.
Սորա համար է, որ թեսեր ունի
Քան հողմը արագ այն կուպիդոնը: Հայութիւն
Հիմա արեւ հասել է արդէն
Այսօրուայ զենիթին, ինը ժամից
Մինչև տասներկու՝ կայ երեք երկար ժամ:
Եւ դեռ չէ եկել: Թէ նա ունենար
Զերմ ըզգացումներ, տաք կայտառ արիւն
Նա գընտակի չափ արագ կըսուրար.
Բառերս նըրան կըթւոցընէին
Ակրականիս մօտ. և նա մէկ բառով
Յետ կուղարկէր ինձ. բայց ծեր մարդիկը
Այսպէս են՝ կարծես մեռեալներ լինին,—
Դանդաղ, յամրաշարժ, կապարի նըման
Ծանը ու գունաթափ:

(Մտնում են Դայեակը եւ Պետրոս)

Աստուած իմ, գալիս է:—

Ո՞վ մեղըր դայեակ, ինչ լուր. տեսար նրան.
Ծառայիդ հեռացըրու:

ԴԱՅԵԱԿ

Պետրոս, դուրս գընա,

Սպասիր դըրան մօտ:

ԶՈՒԼԻԷՏ

Հիմա, իմ քաղցրիկ,
Անուշիկ դայեակ... Վահ, Տէր իմ Աստուած,
Խնչու ես արրտում: Եթէ լըրերըդ
Նոյն իսկ վատ լինին՝ դու ուրախ պատմիր.
Իսկ եթէ լաւ են՝ դու փըշացնում ես
Քաղցըր լըրերի երաժշտութիւնն,
Այդքան դառնադէմ նըւագելով այն:

Դժոյք ոյս շմարայիւն ԴԱՅԵԱԿ առև պիմակ ամբ
Ո՞րքան յոգնած եմ. թող մի շունչ առնեմ:
Վայ ինձ, ոսկըրներս ի՞նչքան են ցաւում.
Ո՞րքան եմ վազել:

ԶՈՒԼԻԷՏ

Ա՛ս, երանէ թէ

Դու ունենայիր իմ ոսկըրներս,
Ես՝ քո լըրերըդ: Լաւ է, խընդըում եմ,
Խօսիր, իմ բարի, բարի դայեակը:

Առ նորիդարս ԴԱՅԵԱԿ առաջ ար լու:

Ի՞նչ եսով լշտապում, մի քիչ համբերիր?

Զես տեսնում միթէ որ շընչասպառ եմ:

ԶՈՒԼԻԷՏ

Ի՞նչպէս ես շնչասպառ, որ դու շունչ ունիս

Ասելու համար, որ շընչասպառ ես:

Ցապարման համար քո պատրուակը՝

Աւելի երկար է քան պատմելիքը, աղիս զժմ

Որ պատըրուակով չես ուզում պատմել:

Քո բերած լուրըդ բարի է թէ վատ.

Դու ինձ այն ասա. ասա այս, կամ այն,

Եւ ես կըսպասեմ մանրամասներին:

Պոհացում տուր ինձ. լաւ լուր է թէ վատ:

ԴԱՅԵԱԿ

Լաւ, դուք շատ խեղճ ընտրութիւն էք արել. դուք
չգիտէք մի տղամարդ ընտրելու ձեւը: Բոմէօ, ոչ. նա ո-
չինչ. թէս դէմքը աւելի սիրուն է քան թէ որ և է այլ
մարդունը, այնու ամենալիւ սրունքը ամեն մարդու սրուն-
քից գեղեցիկ է. իսկ ձեռքը, իսկ ոտքը, իսկ մարմինը,—
թէս դըրանց վրայ շատ բան չկայ խօսելու, բայց ամեն
համեմատութիւնից բարձր են: Նա քաղաքավարութեան ծա-
ղիկ չէ, բայց, ես երաշխաւոր եմ, գառան պէս հեզ է:—

Գնա բանիդ, աղջի, Աստծուն ծառալիր:—Ի՞նչ, այս գիշեր
տունն էք ընթրել: ԶՈՒԼԻՀԵՑ

Ոչ, ոչ: Բայց այդ բոլորը ես արդէն գիտէի: Ի՞նչ է ա-
սում նա մեր ամուսնութեան մասին. դրանից ի՞նչ լուր:

ԴԱՅԵԱԿ

ՏԵՐ Աստուած, որքան գլուխը ցաւում է.
Ի՞նչ գլուխ ունիմ ես. այնպէս զարկում է,
Կարծես ուզում է քսան կըտոր լինել:
ՄԵԿ էլ՝ կըռնակըս. կըռնակըս, կըռնակըս.
Վայ դու չարասիրտ, որ ուղարկում ես
ՈՐ գընամ մեռնեմ վեր-վայր վագելով:

Իրաւ, ցաւում եմ այդքան տանջուելուդ:
Իմ քաղցրիկ, քաղցրիկ, քաղցրիկ դայեակըս,
Պատմիր, ի՞նչ ասաց իմ սիրականըս:

ԴԱՅԵԱԿ

ԶԵՐ սիրականը ասում է մի պարկեշտ, ազնիւ մարդու
պէս, և մի քաղաքափարի, բարի, գեղեցիկ, և, հաւատա-
ցնում եմ, առաքինի մարդու պէս:—Ո՛ւր է քո մայրդ:

Իմ մայրըս ուր է:—Վահ, նա տան մէջ է.
Ո՛ւր պէտք է լինէր:—Ի՞նչ տարօրինակ
Պատասխան է այդ.—«ԶԵՐ սիրականը
Ասում է մի պարկեշտ, ազնիւ մարդու պէս...»
Ո՛ւր է ձեր մալրը:»

ԴԱՅԵԱԿ

ԱՅՂՔԱՆ կրակոտ ես. բահ, չես ամաչում: Այդ
Այդ է սպեղանին, որ պէտք է գնէիլը մայր մէջ
Ցաւած ոսկրերիս. էլ այսուհետեւ
Գընա ինքըդ, տար քո պատգամները:

ԶՈՒԼԻՀԵՑ
Ի՞նչ խառնակութիւն: Խօսիր, ալ կընիկ,
Ռոմէօն ի՞նչ ասաց:

ԴԱՅԵԱԿ

Կարող ես այսօր
Խոստովանքի գնալ:

ԶՈՒԼԻՀԵՑ

Այո:

ԴԱՅԵԱԿ
Ուրեմըն
Վազիր դու գընա Հայր Լորէնսի մօտ.
Այնտեղ կըգտնես քեզ մի ամուսին,
Որ քեզ կին կառնէ: Ա՛հ, կայտառ արթւնդ
Գալիս է հիմա թըշերիդ վերայ:
Հէնց որ մի փոքրիկ լուր լըսես՝ իսկոյն
Վարդ կըներկըւին: Վազիր եկեղեցի,
Ես էլ գընում եմ մի ուրիշ կողմից,
Գտնել մի սանդուխք, որով սիրելիդ
Պէտք է մագրցի թըռչնակի բոյնը՝
Երբ որ մութ լինի: Ես եմ չարքաշը.
Ես չարքարում եմ որ դու վայելես:

Բայց շատ չի անցնիլ. նոյն իսկ այս գիշեր
Դու ինքըդ պէտք է կըրես քո բեռը:
Գընա, ուրեմըն, ես պէտք է ընթրեմ.
Իսկ դու ըշտապիր դէսի այն խուցը:

ԶՈՒԼԻՀԵՑ

Դէպի բարձրագոյն երջանկութիւնը:—
Իմ ազնիւ դայեակ, մնաս բարով...»

(Թուր են գնում):

ՏԵՍԱՐԱՆ 2.

Հայր Հորէնսի խուցը.

Մտնում են ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ և ՐՈՄԵՕ.

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Երնէկ երկինքը քաղցը աչքով հայի
 Այս սուրբ ծէսի վրայ. երնէկ ապագան
 Չըպարսաւէ մեզ ցաւ ու տրտմութեամբ:
 ՌՈՒՄԷՕ

Ամէն, ամէն:
 Բայց թող գայ ինչ ցաւ, ինչ վիշտ որ կուզէ.
 Նա զուգակըշիո չէ կարող լինել
 Այն երջանկութեան, որ մի կարճ ըոպէն
 Կտայ ինձ զուլիկտի ներկայութեան մէջ:
 Դու սուրբ բառերով կըցիր մեր ձեռքը.
 Սիրասպան մահը յետու թող գործէ
 Ինչ որ յանդրդնի: Ինձ համար բաւ է,
 Որ միայն նըրան իմըս անուանեմ:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Այսպիսի ըուռըն բերկութիւնները
 Բուռըն վերջ ունին. նոքա մեռնում են
 Յաղթանակի մէջ՝ որպէս հուր և վատօդ,
 Որ ըսպառում են հէնց մէկ համբորով:
 Քաղցրագոյն մեղրը սըրտի է զարկում
 Իր անուշութեամբ, և հէնց իր համով
 Նա ախորժակը ոչընչացնում է:
 Ուրեմըն սիրի չափաւոր կերպով.
 Յարատե սէրը այդպէս է լինում:

Ոչ խիստ սըրնթացը հասնում է կէտին,

Ոչ խիստ դանդաղը:

(Մտնում է Զուլիէտ):

Ահա օրիորդը:
 Օ՛, ամենակին այսքան թեթև ոտք
 Չի մաշիլ մալթը յաւիտենական:
 Սիրահարները կարող են հեծնել
 Այն ոստայնի վրայ, որ օրօրւում է
 Վառ ամառնալին խաղասէր շընչից,
 Եւ դեռ վար չընկնել. այնքան թեթև է
 Ունայնութիւնը:

ԶՈՒԼԻՀԻՑ

Բարի իրեկուն,

Իմ պատկառելի խոստովանահայր:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Ռոմէօն, դըստրիկ, մեր երկուսիս տեղ
 Քեզ յայտնելու է շնորհակալութիւն:

ԶՈՒԼԻՀԻՑ

Նոյնպէս ես նորան, հակառակ դէպքում
 Դա ի զուր կլինէր:

ՌՈՒՄԷՕ

Ա՞խ, Զուլիէտ,
 Թէ լի է չափը քո երջանկութեան
 Որպէս իմինքս, և եթէ կարող ես
 Աւելի ճարտար նըկարագրել այդ՝
 Ապա քո շընչով անոյշ գարձըրու
 Մերձակայ օդը. թող արտասանէ
 Քո քաղցրիկ ձայնիդ հարուստ մուզիկան
 Իդէալական այն երջանկութիւնն,
 Որ այս սիրալիր տեսակցութիւնը
 Բաշխում է երկուսիս, միմեանց միջոցաւ:

ԶՈՒՀԻԾ

Ոչ ըզգացումը, աւելի հարուստած չէ
Նիւթի մէջ քան խօսքի՝ էռոթեամբն է խրոխտ,
Ո՛չ զարդարանքով։ Մուրացիկ է նա,
Ով որ կարող է հաշուել իր ինչքը։
Բայց անկեղծ սէրըս այնքան է բարդուել,
Որ ես չեմ կարող կէսն անգամ հաշուել։

ՀԱՅՐ ԼՈՐԵՆՍ

Թէհ, եկէք ինձ հետ. մենք շուտ կ'աւարտենք։
Թէ ձեզ հաճոյ է մի մընաք մենակ,
Մինչև ձեզ զուգէ սուրբ եկեղեցին,
Մէկ մարմին շինէ։

(Դուրս են գնում)։

ՀԱՅՐ ԼՈՐԵՆՍ

Այս այսուհետ զան պայմանը մօխնէ
Ամպաւական և աղքանը ըստ

Ապրու յատին մասն ու սիրու

ՀԱՅՐ ԼՈՐԵՆՍ

Ամպաւական ու զան է այս ապրու
ու ըստ ամպաւական աղքանը պայմանը մօխնէ
Այս պայմանը զան իսկակ ու այս
աղքանը զան ու պայմանը մօխնէ
Ապրու յատին մասն ու սիրու ու
աղքանը զան ու պայմանը մօխնէ
Ապրու յատին մասն ու սիրու ու
աղքանը զան ու պայմանը մօխնէ

Հիմա ըմբուղ ու չո պահանջազառ պահանջանակ
Հայրապետություն է պարական

ՕՋՈՒՄԱՅ

ՀԱՅՐ ԼՈՐԵՆՍ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Կույզուշան մէջու փառ այս մասն չէ Տիկ առ
ըստուն առաջնորդ զան ու պահանջանակ ու պահ
ու չէ Տիկ սահման ու պահանջանակ ու պահ
ու չէ սահման ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
ու չէ պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
ու չէ պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
Ու ի փողոց ։

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մանում են ՄԵՐԿՈՒՏԻՒ, ԲԵՆՎՈԼԻՒ, մի ՄԱՆԿԱԿԻՒԿ և ԾԱՌԱՆԵՐ
ու պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
ու պահ Տիկ պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
ու պահ Տիկ պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
ու պահ Տիկ պահանջանակ ու պահ Տիկ պահանջանակ ու պահ
Ու ի փողոց ։

ԲԵՆՎՈԼԻՒ

Բարի ՄԵՐԿՈՒՏԻՒ, Խընդրեմ, եկ գընանք։
Օրը շատ տաք է, Կապիւլէտները
Բոլորը դուրսն են. թէ նրանց հանդիպենք՝
Չենք կարող խոյս տալ մի ընդհարումից։
Սյս տաք օրերում կատաղի կերպով
Եռում է արիւնք։

ՄԵՐԿՈՒՏԻՒ

Պու նման ես մի մարդու, որ երբ մտնում է մի գի-
նետուն՝ սուրը շպրտում է մի գրասեղանի վրայ և ասում։
«Աստուած ոչ անէ որ քեզ կարօտութիւն ունենամ»։ բայց
հէնց որ երկրորդ բաժակը ներգործում է՝ քաշում է սուրը
նոյն իսկ գինեվաճառի վրայ՝ երբ որ բնաւ տեղիք չկայ։

ԲԵՆՎՈԼԻՒ

Ե՞ս այդ մարդկանց նման։

ՄԵՐԿՈՒՏԻՒ

Լաւ է, լաւ է. դու այնչափ տաքութիւն ես՝ որչափ

Իտալիայի ամենից տաքգլուխները. ոչ ոք քեզանից աւելի
տրամադիր չէ բորբոքուելու:

ԲԵՆՎՈԼԻՕ

Ինչպէս:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Այո, եթէ քեզ նման երկու հոգի լինէին աշխարհում՝
շատ չէր անցնիլ որ ոչ մէկը չէր մնայ, որովհետև միմեանց
կսպանէին: Դու. գումարդու հետ կոիւ կբանաս, թէ ինչ է,
մօրուքի մէկ մազը քեզանից աւելի է կամ պակաս է: Դու
կոիւ կանես մի մարդու հետ, թէ ինչ է, կաղին է կոտ-
րում, այն միակ պատճառով, որ քո աչքերդ կաղնեգոյն են:
Ի՞նչ աչք, եթէ ոչ այդպիսին կարող էր կոռու պատրուակ
գտնել այդտեղ: Քո գլուխդ այնպէս լի է կոիւներով՝ որպէս
հաւկիթը լի է միջուկով. բայց և այնպէս՝ այնչափ դա-
տարկ է՝ որչափ մի փուք ձու, այնքան յաճախ ծեծուելով:
Դու մի մարդու հետ կոիւ սարքեցիր, թէ ինչ է, փողոցի
մէջ հազարել էր և հազարով զարթեցը քո շանդ, որ
արևէ տակ պառկած էր: Միթէ դու չէր, որ մի դերձակի
հետ կոիւ ունեցար, թէ ինչու է զատկից առաջ նոր կըր-
կնոց հագել, և մի ուրիշի հետ՝ որովհետև իր նոր կօշիկ-
ները հին ժապաւէնով էր կապել. և դեռ դու երես ունիս
իմ գլխիս քարոզ կարգալու, որ կոռուց հեռու կենամ:

ԲԵՆՎՈԼԻՕ

Եթէ ես քեզ չափ կոռւելու պատրաստ լինէի՛ ես իս
կեանքիս սեփականութիւնը կզիջանէի առաջին հանդիպո-
ղին՝ որ մի ժամ և մի քառորդ ապահովացնէր ինձ:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Ամբողջ սեփականութիւնը, օ սեփական լիմարութիւն:
(Մտնում են Տիբալտ եւ ուրիշներ):

ԲԵՆՎՈԼԻՕ

Գլուխս վկայ, ահա գալիս են Կամիւլէտները:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Կրունկս վկայ, բնաւ հոգը չէ:

ամմայիա բայթալէ յունու այդում
Տիբալտ

Մօտից հետևեցէք ինձ, որովհետև ուզում եմ խօսել
նրանց հետ: (Մերկուտիոյին եւ Բինվոլոյին) Բարի իրիկուն, պա-
րոններ. մի խօսք ունիմ ձեզնից մէկի հետ:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Հէնց միայն մի խօսք մեզնից մէկի հետ: Մի բառ էլ
կցեցէք դորա հետ. ասացէք՝ մի խօսք և մի հարուած:

Տիբալտ

Պատրաստ եմ, եթէ միայն առիթ տաք:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Զէք կարող միթէ մի առիթ գտնել, առանց մեր տա-
լուն:

Տիբալտ

Մերկուտիօ, դու Ռոմէօյի խմբիցն ես:

ՄԵՐԿՈՒՀԻՑԻՕ

Խմբից: Ի՞նչ է, կարծում ես մենք մենեստըլներ *)
ենք. եթէ մեզ մենեստըլ ես կարծել՝ ապա մեզնից մի
ակնկալեր՝ եթէ ոչ տարաձայնութիւններ: Այս է իմ ջուտա-
կափալտու. սա է որ ձեզ պարացնելու է: Գրողը տանի,
խմբից:

ԲԵՆՎՈԼԻՕ

Մենք այստեղ խօսում ենք հրապարակի մէջ:

Կամ եկէք քաշուինք առանձին մի տեղ,

Կամ թէ սառնութեամբ վիճաբանեցէք,

Եւ կամ բաժնըւինք. այստեղ ամեն աչք

Մեզ վրայ է յառուած:

*) Աշուղներ:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕՆ

Մարդկանց աչքերը իմաստից՝

Նայելու համար են, և թող ականեն:

Ինձ ոչ ոք չէ կարող այստեղից շարժել:
(Մտնում է Բոմեօ)

ՏԻՐԱԼԾ (Մերկուտիոյին)

Լաւ, էլ այսուհետ գործ չունիմ ձեզ հետ.

Իմ մարդըս եկաւ:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕՆ

Գրողը ինձ տանի,

Եթէ սա հագնի քո համազգեստը:

Առաջ դու մըտիր ասպարէզի մէջ,

Նա քո ետեից: Զեր մեծութիւնը

Գուցէ ալդ կերպով կարող է նըրան

Իր մարդն անուանել:

ՏԻՐԱԼԾ

Այ դու, Բոմեօ.

Այն ատելութիւնն, որ ունիմ առ քեզ՝

Ինձ չէ թելադրում աւելի լաւ բառ՝

Քան թէ այս խօսքը. «Դու մի սրիկայ ես»:

ՌՈՒԷԾ

Տիբալտ, այն պատճառը, որով քեզ սիրում եմ՝

Ինձ ըստիպում է ներել զայրոյթը,

Որ քեզ դըրդում է ինձ այսպէս ողջունել:

Ոչ, սրիկայ չեմ ես: Ուրեմն, մնաս բարով.

Դու ինձ չես ճանաչում:

ՏԻՐԱԼԾ

Տըղայ, չէ կարող

Սա ներում լինել այն անարդանքին,

Որ ինձ արեցիր: Ուրեմն, լետ դարձիր

Եւ քաշիր սուրբք:

ՌՈՒԷԾ

Հաւատացնում եմ,

Որ երբ և իցէ քեզ չեմ անարդած,

Սիլ քեզ սիրում եմ՝ առաւել քան թէ

Կարող ես կարծել, մինչեւ որ իմանաս

Սիրուս պատճառը: Ուրեմն, գոհ եղիր,

Բարի կապիւլէտ, — մի անուն, որ նոյնչափ

Սիրելի է ինձ, որչափ որ իմը:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕՆ

Օհ հեղդ, անպատճիչ, անարդ հըլութիւն.

Մի ստոկատտա *) գըրան մաքրելու: —

Տիբալտ, ամուկ-բւննդ», չեն գալիս ինձ հետ:

ՏԻՐԱԼԾ

Ի՞նչ ես ուզում ինձնից:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕՆ

Բարի թագաւոր կատուների. ոչինչ, եթէ ոչ քո իննը
կեանքիցդ մէկը: Այդ մէկի հետ ուզում եմ խաղալ, և նայ-
ելով թէ ինչպէս կվարուես ինձ հետ այնուհետեւ՝ մնացորդ
ութն էլ քթիցդ կհանեմ: Զես ուզում սուրդ ականջիցը
բռնել գուրս քաշել: Նուտ արա, եթէ ոչ դու դուրս չքա-
շած՝ ես քո ականջներդ գուրս կքաշեմ:

ՏԻՐԱԼԾ (Սուրը դուրս քաշելու)

Ահա, զեր սպասին:

ՌՈՒԷԾ

Սիրելի Մերկուտիօն, սուրդ գիր տեղը:

ՄԵՐԿՈՒԻՑԻՕՆ

Եկ, պարոն, քո պասսագօն:

(Մենամարտում են)

*) Սրի մի որոշ տեսակ հարուած սուսերամարտի մէջ,

Մ. Թ.

ՐՈՄԵՒԾ

Քաշեր, ԲԵՆՎՈՂԻՕ, և թող մենք սըրանց
Զիւաթափ անենք: Պարոններ, ամօթ է,
Չեռք վեր առեցէք այդ թշնամանքից:
— Տիբալտ. — Մերկուտիօն իշխանը յատկապէս
Արգելք է դըրած այս փողոցալին
Ընդհարսւմներին: Չեռք պահիր, Տիբալտ.

— Բարի Մերկուտիօն:

(Տիբալտ վիրաւորում է Մերկուտիօնին)

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՕ

Վիրաւորուած եմ:

Ժանտախտը զարկէ երկու տներին էլ: —
Բանըս պըրծել է: — Արդեօք նա փախաւ
Սունց մի վէրքի:

ԲԵՆՎՈՂԻԾԻՕ

Ի՞նչ է, վնասուած ես:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՕ

Այս. բայց բան չէ, քիչ ճանկը թուած է.
Վահ, այս էլ բան է: Ուր է մանկլաւիկս: —
Գընա, անպիտան, մի վիրաբոյժ բեր:

(Մանկլաւիկը դուրս է գնում):

ՐՈՄԵՒԾ

Սիրտ պինդ պահիր, բարեկամ. վէրքդ մեծ բան չէ
Կարող լինել:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՕ

Աչ. մի հորի չափ խոր չէ, ոչ էլ մի եկեղեցու գըան
չափ լայն. բայց բաւական է. իր անելիքը կանէ. վաղը իմ
մասին լուր հարցրու, և դու կլսես՝ որ ես գերեզմանի
մարդ եմ: Այս աշխարհում բանս բուրդ է: — Ժանտախտ իջ-
նէ ձեր երկու տների վրայ էլ: Ի՞նչ, մի շուն, մի մուկ, մի
կատու այնպէս ճանկոթէ: որ մարդ մեռնի. մի պոռոտա-
խօս, մի սրիկալ, մի սինլքոր, որ թուաբանութեան գրքի

Երեսով է մենամարտում: — Ո՞ր գժոխքից լուս ընկար դու
մեր մէջտեղ. ոքոյթեկուտակ վէրք ստացալ:

(Այսուհետեւ անմաս ըստ միջնադարի մատուցում է զայթ
Նո կարծեցի որ լաւ եմ անում:

ՄԵՐԿՈՒՀԻԾԻՕ

ԲԵՆՎՈՂԻՕ, տար ինձ մի տուն, եթէ ոչ
Ես կուշաթափուիմ: Ժանտախտը իջնէ
Զեր Մերկուտի էլ տըների վերալ: (Այսուհետեւ անմաս ըստ միջնադարի մատուցում է զայթ
Նոքա ինձ շինեցին որդոնի կերակուրը: —
Իմըս ինձ համաւ, այն էլ շատ սաստիկ: —
Զեր գերդաստանները: (Գուրս են գնում Մերկուախօ եւ ԲԵՆՎՈՂԻՕ):

ՐՈՄԵՒԾ

Ահա իշխանի մի արենակից, չգոյ զի զի
Մի ազատանի, սերտ բարեկամը, այլը Մ
Մահացու կերալով վիրաւորուած է յան
Հէնց իմ պատճառով. և իմ հըռչակը
Արատաւորուած՝ Տիբալտի արածար նամ
Անարդանքովը, Տիբալտի, որ է զայթ
Մի ժամից ի վեր իմ ազգականըս: —
Օ՛, անոյշ ջուլիէտ, գեղեցկութիւնըդ
Մի կընամարդի գարձըըել է ինձ,
Եւ կակացըել է իմ բընութեան մէջ
Քաջութեան պողպատը:

(Կրկին գալիս է ԲԵՆՎՈՂԻՕ):

ԲԵՆՎՈՂԻԾԻՕ Հանդիպը այ
Ծոմէօ, Ծոմէօ.

Արի Մերկուտիօն հոգին աւանդեց.

Այն ազնիւ ոգին ճախրեց գէպ երկինք,
Երկիբը շատ վաղ արհամարհելով:

ՐՈՄԵՒԾ

Այս օրուայ ու բախտը կախուած կըմընալ

Եատ օրերի վրայ։ Այս օրը միայն ամեն է խոսվու
Հակիզըն է երկանց, և ուրիշ օրեր քանչին զնն
Պէտք է լըրացնեն այս ժանտ աղէտը։

(Կրկին ներս է գալիս Տիբալտ)։

ԲԵՆՎՈԼԻՕ

Կատաղի Տիբալտն յետ եկաւ կըրկին։

ՐՈՄԷՒԾ

Կենդանի, լաղթական։ իսկ խեղճ Մերկուտիօն

Հսպանուած։ մարդու մեջամայիս համ աղու

Թըռիր դէպ երկինք, խոհեմ մեղմութիւն։

Եւ այժմ, հըրաչեալ դու կատաղութիւն,

Ռւլեցոյց եղիր ինձ։ Դէհ, հիմա, Տիբալտ,

Յետ առ քեզ համար սրիկայ անունը,

Որ մի քիչ առաջ դու ինձ ուզզեցիր։

Մերկուտիօնի հոգին դեռ նոր է թըռել

Մեր գըլխի վերե, և ըսպասում է

Որ քո հոգին էլ ուզեկցի նորան։

Կամ դու, կամ թէ ես, և կամ երկուքս էլ

Պէտք է հետևենք։

ՑԻԲԱԼՏ

Դու, թըռուտառական,

Դու ես միշտ եղել նորա ընկերը,

Այժմ էլ նորա հետ դու պէտք է գընաս։

ՐՈՄԷՒԾ

(Սուրբ քաշելով)

Սա կըվճուէ այդ։

(Մենամարտում են. Տիբալտ ընկնում է)։

ԲԵՆՎՈԼԻՕ

Ռոմէօ, փախիր։

Քաղաքացիներն ոտքի են կանգնած

Եւ Տիբալտ սպանուած։ մի կանգնիր ապուշ։

Եթէ քեզ բըռնեն՝ իշխանը մահուան

Արդատալարտէ։ Փախիր այստեղից,

Գրնա, հեռացիր։

ՐՈՄԷՒԾ

Ես բախտի խենթն եմ *։

ԲԵՆՎՈԼԻՕ

Փնջու ես կանգնել։

(Ռոմէօ փախչում է)։

(Մտնում են քաղաքացիներ, զէնքերով)։

Ա. ՔԱՂԱՔԱՑԻ

Ուր փախաւ այն մարդը. նա որ ըսպաննեց

Մերկուտիօնին։ Տիբալտ, մարդասպանը,

Ուր կողմ փախաւ նա։

ԲԵՆՎՈԼԻՕ

Ահա այդ Տիբալտը։

Ա. ՔԱՂԱՔԱՑԻ

Ոտքի ել ապարոն, և հետեւիր ինձ։

Յանունիշխանի հրամայում եմ քեզ։

Հնագանդիր։

(Մտնում են իշխանը, Մոնտէգիւ, Կապիլէտ, իրանց կանայքը են)։

ԻՇԽԱՆ

Ուր են այս կըռուի չար գըրդիչները։

ԲԵՆՎՈԼԻՕ

Ուզ ազնիւ իշխան, ես պատմել կարող եմ

Զարաքաստ այս կըռուի բոլոր ցաւալի

Հանգամանքները։ Ահա այն մարդը,

Որ Ռոմէօի ձեռքով ըսպանուեց,

Եւ որ ըսպանեց քա ազգականիդ,

Քաջ Մերկուտիօնին։

* Ակսինքն միշտ, թառլերգի խեղկատակի նման, ես գտընում եմ չար բախտի շաւղի վերայ. ես վազում եմ դէպի իմ կործանումը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տիբալտ, եղբօրորդիս,

Օ՛հ, իմ խեղճ եղբօր զաւակը: — Օ՛հ, իշխան,
Օ՛հ, իմ ամուսին. Օ՛հ, արիւնն է թափուել
Սմենասիրելի մեր ազգականի:

Օ՛հ, լըսիր, իշխան, եթէ արդար ես՝
Մեր արեան փոխարէն՝ թափիր արիւնը
Մոնտէգիւների: Օ՛հ, խեղճ Տիբալտը,
Խեղճ եղբօրորդիս:

ԻՇԽԱՆ

Բենվոլիօ, ով առաջ

Այս արիւնահեղ կըսիւն սկըսաւ:

ԲԵՆՎՈԼԻՕ

Տիբալտն ըսկըսաւ, հէնց այս Տիբալտը,
Որին Ռոմէօն ըսպաննեց ալստեղ: Ճամա
Ի զուր Ռոմէօն նըրան լորդորեց,
Քաղցրութեամբ խօսեց, նըկատել տուաւ
Արչափ չընչին էր կըսուի պատճառը.

Եւ ձեր մեծութեան տըհաճութեամբը
Հսալառնաց նորան. այս բոլոր խօսքերը,
Ու արտասաննեց հեզ ձայնով, քաղցրութեամբ,
Հանդարտ երեսով, խոնարհ, ծընկաչոք՝

Անկարող եղան ամոքել բընաւ
Տիբալտի անզուսալ կատաղութիւնը:
Իսկ նա հաշտութեան ամեն խօսքի դէմ՝
Ականջը խըցած՝ սուր պողովատը
Քաջ Մերկուտիօնի կըրծքի դէմ մըղեց՝
Եւ Մերկուտիօն էլ նոյնչափ տաքացած՝
Մահացու սըրին սուրը դէմ տուաւ.

Եւ մի ռազմակին արհամարհանքով
Մէկ ձեռքով պազ մահը հեռու էր մըղում,
Միւսով նոյն մահը յետ էր ուղարկում

Դէպի Տիբալտը, որ ճարպիկ ձեռքով

Կըրիկին գարձնում էր: Ռոմէօն բարձրաձայն

Աղաղակում էր. «Կեցէ՛ր, բարեկամներ,

Կեցէ՛ր, բաժանուեցէ՛ր». և աւելի շուտ

Քան նորա լեզուն՝ նորա բազուկը

Մահառիթ սրերը ցած խոնարհեցրեց,

Եւ իսկոյն նետուեց երկուսի միջև:

Բայց այդ միջոցին նրա թեսի տակից՝

Տիբալտի ժանտ զարկը կենազրաւ արաւ

Առողջ Մերկուտիօնին. յետոյ Տիբալտ փախաւ:

Ապա յետ դարձաւ և կըրկին եկաւ

Ռոմէօնի մօտ, որի սըրտի մէջ

Նոր էր բորբոքում վրէժի փափագը:

Նորա կըռուեցին փայլակի նըման.

Եւ նախ քան թէ ես սուրըս քաշէի

Եւ բաժանէի կըրակոտ Տիբալտը

Գետին էր վըռուսել. և երբ նա ընկաւ

Ռոմէօն փախաւ: ծշմաղիսն այս է,

Թող մեռնի Բենվոլիօն՝ թէ ճիշդ չասացի:

ՀԷԴԻ ԿԱՊԻՒԼԵՑ

Դա ազգականն է Մոնտէգիւների:

Մէրը սըտախօս դարձնում է նըրան.

Նա ճիշդ չէ խօսում: Մոնտէգիւներից

Գէթ քըսան հոգի զինակից էինաւ

Այս սև կըսուի մէջ. և այդ քսան հոգին

Միայն մէկ հոգի մեռցնել կարացին:

Դատ արա, իշխան. արդար վճիռ տուր:

Ռոմէօն Տիբալտին սպաննեց. Ռոմէօն

Զըպէտք է ապրի:

ԻՇԽԱՆ

Ռոմէօն Տիբալտին

Հսպաննեց, և նա՝ Մերկուտիօնին:

Ո՞վ պէտք է տուժէ այդ թանկ արիւնը:

իոցած լշու Մռնչհինք զրծ
Ոչ թէ Ռոմէօն, բարեգութ իշխան:
Նա Մերկուտիօնի սերտ բարեկամն էր.
Նորա մեղքն այն է, որ նա աւարտեց՝
Ինչ որ օրէնքը պէտք է պահանջէր—
Տիբալտի կեանքը:

ԻՇԽԱՆ

Այդ մեղքի համար՝
Մենք արտաքսում ենք նըրան այս երկրից:
Ես ինքըս զոհ եմ ձեր ատելութեան.
Ձեր բիրտ ու վալբագ վէճերի համար
Հոսում է ահա և իմ արիւնըս:
Այնքան մեծ տուգանքով կըպատժեմ ես ձեզ՝
Որ զբղաք ամենքդ, սրգաք իմ ցաւըս:
Փաստ ու պատըրուակ ես չեմ լսելու,
Աղերս ու արցունք մեղք չեն քաւելու.
Մի գիմէք ուղեմն դորանց ոչ մէկին:
Թող շուտ Ռոմէօն գընալ այստեղից.
Ալլապէս, երբ որ այստեղ գըտընուի՝
Այդ ժամը կինի նորա վերջինը:—
Տարէք այս դիակը. թող կամքըս կատարուի:
Ոզորմութիւնը մի մարդասպան է՝
Երբ նա ներում է մարդասպաններին:

ՏԵՍԱՐԱԿ **Բ.**
Մի սենեակ Կապիւէտի տան մէջ.
Անուազն ուր յի ուղեւ միջյաց ամ
Ամօնակ Մանում է ԶՈՒԼԻԷՏ:
Եղանակ մարդ ու մարդ ու մարդ ու
Ամազարք ու Անուազն ու մարդ ու
ԶՈՒԼԻԷՏ
Արլացէք արագ, հրասըմբակ նժոյգներ,
Դէպի ֆերոսի պերճ ապարանը.
Ալնպիսի կառապան, որպէս Ֆաէտոն,
Պէտք է ձեզ մըտրակէր դէպի արևմուոք,
Եւ իսկոյն ներս բերէր ամպոտ գիշերը:
Սիրանուէր գիշեր, եկ և տարածիր
Թաւ վարագոյըըդ, որ լըրտեսների
Աչքերը գոցուին, և իմ Ռոմէօն
Յատկէ գալ գիրկըս, անտես, անպարսաւ:
Սիրահարները կարող են գործել
Իրանց սիրալին պաշտամունքները
Հէնց գեղեցկութեան լուսովը միարն.
Կամ, եթէ կոլը են սիրոյ աչքերը՝
Նա գիշերի հետ շատ լարմար կըդայի:
Եկ, դու լուրջ գիշեր, անպաճոյն տիկին,
Ամբողջ սև հագած, և ինձ սովորցրու,
Ինչպէս կորցընել շահելով, մի խաղ,
Որ ունենալու է որպէս մըրցանակ
Մի գոյգ անարտա ամբիծ կուսութիւն:
Եկ դու, քօղարկիր քո սև վերարկուվ
Իմ կոյս արիւնըս, որ թշշերիս մէջ
Թափահարում է. որ այնուհետեւ
Վեհերոտ սէրը խիզախանալով
Անձնատուր սիրոյ գործողութիւնը
Պարզ ըզգաստութիւն միայն համարէ:

Եկ դու, ով գիշեր, Եկ դու Ռոմէօ,
Եկ դու, ով ցերեկ, գիշերուալ միջին.
Գիշերի թէսի վրայ դու ըսպիտակ ես՝
Քան թէ նոր ձիւնը ազուաւի մէջքին:—
Եկ, քաղցրիկ գիշեր, Եկ դու, սիրասուն,
Սևայօն գիշեր, տուր ինձ իմ Ռոմէօն.
Եւ երբ նա մեռնի՝ առ նրան, կըտրատիր,
Աստղիկներ շինիր. և նա կըդարձնէ
Երկընքի գէմքը այնքան գեղեցիկ,
Որ աշխարհն ամբողջ կըսիրահարուի
Սիրուն գիշերին, և Էլ չի պաշտիլ
Շըքեղ արևին:
Օ՛հ, ես գընել եմ մի սիրոյ պալատ,
Բայց դեռ չեմ տիրել. թէս ծախուած եմ՝
Բայց չեմ վայելուած: Ի՞նչ տաղտուկ օր է այս,
Ինչպէս մի տօնի նախորդ գիշերը.
Տաղտուկ է անհամբեր մանուկի համար,
Որ ունի նոր զգեստ, և տօնից առաջ
Չէ կարող հագնել: Օ՛, դայեակս եկաւ...
(Մտնում է դայեակը, պարաններ բերելով),
Նա լուր է բերում. և ամեն լեզու
Որ Ռոմէօի անունն է տալիս:
Խօսում է Երկնալին պերճախօսութիւն:—
Լաւ, դայեակ, Բնչ լուր. այդ Բնչ է, պարանն է,
Որ Ռոմէօն քեզ հրամալեց բերել:

ԴԱՅԵԱԿ

Այս, պարանն է:
ԶՈՒՀԻՀԾ
Վայ ինձ, Բնչ լուր կալ.
Ինչու ես ձեռքերդ այդպէս գալուած:
ԴԱՅԵԱԿ
Ա. իւ, Տէր Աստուած իմ, մեռաւ, մեռաւ, մեռաւ.

Մեր տունը քանդուեց, մեր տունը քանդուեց:
Վայ հոգուս, գըմաց, ըսպանուեց, մեռաւ:
ԶՈՒՀԻՀԾ

Միթէ երկինքը կարող է ալսչափ
Անողորմ լինել:

ԴԱՅԵԱԿ

Ռոմէօն կարող է, ո՞Ս
Եթէ ոչ երկինքը:— Ռոմէօ, Ռոմէօ.
Ո՞վ երբեկցէ կըմտածէր այդ.
Ռոմէօ...

ԶՈՒՀԻՀԾ

Ի՞նչ ճիւաղն ես դու, որ այս աստիճան
Ինձ չարչարում ես: Այս մի տանջանք է՝
Սոսկալի դժոխքին միայն արժանի:
Միթէ Ռոմէօն անձնասպան է եղել.
Ասս միայն «այո», և այդ պարզ «այոն»
Աւելի սաստիկ թոյն է ինձ համար՝
Քան բազիլիկի *) մահառիթ աչքը,
Ալդպիսի այոն մահ է ինձ համար:
Եթէ փակուած են նորա աչքերը՝
Պատասխանիր ինձ՝ այն ասելով.
Թէ ըսպանուած է՝ մէկ այն տաս.
Եթէ ոչ ասա ոչ. թող կարճ հնչիւններ
Վըճռեն իմ բախտըս կամ դըժբախտութիւնս:

ԴԱՅԵԱԿ

Ես տեսայ վէրքը, իմ աչքով տեսայ:
Ողորմած Սատուած. հէնց այստեղ, այստեղ,
Այրական լանջի վրայ. սոսկալի՛ դիակ,
Արիւնաշաղախ սոսկալի՛ դիակ.

*) Բազիլիկը մի երևակական էակ է, աճնպիսի սարսափելի ոչքով, որ կարող էր նատելով միայն մահացնել. Ծ. Թ.

Գունաթափ, գունաթափ, ճիշդ մոխրի նըման,
Ամբողջ թաթախուած իր արիւնի մէջ,
Լերդացած արիւնի:— Ես որ այդ տեսայ՝
Ուշաթափուեցայ:

ԶՈՒՀԻԵՑ

Օ՛Հ, պայթիր, սիրտըս,

Խեղճ սընանկ, պայթիր. ի բանտ, իմ աչքեր.
Մի նայէք այլ ևս տզատ լուսի վրայ.
Անարդ հող, հող դարձիր, դադարիր շարժ: ԱԵԼՈՒԾ
Դու և Ռոմէօ մէկ դադաղ մըտէք:

ԴԱՅՑԵԱԿ

Օ՛, Տիբալտ, Տիբալտ, ամենից սիրելի
Իմ բարեկամը. Օ՛Հ, ազնիւ Տիբալտ,
Պարկեշտ ազատանի. Երնէկ մեռնէի,
Մահոդ չտեսնէի:

ԶՈՒՀԻԵՑ

Ի՞նչ մըրբիկ է այս,
Որի հողմերը ալսքան ներհակ են:
Ռոմէօն սպանուած, Տիբալտ մեռած է.
Իմ թանկ, սէրելի մօլեզբօրորդիս,
Եւ աւելի թանկ իմ ամուսինը:
Ուրեմն, փըչիր, ահաւոր շեփոր,
Վերջին դատաստանն է. ով է կենդանի,
Եթէ մեռել են այդ երկու հոգին:

ԴԱՅՑԵԱԿ

Տիբալտ մեռած է, Ռոմէօն աքսորուած.
Եւ Ռոմէօն է ըսպաննել նըրան,
Եւ ինքն աքսորուել:

ԶՈՒՀԻԵՑ

ՈՂՈՐՄԱՆ ՍԱՄՈՒԱԾ,

Միթէ Ռոմէօն ձեռք է թաթախել
Տիբալտի արեան մէջ:

Տիբալտ մեռած է, Ռոմէօ... աքսորուած:
Այդ... աքսորուածը, այդ մէկ բառն... աքսորուած
Տասն հազար Տիբալտ սպաննեց ինձ համար:
Տիբալտի մահը բաւական ցաւ էր,
Եթէ այդ և եթ լինէր վախճանը.
Կամ, եթէ ժանտ վիշտն ընկեր է խնդրում
Եւ կարիք ունի գուգակըցուելու
Այլ ցաւերի հետ՝ ինչու չըլարեց,—
Երբ որ նա ասաց, Տիբալտ մեռած է՝
Հայրըդ էլ, մայրըդ էլ, կամ հէնց երկուսն էլ.—
Դա կըպատճառէր սովորական ցաւ:
Բայց իբր յետապահ Տիբալտի մահուան՝
Ռոմէօ աքսորուած:— Հընչել այդ բառը
Նըշանակում է՝ հայր և մայր, Տիբալտ,
Ռոմէօ, Զուլիէտ— բոլորն ըսպանուած
Բոլորը մեռած: Ռոմէօ աքսորուած.

Զըկայ ոչ վախճան, ոչ չափ, ոչ սահման
Այդ բառի մահուան: Զըկայ ոչ մի բառ,
Այդ վըշտի համար:— Ո՞րտեղ է հայրը,
Ո՞րտեղ է մայրը:

ԴԱՅՑԵԱԿ

Ողբում են կոծում
Տիբալտի մարմնի վրայ. չես գնում նորանց մօտ:
Եկ, տանիմ այնտեղ:

ԶՈՒՀԻԵՑ

Թողլ լըւան նոքա

Նորա վէրքերը արտասուրներով.
Եւ երբ որ դոքա ցամքած կըլինին
Երկար կըթափուին դեռ իմ արցունքներս
Իմ Ռոմէօլիս աքսորի վերայ:
Աեր առ պարանը...

— Խեղճ պարան, ինձ նման դու էլ յուսախար.
Քանզի Ռոմէօն աքսոր է զըրկուած:

Նա քեզ շինել էր՝ շաւիդ լինելու
Թէպ իմ մահիճըս. սակայն ես, գեռ կոյս՝
Պէտք է որ մեռնեմ կոյս որբեարի:
Եկ, պարան, Եկ, դայեակ. ես պէտք է գընամ
Հարսնեկան մահիճս. և մահը պէտք է
Կուսութիւնն առնէ, ոչ թէ Ռոմէօն:

ԴԱՅԵԱԿ

Վազիր սենեակըդ. կերթամ կըգըտնեմ
Քո Ռոմէօլիդ՝ որ քեզ ըսփոփէ.
Ես իմանում եմ թէ նա որտեղ է:
Լըսիր, Ռոմէօդ նոյն իսկ այս գիշեր
Այստեղ կըլինի. գընամ նորա մօտ:
Նա թագնրւած է Հայր Լորէնսի մօտ:

ԶՈՒՄԻՒՏ

Օ՛հ, գըտիր նըրան, և այս մատանին
Տուր հաւատարիմ ազնիւ ասպետիս,
Եւ ասա որ գալ և վերջին անգամ
Ինձ հրաժեշտն ասէ:

(Դուբս են գնում).

ՏԵՍԱՐԱԿ.

Հայր Լորէնսի խուցը.

Մանում են ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ և ԲՈՄԷՕ.

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Եկ, առաջ, Ռոմէօ, Եկ, սոսկալի մարդ.
Վիշտը քո անձիդ սիրահարուած է.
Դու նըշանուած ես գըժբախտութեան հետ:

ՇՈՒՄԻՒՏ

Հայր իմ, Բնէ լուր կայ. իշխանն Բնէ վըճռեց.

Ինչ վիշտ է ուզում ինձ ծանօթանալ,
Որին տակաւին ծանօթ չըլինեմ:

Հ. ԼՈՐԷՆՍ

Սիրելի որդիս շատ ընտանի է
Այդ տեսակ տըրտում ընկերների հետ:
Քեզ լուր եմ բերել իշխանի վըճռեց:

ՇՈՒՄԻՒՏ

Միթէ նրւազ է այն գատակնիքը
Քան մահուան վըճռու:

Հ. ԼՈՐԷՆՍ

Մեղմագոյն վըճռու
Սըտաբերուած է նորա ըլրթունքից.—
Ո՛չ մահ մարմնական, այլ աքսոր մարմնի:

ՇՈՒՄԻՒՏ

Ա՛հ, աքսո՞ր. գըթա և ասա գէթ մահ.
Աքսորն առաւել զարհուրելի է,
Օ՛հ, զատ առաւել, քան նոյն իսկ մահը:
Մի ասեր աքսոր:

Հ. ԼՈՐԷՆՍ

Այս երկրից միայն,
Այս Վերոնալից աքսորուած ես գու:
Համբերիր. աշխարհը լայն է և արձակ:

ՇՈՒՄԻՒՏ

Ո՛չ, Վերոնալի պարիսպներից գուրս
Ե՛լ աշխարհ չըկայ, այլ միայն տանջանք,
Գաւարան, գըժուիք: Այստեղից աքսորուած՝
Նըշանակում է աշխարհից աքսորուած.
Աշխարհից աքսոր՝ նոյնն է ինչ որ մահ.
Ուրեմն աքսորը մահ է ալանուն.
Եւ մահը ալդպէս աքսոր կանչելով
Գլուխը կըտրում ես ոսկեայ տապարով,

Եւ ժըպտում ես դու այն հարուածի վրայ,
Որ սպանում է ինձ:

Հ. ԼՈՐԷՆՍ

Օ՛հ, մահացու մեղք,
Օ՛հ, ինչ կոշտ ու բիրտ ապերախտութիւն:
Մեղքիդ վրճիռը օրէնքով մահ է.
Բարի իշխանը, քեզ պաշտպանելով
Նրել է օրէնքը, դուրս է շըպըբտել.
Եւ փոխարկել է այդ սև բառը—մահ—
Դէպի վըտարում: Այդ անբաւ գութ է,
Բայց դու չես տեսնում:

ՐՈՒՄԷԾ

Տանջանք է, ոչ գութ.
Երկինքն ալստեղ է, ուր Զուլիէտն է ապրում:
Եւ ամեն կատու, շուն և մուկ չընչին,
Ամեն անարդ բան ապրում են ալստեղ,
Ս.յս երկնքի մէջ, և Զուլիէտի վրայ
Կարող են հայել. բայց Ռոմէօն—ոչ:
Աւելի արժանիք, պատիւ և շընորհ
Ունին գիշասուն զազիր ճանճերը,
Քան թէ Ռոմէօն. նոքա կարող են
Մատչել և դիպչել քաղցրիկ Զուլիէտի
Հրաշափառ ձեռքի ըստակութեան,
Կամ անմահական մի երանութիւն
Գողանալ նորա այն շըրթունքներից,
Որ իրանց անարատ և վեստալական
Համեստութեան մէջ՝ շիկնած են ընդ միշտ,
Մեղք համարելով այն համբոյները՝
Որ նոքա իրանք իրանց են տալիս:
Ճանճեր կարող են. այն ինչ ես՝ ալստեղից
Պէտք է փախուստ տամ: Նրանք ազատ մարդիկ են,
Իսկ ես աքսորուած. և դեռ ասում ես՝
Թէ մահն աքսոր չէ: Ռոմէօն չէ կարող.

Նա աքսորուած է: Զունէիք մի թոյն,
Կամ մի սուր դանակ, կամ լանկարծական
Մի մահու գործիք, ոչ ալդչափ անարդ,
Ինձ ըսպաննելու, բացի այդ բառից—
«Աքսորուած, աքսորուած»: Այդ բառը, ոհ, հայր,
Դւերն են գործածում սև դրժոխքի մէջ.
Ունալու ձայներ կըցւում են դորան:
Ի՞նչպէս սիրտ ունիս, դու, մի քահանայ,
Խոստովանահայր, մեղքից արձակող,
Եւսիմ բարեկամ՝ ինձ յօշտելու
Այդ բառով—աքսոր:

Հ. ԼՈՐԷՆՍ

Օ՛հ, սիրոյ խելագար,
Թող մէկ բառ խօսիս:

ՐՈՒՄԷԾ

Կըրկին կըխօսիս

Աքսորի վերայ:

Հ. ԼՈՐԷՆՍ

Քեզ մի զրահ կըտամ՝
Որ քեզ պաշտպանէ այդ բառի ընդդէմ:
Դա է ձախորդութեան քաղցրահամ կաթը,
Փելսովայութեան, քեզ ըսփոփելու
Քո աքսորիդ մէջ:

ՐՈՒՄԷԾ

Գարձեալ աքսորը.
Կախազան հանիր վիլիսովայութիւնն՝
Թէ նա չէ կարող ստեղծել մի Զուլիէտ,
Փոխադրել մի քաղաք, և յեղաշըրջել
Իշխանի մի վըճիռ: Նա օգուտ չունի,
Նա բանի պէտք չէ. մի խօսիր այլնս:

Հ. ԼՈՐԷՆՍ

Օ՛, ես տեսնում եմ, որ ականջ չունին
Խելագարները:

միանք մե ս թռութէ ծու ապացա ամ
ապան ծագութիւն նոր ի նշան ի նշան
Երբ աչքեր չունին խելացիները: —
Հ. ԼՈՐԷՆՍ
Թող վիճեմ քո հետ վիճակիդ վերայ:

ՌԱՄԷՅԾ ամսամատ ապացա ամ

Չես կարող խօսել մի բանի վերաց՝
Որ դու չես ըզգում: Եթէ լինէիր
Զահիլ ինձ նրման, և Զուլիէտ՝ սիրուհիդ,
Մի ժամի պըսակուած, Տիբալտին սպանած,
Ինձ նրման մոլոր, աքսորուած ինձ պէս՝
Գուցէ այն ատեն կարող էիր խօսել.
Գուցէ կարող էիր մազերըդ փետտել
Եւ գետին ընկնել, ինչպէս այժըմ ես,
Եւ չափը ըլքոնել դեռևս չըփորած
Մի գերեզմանի:

Հ. ԼՈՐԷՆՍ

Վեր կաց, բաղխում են.

Բարի Ռոմէօ, վեր կաց թագնըլիք: —
(Քուը բաղխելու ճայն):

ՌԱՄԷՅԾ

Երբէք. միայն թէ իմ հիւանդ սըրտիս
Հեծեծանքները, մառախուղի պէս,
Ամպով ծածկեն ինձ ալլոց առչերից: —
(Բաղխելու ճայն):

Հ. ԼՈՐԷՆՍ

Լըսում ես ինչպէս դուռը բաղխում են: —
Ո՞վ է: — Ռոմէօ, վեր կաց, կըբընեն քեզ: —
Քիչ ըսպասեցէք: — Վեր կաց, ոտքէ ել.
Վազիր և մըտիր իմ գըասենեակըս:

(Բաղխում են):

— Իսկոյն: — Աստուած իմ, ինչ յամառութիւն է: —
Եկայ, վահ, եկայ: (Բաղխում են)
Ո՞վ է այսպէս խիստ դուռը ջախջախում: —
Ո՞րտեղից ես գալիս: Ինչ ես կամենում:
ԴԱՅԵԱԿ (Դրսից)

Թողէք որ ներս գամ, և դուք կիմանաք.
Տիկին Զուլիէտի կողմից եմ գալիս: (Ապացա ամ)
Նմ յարդան չեմ նետ ԼՈՐԷՆՍը միշ չ' Ս
Գալուստըդ բարի, ուրեմն քանզա չ' Ս
Հայոց բարի առցան ըժուան (Մտնում է դայեակը)
ԴԱՅԵԱԿ (Դրսից) ԴԱՅԵԱԿ (Դրսից) ԴԱՅԵԱԿ (Դրսից)
ԴԱՅԵԱԿ (Դրսից) ԴԱՅԵԱԿ (Դրսից) ԴԱՅԵԱԿ (Դրսից)

Այստեղ գետնի վրայ, իր արցունքով արբած:
ԴԱՅԵԱԿ

Օ՛հ, ձիշդ իմ տիկնոջ վիճակի մէջ է,
Ձիշդ նոյն վիճակն է:

Ծառախանցա ու Հ. ԼՈՐԷՆՍ

Օ՛հ, ցաւալի սէր,

Ողորմելի վիճակ:

Անդքանց համա ԴԱՅԵԱԿ

Կան քայլան նա էլ ձիշդ այսպէս

Ընկած է գետին: լալիս է, ողըում:

Ողըում է, լալիս: — Վեր կաց, վեր, կանգնիր.

Վեր կաց, թէ մարդ ես: Ի սէր Զուլիէտի,

Ի սէր սիրուհուդ, վեր կաց և կանգնիր:

Ինչու ես ընկել այդչափ անպատակ:

Անյուսութեան մէջ:

ՐՈՄՀԵՈ
Դայեակ:
ԴԱՅԵԱԿ
ՈՇ, պարոն,
ԱՇ, պարոն. մահ է ամենի վերջը:

ՐՈՄՀԵՈ

Զուլիէտի մասին էիր դու խօսում.
Արդեօք բնչպէս է: Զէ համարում ինձ
Մի հին մարդասպան, ալժմ որ ներկել եմ
Մեր երջանկութեան հէնց մանկութիւնը
Նորան արենակից մարդու արիւնով:
Ուր է նա. բնչպէս է, և բնչ է ասում
Թաքուն տիկինը՝ մեր թշուառ սիրոյ վրայ:

ԴԱՅԵԱԿ

ՈՇ, ոչինչ չէ ասում. լալիս է, լալիս?
Յետոյ ընկնում է իր անկողնի վրայ.
Յետոյ վեր թըռչում, Տիբալտ է կանչում.
Յետոյ լալիս է Ռոմէօյի վրայ,
Եւ յետոյ կըրկին ընկնում է գետին:

ՐՈՄՀԵՈ

ԱՇ, ալդ անունը, կարծես արձակուած
Մի մահատարած հրացանի փողից՝
Նրան ըսպանում է ինչպէս համանուն
Սնիծեալ ձեռքը՝ իր արենակցին:
ՈՇ, ասա, հայր սուրբ. ասս ինձ, խընդրեմ,
Այս իմ կըմախքի որ անարդ մասը
Է իմ անունիս պիզծ օթևանը,
Ասա, որ քանդեմ այդ զազիր որջը:

(Քաշելով իր սուրբ)

ՀԱՅՐ ԼՈՐԵՆՄ

ՈՇ, կեցիր. բըռնիր յուսահատ ձեռքը՝
Արդեօք մարդ ես դու. քո մարմնիդ ձեռ

Աղաղակում է՝ որ իրաւ մարդ ես.
Բայց արցունքները կընոջ են վայել,
Եւ վայրագ վարքը՝ առաւել նըման
Գագանի անզուսպ կատաղութեանը:
ՈՇ դնւ, տըձե կին, առնական ձեռվ,
Կամ զազան չարագէմ, երկուսի *) դէմքով
Ինձ ապշեցրել ես: Իմ կարգըս վըկայ,
Ես քո սըրտիդ մէջ աւելի կորով
Ենթադրում էի: Տիբալտին մեռցրիր,
Եւ ալժմ ուզում ես դու քեզ մեռցընել,
Եւ քեզ հետ այն տիկնոջ, որի կեանքն ես դու,
Անիծեալ ոխըդ յագեցընելով
Ինքըդ քո վերայ: Ինչո՞ւ ես հայհոյում
Քո ծընուած օրըդ, երկինքն և երկիրը.
Քանի որ ծընունդ, երկինքն և երկիր
Բոլոր երեքը համախըմբուած են
Քեզ կեանք շնորհելու, որ դու ուզում ես
Յանկարծ վերջացնել. թուհ... թուհ...
Դու ամօթ ես բերում քո գեղեցկութեան,
Քո սիրոյդ, խելքիդ: Որպէս վաշխառու՝
Սմեն ճոխութիւն առատ է քեզ մօտ.
Բայց և ոչ մէկը դու չես գործ դընում
Այն ազնիւ ձեռվ՝ որ պատիւ բերէ
Քո գեղեցկութեան, սիրոյդ և խելքիդ:
Գեղանի կազմըդ մի ձե է մօմեալ,
Զուրկ ամեն առնական արիսւթիւնից:
Փուք ուխտադրուժ է քո ուխտած սէրըդ,
Մահ տալով նորան՝ ում սէր է ուխտել.
Խելքըդ, այդ զարդը գեղի և սիրոյ՝
Երկսի համար էլ վատ ուղեցոյց է,
Որպէս վառօդը անճարակ զինուրի

*) Այսինքն մի զազան, վատ վատկութիւնների կողմից, թէ
այլ մարդու և թէ կնոջ կերպարանքով.

Վառօդամանում. — նա բըռընկում է ք. Ա
 Հէնց քո սեփական անդիտութիւնով այ
 Եւ քեզ խեղացնում, պաշտպանելու տեղ:
 Ի՞նչ է. վեր կաց, մարդ. ողջ է ջուլիէտը,
 Որի սիրոյ համար հէնց մի քիչ պոած
 Դու մեռնում էիր ամհամայդ բանում
 Դու երջանիկ ես: Տիբալտ ուզում էր
 Քեզ մեռցնել. բայց դու մեռցըրիր նըրան.
 Այդ բանի մէջ էլ դու երջանիկ ես:
 Օրէնքը որ քեզ մահ էր ըսպառնում
 Բարեկամ եղաւ քեզ, և մահը փոխարկեց
 Աքսորի միան. այդ բանի մէջ էլ
 Երջանիկ ես դու: Մի բուռ օրհնութիւն
 Թափում է գըլխիդ. երջանկութիւնը
 Քեզ փաղաքշում է գուգուած, գարդարուած.
 Բայց դու մի խոռովան անկիրթ աղջկալ պէս՝
 Բախտիդ և սիրոյդ դէմ դէմք ես թթուացնում:
 Ըզգոյշ կաց, ըզգոյշ, այդպիսիները
 Թըշուառ են մեռնում: Գնա սիրուհուդ մօտ,
 Ինչպէս որոշուած էր. ել իր սենեակը,
 Միիթարիր նըրան: Բայց, տես, դուրս արի
 Քանի տակաւին պահակ չէ դըրուած:
 Քանզի այն ժամանակ չես կարող այլն
 Մանտուա գընալ, ուր պէտք է կենաս
 Մինչև կարենանք մի առիթ գըտնել
 Ամուսնութիւնը. հրատարակելու,
 Զեր տոհմերի մէջ հաշտութիւնը բերել
 Իշխանից խընդրել մեղքիդ ներումը
 Եւ քեզ լետ կանչել բիւր և բիւր անգամ
 Աւելի երջանիկ քան թէ գըտնում ես
 Ալժմ ապերջանիկ: Առաջ դուա, դայեակ,
 Տուր քո տիրուհուդ իմ ողջուններըս,
 Եւ ասա նորան, որ ըշտապեցնէ

Բոլորին քընել, և ծանըր վիշտը
 Արդէն տրամադիր դարձրել է նըրանց:
 Ռոմէօն գալիսէ: յու մնա չ զայտ զի
 զամայը ար հման դաշնութիւնը այսու հման
 Ես կարող էի ամբողջ գիշերը
 Հսպասել այստեղ և լաւ խըստ լըսել:
 Ուսումն այս է, հա:

(Բոմէօյին)

Տէր իմ, տիրուհուս
 Կասեմ որ գալիս էք:

ՇՈՄԷՅՈ

Գնա, յայտնիր նորան,
 Եւ ասա նաև իմ սիրեցեալին՝
 Որ նա պատրաստուի ինձ կըշտամբելու:

ԴԱՅԵԱԿ

Ահա մի մատանի, տէր իմ, որ ասաց
 Զեզ յանձնեմ, տէր իմ: Նուտ արէք, տէր իմ,
 Եւ ըշտապեցէք. բաւական ուշ է: Հզուի

ՇՈՄԷՅՈ (Ատանին մատը զնելով)

Ի՞նչպէս այս սըրտիս նոր ոյժ է տալիս:

Գնացէք. գիշեր բարի. — սորանից է կախուած
 Քո բոլոր բախտը. կամ զուրս եկ ախտեղից,
 Քանի գեռելը պահակ չէ դըրուած,
 Կամ արևծագին ծըլպտեալ հեռացիր,
 Գընա Ամանտուա: Ես քո ծառայիդ որը
 Կարող եմ գըտնել. նա լաշորդաբար պէտքէ:
 Ամեն լաւ գիշերից քեզ լուր կըբերէ:
 Տուր ինձ քո ձեռքը. ուշ է. գնաս բարով,
 Եւ գիշեր բարի:

ՐՈՄԷՅՈ
Թէ մի ուրախութիւն,
Որ բարձր է ամեն ուրախութիւնից,
Ինձ գուրս չըկանչէք՝ ինձ յաւ կըլինէք
Այսքան շուտափոյթ բաժնըւել քեզնից:
Մնաս բարով:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ Դ.

Մի սենեակ կապիւլէտի տան մէջ.

Մտնում են ԿԱՊԻՒԼԵՏ, ԼԵԴԻ ԿԱՊԻՒԼԵՏ և ՊԱՐԻՍ.

ԿԱՊԻՒԼԵՏ

Պարոն, գէպքերը ալնքան տարաբախտ
Դարձուած ըստացան, որ առիթ չունեցանք
Խօսել այդ մասին մեր աղջըկայ հետ:
Նա խեղճ Տիբալտին խիւտ շատ էր սիրում,
Նոյնպէս ես ինքըս:— Բայց լաւ, ինչ անենք.
Բոլորս ծընուած ենք մեռնելու համար:—
Հիմայ շատ ուշ է. Զուլիէտ յած չի գալ.
Ճըմարիտն ասեմ, դուք չըլինէիք՝
Ես մի ժամ առաջ քնած կըլինէի:

ՊԱՐԻՍ

Այս յաւի օրերն միջոց չեն տալիս
Սիրոյ օրերին:— Տիկին, բարի գիշեր,
Եւ լարգանքները ձեր օրիորդին:

ՀՀԴԻ ԿԱՊԻՒԼԵՏ

Հատ լաւ, և վաղը առաւօտ կանուխ

Կըտեղեկանամ, թէ ինչ է միտքը.
Քանզի այս գիշեր նա իր ցաւի հետ
Սուանձնացել է: ԿԱՊԻՒԼԵՏ

Տիար Պարիս, ես ինքս համարձակապէս
Կարող եմ խոստանալ գաւակիս սէրը:
Կարձեմ ինձ կըլսէ ամեն բանի մէջ,
Եւ դեռ աւելի, ես կասկած չունիմ:—
Այ կին, այս գիշեր քընելուց առաջ
Գնա Զուլիէտի մօտ և յարանիր նորան
Սիրելի որդի Պարիսի սէրը.
Եւ ասա նորան, լաւ ականջ դիր ինձ,
Գալ չորեքշաբթի... բայց ոչ, ինչ օր է:

ՊԱՐԻՍ

Երկուշաբթի, տէր իմ:

ԿԱՊԻՒԼԵՏ

Երկուշաբթի, հա, հա.
Լաւ, չորեքշաբթին շատ շուտ կըլինի.
Հինգշաբթի լինի. ասա հինգշաբթի
Պէտք է պըսակուի ագնիւ կոմսի հետ:
Իսկ գուք պատրաստ էք. այսքան շուտ լաւ է:—
Մեզ անվայել է մեծ աղմուկ հանել.—
Մէկ-երկու բարեկամ. — քանզի դու գիտես,
Մեր խեղճ Տիբալտը նոր է ըսպանուել:
Եթէ մենք շատ մեծ հանգէս կատարենք՝
Կարող են կարձել, որ մենք անհոգ ենք
Եւ չէինք սիրում մեր ազգականին:
Ուրեմն միայն մենք կըհրափընք
Հինգ-վեց բարեկամ. այդ է բոլորը:
Լաւ. ինչ էք ասում. հինգշաբթին լաւ է:

ՊԱՐԻՍ

Տէր իմ, երանի հինգշաբթի օրը

Հէնց վաղը լինէր:

ԿԱՊԻՀԻԼԵՏ
Լաւ, կարող էք գնալ:—
Հինգշաբթի ուրեմն:
(Տիկին Կապիլէտին),

Գնա Քուլիէտի մօտ, պատրաստիր նըրան
իր հարսանիքի որոշուած օրուան:—
Գնաք բարով, պարոն:— Տըզերք, ճրադ բերեք
իմ սենեակիս մէջ:— Ալնքան շատ ուշ է:
Որ մի քիչ լետոյ շատ վաղ կըլինի:
Զեզ գիշեր բարի:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱԿԵ.

Զուլիէտի սենեակը.

Մանում են ընտէօ և ԶՈՒԼԻԷՏ:

ՃՈՒԼԻԷՏ

Գընալ ես ուզում. գեռ լոյսը մօտ չէ.
Մի սոխակ էր այն, ոչ թէ արտուտը,
Որ խոցեց փոսը երկշոտ ականջիդ:
Նա ամեն գիշեր գալիս երգում է
Նըրան ծառի վըրալ. հաւատա՛, հոգիս,
Սոխակն էր:

ՇՈՒՄԾ

Սրտուտն էր, լոյսի մունետիկը,
Ոչ թէ սոխակը. նայիր, սիրական,
Տես ինչ նախանձոտ լուսեղէն շերտեր
Եզրազարդում են անջատ ամպերը

ՏԵՍԱՐԱԿԵ

Հայր Լորէնսի խուցը.

Մանում է ՀԱՅՐ ՅՈՎԱՆՆԻՍ:

ՀԱՅՐ ՅՈՎԱՆՆԻՍ

ՈՎ սուրբ Ֆրանսիսկեան, եղբայր, ինձ նայիր:
(Մանում է Հայր Լորէնս):

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Հայր Յովհաննէսի ձայնի նըման է:—
Մանտուայից եկար, գալուստը բարի:
Ի՞նչ ասաց Ռոմէօն. կամ եթէ իր միտքը
Գրով է հաղորդել՝ տուր ինձ նամակը:

ՀԱՅՐ ՅՈՎԱՆՆԻՍ

Գնացել էի գըտնել մի բորիկ եղբայր
Մեր ուխտից, որ ինձ հետ ուղեկից լինի.
Նա քաղաքի մէջ հիւանդների մօտ
Այցի էր գնացել. երբ նըրան գըտայ՝
Խոկոյն քաղաքի խուզարկուները
Մեզ հանդիպելով այնպիսի տան մէջ,
Ուր կարծում էին որ ժանտամահ կար՝
Գոները կընքեցին, մեզ դուրս չըթողին,
Եւ իմ մեկնումըս դէպի Մանտուա
Ալսպէս աղգելուեց:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Ուրեմն ով տարաւ

Գիրըս Ռոմէօլին:

ՀԱՅՐ ՅՈՎԱՆՆԻՍ

Ոչ ոք. ուղարկել
Զըկարողացալ, — առեք, լետ տամ ձեզ:

Կանխեց այն ատեն ապագայ պէտքըս.
Եւ ալժմ միւնոյն չըքաւոր մարդը
Պէտք է ծախէ ինձ: Որչափ լիշում եմ
Այս է այն տունը: Այսօր տօն լինելով՝
Խեղճ մուրացկանի խանութը գոց է:—
Օհօ, գեղավաճառ:

(Մտնում է դեղավաճառը):

ԴԵՂԱՎԱՃԱՐԻ

Ո՞վ է ինձ կանչում

Այդքան բարձրածայն:

ՌՈՄԷԾ

Եկ այստեղ, այ մարդ:—
Ես իմանում եմ, որ դու աղքատ ես,
Ահա, ըստացի՞ր քառասուն դուկատ.
Տուր ինձ մի չափ թոյն, չուտասփիւռ մի գեղ,
Որ իսկոյն տարածուի երակներիս մէջ,
Եւ կեանքից յոգնած նորա խըմողը
Ուղղակի մեռած գետին տապալուի,
Եւ նորա մտրմնից հալածուի ջունչը
Այնպէս ուժգնութեամբ՝ որպէս փախչում է
Վառուած վառօդը ժանտ թընդանօթի
Որովայնից դուրս:

ԴԵՂԱՎԱՃԱՐԻ

Ճիշդ է, ես ունիմ

Այդպիսի ուժգին մահացու թոյներ.
Բայց Մանտուալի օրէնքը՝ մահ է
Դորանց ծախողին:

ՌՈՄԷԾ

Ի՞նչ, այդպէս մերկ ես,
Այդպէս չըքաւոր, և գեռ մեռնելուց
Դու երկիւղ ունիս. սով կալ թընշիդ վըալ.
Կարիք և տանջանք հագի են տալիս
Այդ աչքերիդ մէջ. կըռնակիդ վերալ

Կախուած է մաշուած թըշուառութիւնը:
Ո՞չ այս աշխարհն է քեզ հետ բարեկամ,
Ոչ իր օրէնքը. աշխարհը չունի
Մի օրէնք, որ քեզ հարըստութիւն տայ:
Ուրեմբն դու էլ աղքատ մի լինիր.
Այլ բեկիր դու տյն, և առ այս ինձնից:

ԴԵՂԱՎԱՃԱՐԻ

Թըշուառութիւնս է յօժարում դորան,
Բայց ոչ իմ կամքըս:

ՌՈՄԷԾ

Ես վըճարում եմ
Քո թըշուառութեան, ոչ թէ քո կամքիդ:
ԴԵՂԱՎԱՃԱՐԻ
Դիր այս որեւէ մի հեղուկի մէջ,
Եւ խըմիր ամբողջ եթէ ունենաս
Քըսան մարդու ոլժ դա քեզ ուղղակի
ծանալարհ կըդնէ:

ՌՈՄԷԾ

Ահա քո ոսկիդ.
Վատթար թոյն՝ մարդկանց հոգիների համար,
Եւ որ նողկալի այս աշխարհի մէջ
Գործում է առաւել ըսպանութիւններ,
Քան թէ այս խեղճուկ բաղադրութիւնքը,
Որոնց ծախելու հրաման չըկալ քեզ:
Թոյնն այն է, որ ես քեզ վաճառեցի,
Եւ ոչ թէ դու ինձ: Գընա, Տէր լնդ քեզ:
Կերակուր գընիր, մի քիչ գերացիր:—
Ե՞կ դու, կազդուրիչ, ոչ թոյն. Եկ ինձ հետ
Զուլիէտի դամբանը. այնտեղ քեզ կըմպեմ:
(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ

Հայր Լորէնսի խողը.

Մտնում է ՀԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ:

ՀԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ով սուրբ Ֆրանսիսկեան, եղբայր, ինձ նալիք:
(Մտնում է Հայր Լորէնս):

ՀԱՅԻ ՀՈՐԷՆՍ

Հայր Յովհաննէսի ձախնի նրման է:—
Մանտուայից եկար, գալուստըդ բարի:
Ի՞նչ ասաց Ռոմէօն, կամ եթէ իր միտքը
Գրով է հազորդել՝ տուր ինձ նամակը:

ՀԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գնացել էի գըտնել մի բոբիկ եղբայր
Մեր ուխտից, որ ինձ հետ ուղեկից լինի.
Նա քաղաքի մէջ հիւանդների մօտ
Այցի էր գնացել. երբ նըրան գըտայ՝
Դսկոյն քաղաքի խուզարկուները
Մեզ հանդիպելով այնպիսի տան մէջ,
Ուր կարծում էին որ ժանտամահ կար,
Դուները կընքեցին, մեզ դուրս չըթողին,
Եւ իմ մեկնումը գէպի Մանտուա
Այսպէս արգելուեց:

ՀԱՅԻ ՀՈՐԷՆՍ

Ուրեմն ով տարաւ
Գիրըս Ռոմէօլին:

ՀԱՅԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ոչ ոք. ուղարկել
Չըկարողացաւ. — առէք, յետ տամ ձեզ:

Արևելքի մէջ: Գիշերի ջահերը
Վասուել են պըրծել, և ուրախ ցերեկը
Ուրքի մատի վրայ ելնում է կանգնում
Այն մառախլապատ լեռների ծալըին:
Պէտք է գնամ և ապրիմ, կամ մնամ և մեռնիմ:

ԶՈՒՀԻԾ

Ո՛չ չէ այն լոյսը առաւօտուայ լոյս.
Ես ճանաչում եմ, մի մետէօր է,

Որ արեգակը արտաշընչում է՝

Որ ջահակիրըդ լինի այս գիշեր

Եւ լուսաւորէ քո ճանապարհը

Դէպի Մանտուա: Կաց գեռ ուրեմըն,

Գեռելը շուտ է. ինչու ես մեկնում:

ՐՈՄՔԾ

Թող ձերբակալեն և ըսպանեն ինձ.

Խօսք չունիմ բընաւ՝ թէ քեզ հաճոյ է:

Լաւ, ես էլ կասեմ, որ այն գորշ լոյսը

Զէ առաւօտեան աչքը լուսասփիւռ,

Ալ ցոլքն է գըժգոյն Սինթիալի ճակտի.

Եւ արտուտ չէր այն, որի շեշտերը

Այնչափ բարձրագոյն սըլանում էին

Երկնակամարում, մեր գըլխի վերե:

Ես շատ առաւել տենչ ունիմ մնալու՝

Քան կամք գընալու: Եկ, մահ, եկ բարով,

Քանզի ալդպէս է Զուլիէտի կամքը:

Ի՞նչպէս ես, հոգիս. խօսինք, գեռ լոյս չէ:

ԶՈՒՀԻԾ

Օհ, լոյս է, լոյս է. վազիր, շնւտ, գընա:

Արտուտն է երգում այս խըռապոտ ձախով

Եւ արձակում է շեշտեր խառնածալն,

Սուր անդիւր նօտեր: Ոմանք ասում են,

Թէ արտուտն ունի անոյշ գեղգեղանք:

Այս մէկն ալդպէս չէ. ստ դառն է օաստիկ,
Քանզի բերում է մեր մէջ բաժանում:
Ոմանք ասում են՝ գորտն ու արտուտը
Փոխանակում են իրանց աչքերը ^{*)}.
Ա՛խ, երանի թէ փոխանակէին
Իրանց ձայներն էլ. քանզի ալդ ձայնը
Բաժանում է մեզ ահաբեկութեամբ
Իրարու գըրկից, հալածելով քեզ
Վաղորդեան հարայով: Օ՛հ, գընա դու ալժմ.
Լոյսը հետըզհետ պայծառանում է:

ՐՈՒՄԷԾ

Լոյսը հետըզհետ պայծառանում է.—
Մութը հետըզհետ տիրում է մեր վրայ:
(Մտնում է դայեակը)

ԴԱՅԵԱԿ

Տիկին: ՀՈՒՅԵԱԿ
ՀՈՒՅԵԱԿ
Ի՞նչ է, դայեակ:

ԴԱՅԵԱԿ

Զեր մալը հիմա գալու է այստեղ:
Լոյսը բացւում է. զգոյշ եղէք, ըզգոյշ:

ԶՈՒՅԵԱԿ

Ուրեմն, լուսամուտ, լոյսը թող ներս գայ,
Կեանքը դուրս գընայ:

ՐՈՒՄԷԾ

Մնաս բարով, մնաս բարով:
Մի համբոյը ևըս՝ և ես ցած կիջնեմ:

ԶՈՒՅԵԱԿ

Ուրեմըն գնացիր, ախ, սիրականըս,

^{*)} Գորտերը շատ գեղեցիկ աչքուր, և արտուտները շատ տղեղ աչքեր ունենալով՝ ուամիկ ժողովրդի մէջ մի ասացուած կար, թէ դորան ու արտուտը փոխանակել են իրենց աչքերը: Ծ. Թ.

Տէրըս, ամուսինս և բարեկամըս.
Պէտք է որ օրուայ ամեն մէկ ժամին
Ինձ լուր ուղարկես. ամեն մի ըոպէն
Պարունակում է իր մէջ շատ օրեր:
Օ՛հ, ես ալդ հաշուով շատ ծեր կըլինիմ
Երբ կըրկին տեսնեմ իմ Ռոմէօլիս:

ՐՈՒՄԷԾ

Օ՛հ, մընաս բարով. առիթ չեմ փախցնիլ՝
Որ չուղարկեմ քեզ ողջոյնս ու սէրըս:

ԶՈՒՅԵԱԿ

Օ՛հ, կարծում ես դու, որ կըրկին անգամ
Կըտեսնենք միմեանց:

ՐՈՒՄԷԾ

Սնշուշտ կըտեսնենք,
Եւ մեր այս քաշած բոլոր ցաւերը
Մի օր մեզ համար քաղցը տառելիսի
Մի նիւթ կըլինին:

ԶՈՒՅԵԱԿ

Ա՛խ, Տէր իմ Աստուած.
Իմ հոգիս լի է չար դուշակութեամբ:
Հիմա որ ցածն ես՝ կարծես այստեղից
Ես քեզ տեսնում եմ որպէս մի մեռեալ
Գերեզմանի մէջ. կամ տչքս է խաբում,
Կամ խիստ գըժգոյն ես:

ՐՈՒՄԷԾ

Հաւատա, հոգիս,
Հէնց ճիշդ ալդպէս ես և դու իմ աչքիս:
Յամաք կըսկիծը մեր արիւնն է ըմպում.
Մնաս բարով, մընաս բարով:

ԶՈՒՅԵԱԿ

Բախտ, ով բախտ,
Մարդիկ ասում են՝ դու յեղիեղուկ ես.

Թէ յեղեղուկ ես՝ դու ի՞նչ գործ ունիս
Այնպիսի մարդու հետ, որ անուանի է
Տոկունութեան մէջ: Յեղեղուկ եղիք, բախտ
Քանզի յոյս ունիմ, որ այն ժամանակ
Չես պահել նըբան շատ երկար քո մօտ,
Այլ յետ կուզարկես:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ (Ներսից)

Հօ, աղջիկ, զարթուն ես:

ԶՈՒՀԻԼՀԸ

Ով է ինձ կանչում. իմ տիկին մայրս է:
Միթէ այսքան ուշ գեռ նա չէ քընել,
Թէ այսքան վաղ է զարթել իր քընից:
Արդեօք ի՞նչպիսի անսովոր պատճառ
Բերում նըբան:

(Մտնում է Լէդի Կապիւլու)

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Ի՞նչպէս ես, Զուլիէտ:

ԶՈՒՀԻԼՀԸ

Տիկին, ես լաւ չեմ:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Դեռ արտասում ես Տիբալտի վերալ:
Ի՞նչ է. ուզում ես քո արցունքներով
Լրւանալ նըբան իր գերեզմանից:
Եթէ մինչև իսկ կարողանալիք՝
Բայց կենդանացնել դու կարող չէիր:
Ուրեմն բաւ է. մի քիչ ողբ ու լաց
Նշան է շատ սիրով. բայց շատ ողբ ու լաց
Նըբան քիչ խելքի:

ԶՈՒՀԻԼՀԸ

Թող գեռ արտասուեմ

Այնպիսի զգալի կորըստի վերաբ:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Դու դեռ կարող ես ըզդալ կորուստը.
Բայց քո մօտ չես ըզդալ այն բարեկամին,
Որին ողբում ես:

ԶՈՒՀԻԼՀԸ

Այնքան խիստ եմ զգում
Այդ ծանրը կորուստն, որ ի՞նչպէս չողբամ
Այդ բարեկամին մինչեւ յաւիտեան:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Ես գիտեմ, աղջիկ. այնչտի չես լացում
Նորա մահուան վրալ՝ որչտփ նրա համար,
Որ կենդանի է գեռ այն ողբիկան,
Որ նրան ըսպաննեց:

ԶՈՒՀԻԼՀԸ

Ի՞նչ ողբկալ, տիկին:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Այն ողբկան, Ռոմեօն:

ԶՈՒՀԻԼՀԸ

Նա, և ողբիկալ՝
Են հազար մըզոն միմեանցից հեռու:
Աստուած նորան ներէ. իսկ ես ներում եմ
Իմ բոլոր ողբտով: Եւ սակայն ոչ ոք
Սիրտը չէ ալընել տիգ մարդու նըման:

ՀԵԴԻ ԿԱՄՈՒՀԻԼՀԸ

Պատճառը այն է, որ դաւաճանը
Դեռ կենդանի է:

ԶՈՒՀԻԼՀԸ

Ալո՛, ալո՛, տիկին,
Եւ այնքան հեռու իմ բազուկներից:
Աշխ, ես կուզէի, որ ինձ, ինձ միայն
Իրաւունք տըրուէր այդ վրէժը լուծել:

ՀԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

ՄԵՐ ՎՐԵՄԸ ԿՈՍՏՈՒԵՆք, միամիտ եղիր:
ՄԻ ՀԱՐ ուրեմըն: Ես կըգրեմ մէկին
Մանտուալի մէջ, ուր որ ապրում է
Այդ նոյն աքսորուած թշշուտականը,
ՈՐ նորան խըմցնէ այնչափ թունդ մի թուն՝
ՈՐ իսկոյն գընալ և Տիբալտի հետ
Ուղեկից լինի. յայնժամ, յուս ունիմ,
Դու գոհ կըլինիս:

ԶՈՒՀԻԼԵՑ

Ես գոհ չեմ լինի
Մինչեւ չըտեսնեմ այդ Ռոմէօլին...
Մեռած, խոցոտուած է սիրտըս այնքան
Խեղճ ազգականիս մահուան պատճառով:
Տիկին, թէ մի մարդ կարող էք գըտնել
ՈՐ թունը տանի՝ ես մի թուն կշինեմ,
ՈՐ այդ Ռոմէօն բերնին չըզարկած
Հանդիստ քընանալ:
Օ՛, ի՞նչպէս սիրտըս ալրւում է, մըրկում,
Երբ որ լըսում եմ նորա անունը.
Եւ անկարող եմ հասնել նըրա մօտ
Եւ զովացընել նըրա մարմնի վըրալ
Այն սիրոյ պապակը, որ ես ունէի
Գէպ իմ ազգական ալն խեղճ Տիբալտը:

ՀԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Դու միջոց գըտիր, ես մարդ կըգըտնեմ:
Բայց հիմա, աղջիկ, քեզ ուրախ լըրեր
Պէտք է հաղորդեմ:

ԶՈՒՀԻԼԵՑ

Ուրախութիւնը
Ի գէպ է գալիս, երբ նա գալիս է

Սլոքան խընդազուրկ ժամանակներում:

Այդ լըրերն էնչ են, ասացէք, տիկին:

ՀԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Լաւ, աղջիկ. դու ունիս բարեխնամ մի հալո,
Որ քեզ այդ վըշտից հանելու համար
Հնարել է յանկարծ ցընծութեան մի օր՝
Որին դու երբէք չէիր ըսպասում,
Ոչ էլ ես ինքըս:

ԶՈՒՀԻԼԵՑ

Ի սէր Աստուծոյ,

Ի՞նչ է այդ օրը:

ՀԵՂԻ ԿԱՊԻՀԻԼԵՑ

Այն է, զաւակըս,
Որ գալ հինգչաբթի վաղ առաւօտեան
Քաջ, ազնիւ, տոհմիկ ազնըւականը
Սիրուն կոմս Պարիս՝ սուրբ Պետրոսի մէջ
Քեզ բախտ կունենալ առաջնորդելու
Որպէս ուրախ հարս:

ԶՈՒՀԻԼԵՑ

Վըկալ սուրբ Պետրոսի
Այդ եկեղեցին, և ինքը Պետրոս՝
Որ ինձ ուրախ հարս չի տանիլ այնտեղ:
Ես զարմանում եմ այս հապճեալի վրայ,
Որ հըամայում է ինձ ամուսնանալ՝
Նախ քան փեսացուն գէթ ինձ մօտ եկած
Սէր յալտնած լինի: Խընդըրում եմ, տիկին,
Ասացէք հօրըս, որ գեռ կամք չունիմ
Ամուսնանալու. և երբ ունենամ՝
Երգւում եմ, որ ես կընախընտրէի
Այն Ռոմէօլին, որին դուք գիտէք
Որքան ատում եմ, քան այդ Պարիսին:
Վահ, ալդ էլ լուր եր:

ՀԵՂԻ ԿԱՊԻԻԼԵՑ'
ԱՀԱ, ՀԱՐՊ ԵԿԱւ.
ԻՆՔՊ ասա նորան, և տես ինչ կերպով
ԿԸՆԴՈՒՆԻ նա այդ:

(Մտնում են կապիլէտ և գայնակը):

ԿԱՊԻԻԼԵՑ

ԵՐԲ որ արեց անհետանում է՝
Օդը երկրի վրայ ցող է շաղ տալիս:
Բայց եղբօրորդուս արեից յետոյ
Անձրեռմ է յորդ:
Ի՞նչ է, աղջիկը. աղքէւր ես դարձել.
Դեռ արտասւում ես, գեռ տարափում ես:
Փոքրիկ մարմնի մէջ դու ձեացրել ես
Մի նաւակ, մի ծով և հողմեր ուժգին:
ԱՀԱ աչքերը, որ ծով են դարձել,
Ուսին դեռելս արտասուքների
Մակընթացութիւն և տեղատուութիւն:
Նաւը մարմինդ է, որ նաւարկում է
Այդ աղի ծովի վրայ. հողմ հառաջները,
Որոնք մըրցելով արցունքներիդ հետ,
Եւ նոքա նրանց հետ՝ (թէ յանկարծակի
Մի հանդարատութիւն վերջ չըտալ դորան)
Քո փոթորկածուփ փոքրիկ մարմինը
Նաւաբեկ կանեն: — Ի՞նչ է, այ կընիկ.
Սրգեօք յախնեցիր մեր կամքը նորան:

ՀԵՂԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Այն, տէր, յախնեցի. բայց նա մերժում է.
Ասում է չեմ ուզում, շընորհակալ եմ.
Գերեզմանի հետ նա ամուսնանայ:

ԿԱՊԻԻԼԵՑ

Կեցիր, այ կընիկ. կեցիր, մէկ տեսնեմ:
Ի՞նչ, չէ ընդունում. շնորհակալ չէ նա.

Պարծանք չէ կարծում այդ անարժանը,
Բախտ չէ համարում, որ մենք իր համար
Գլուել ենք ազնիւ մի ազատանի
Փեսայ լինելու:

ՃՈՒԼԻԷՑ

Պարծենալ չեմ կարող.
Բայց շնորհակալ եմ ձեր արածի համար:
Ի՞նչպէս պարծենամ ատածըս բանով:
Բայց շնորհապարտ եմ նոյն իսկ չարութեան
Երբ դա արուած է բարութեան մըտքով:

ԿԱՊԻԻԼԵՑ

Ի՞նչ է այդ, ե՞նչ է. լիմար իմաստակ.
Այդ ի՞նչ խօսքեր են. պարծանք է, եւ չէ.
Ես շնորհակալ եմ, եւ շնորհակալ չեմ:
Օրինրդ փափկասուն, ինձ լաւ ականջ դիր:
Կուզես պարծեցիր, կուզես մի պարծենար,
Շնորհակալ եղիր, և կամ մի լինիր.
Բայց դու պատրաստիր գողտըիկ ոտներըդ,
Որ միւս հինգշաբթի կոմս Պարիսի հետ
Սուլը Պետրոս գընաս. եթէ ոչ ես քեզ
Մահապարտի պէս սալլով քարշ կըտամ: —
Կորիր, դեղնած դի. կօրիր, կեղտու շոր,
Մըրոտած երես:

ՀԵՂԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Ամօթ է, ամօթ.

Ի՞նչ է, գըժուել ես.

ՃՈՒԼԻԷՑ

Ա՛խ, բարի հալլը իմ.
Շընկաչոք խընդըում, պազատում եմ քեզ,
Մի քիչ համբերիր, թող մէկ բառ ասեմ:

ԿԱՊԻԻԼԵՑ

Պընա կորսըւիր, լիմարի կըտնը,

Անհնագանդ թըշուտու: Ես քեզ ասում եմ,
Կամ հինգաբթի օր եկեղեցի գնա՛,
Կամ իմ երեսիս չընայես մէկ էլ:
Մի խօսիր, չեմ ուզում. մի պատասխաներ.
Չեռքըս քոր է գալիս...

Ա՛յ կին, տեսնում ես. տըրտընջում էինք,
Թէ ինչու Աստուած միայն մէկ զաւակ
Է մեզ պարզեցէլ. և այժմ տեսնում ենք,
Որ մէկն էլ շատ է. և թէ մեզ համար
Մի անէծք է նա: Դուրս կորիր, անամօթ:

ԴԱՅԵԱԿ

Երկնաւոր Աստուած թող օրհնէ նըրան:—
Նատ վատ էք անում, տէր իմ, որ նըրան
Ալդքան սաստում էք:

ԴԱՅԻԻԼԵՑ

Եւ ինչու համար,
Տիկին իմաստութիւն. զըսպիր այդ լեզուդ,
Տիկին խոհեմութիւն. դնա շատախօսիր
Պառաներիդ հետ:

ԴԱՅԵԱԿ

Ես վատ չասացի:

ԴԱՅԻԻԼԵՑ

Ի սէր Աստուծոյ, թողէք ինձ. մնաք բարով:
ԴԱՅԵԱԿ

Ոչ ոք խօսելու իրաւունք չունի:

ԴԱՅԻԻԼԵՑ

Սուս, միմար բարբանջող. խելօք խօսքերըդ
Պահիր սանամօրդ բաժակի համար.
Մենք կարիք չունինք:

ԼԵՐԻ ԴԱՅԻԻԼԵՑ

Ետտ էք տաքացել:

ԴԱՅԻԻԼԵՑ

Աստուած վըկալ է, ես կըխենթանամ:
Յերեկ և գիշեր, ուշ, շուտ, տան մէջ, դուրսը,
Մենակ, մարդկանց հետ, արթուն, կամ քընած՝
Միշտ հոգս եմ արել նըրան պըսակել:
Ալժմ որ գըտել եմ իշխանատոհմիկ
Մի ազնորւական, կալուածների տէր,
Մատաղհաս, բարեկիրթ, որ խըճողուած է,
Ինչու տառմ են, պատուական ձիրքերով,
Ալնպէռ օժտըւած, որսկէս կարող էր
Միտքը լըդանալ կատարեալ մի մարդ՝—
Յանկարծ մի լիմար մըռոթմըռոթող խենթուկ,
Մի լալկան տիկնիկ, փոխանակ հըրմուելու,
Որ բախտը բացուել է՝ դուրս գալ և ասէ.
«Ես չեմ պըսակուի, չեմ կարող սիրել,

Նատ դեռահաս եմ, խընդըն ինձ ներէք»:
Կըտեսնես ինչու ես քեզ կըներեմ,
Թէ չըպլսակուիս: Արածիր ուր կուզես.
Իմ տան մէջ այսուհետ չըպէտք է մընաս:
Լաւ կըշուիր, լաւ խորհիր. կատակ չեմ անում:
Հինգաբթին մօտ է. ձեռքըդ սըրտիդ դիր
Եւ լաւ մըտածիր: Թէ իմ աղջիկն ես՝
Ես պէտք է տամ քեզ իմ բարեկամիս.
Եթէ չես՝ դըժնիք, կորսըւիր, մուրա՛,
Փողոցների մէջ սովամահ եղիր:
Աստուած է վըկալ, քեզ չեմ ճանաչիլ,
Դու չես ըստանալ մի փուշ իմ տանից:
Հաստատ իմացիր, և լաւ մըտածիր:

(Դուրս է գնաւմ):

ԶՈՒԻԼԵՑ

Զըկալ գութ միթէ ամպերում թառած,
Որ ներքեւ նայի ցաւիս սըրտի մէջ:
Օ՛չ, քաղցըը մալիկ, մի ձըգել ինձ դուրս,

Այլ յետաձըդիր այս ամուսնութիւնն
Մի ամիս, մի շաբաթ. կամ թէ չես անիլ
Ապա շինիր ինձ հարսնեկան մահիճ
Այն մռալ շիրմի մէջ, ուր որ Տիբալտն է:
ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼՀԵՑ
Մի խօսիր ինձ հետ. մէկ բառ չեմ ասիլ.
Ինչ կուզես՝ այն արա. քեզ հետ գործ չունիմ:
(Դուրս է գնում).

ԶՈՒԼԻՒՑ

Աստուած իմ, Աստուած: Դայեակ, ինչ անեմ.
Ի՞նչ ճար կալ սորան, իմ ամուսինը
Երկրի վերայ է, հաւատքը երկինք:
Ի՞նչպէս հաւատքը կարող է կըրկին
Յետ գառնալ երկիր. միայն թէ ամուսինս
Ինքը երկընքից յետ ուղարկէ այդ՝
Երկրից մեկնելով: Սիրտ տուր ինձ, խորհուրդ տուր.
Ա՛խ, վայ ինձ, վայ ինձ. ինչու երկինքը
Ինձ պէս մի տըկար խեղճ էակի դէմ
Թակարդ է լարում: Գէթ մի բառ ասա.
Ոչ մի բառ չունիս, որ ինձ ըսփոփէ:
Սիրտ տուր ինձ, դայեակ:

ԴԱՅԵԱԿ

Լըսիր: Ռոմէօն աքսոր է գնացել.
Եւ ոչընչի դէմ ամբողջ աշխարհը
Ես գրաւ կըդընեմ: որ չի լանդրդնիլ
Երբ և իցէ գալ և քեզ պահանջել.
Եւ եթէ գայ էլ՝ ծածուկ պէտք է գայ:
Հիմա որ այսպէս է՝ կարծեմ լաւն այն է,
Որ ամուսնանաս կոմս Պարիսի հետ:
Օհ, ինչ սիրելի մի ջէնանելմէն է.
Ռոմէօն նորա մօտ ամանի լալի է:
Արծիւն էլ, տիկին, չունի նորա չափ

Մի դալար, աշխոյժ և գեղեցիկ աչք:
Սիրտըս սեանալ, թէ այդպէս չըլնի:
Դուր այս քո երկրորդ ամուսնութեան մէջ
Շատ երջանիկ ես: Աւելի լաւ է
Քան առաջինը. լաւ էլ չըլինի՝
Քո առաջինը արդէն մեռած է.
Կամ միւնոյն է, որ նա ողջ լինի,
Բայց անպէտ քեզ համար:

ԶՈՒԼԻՒՑ

Սըրտով ես խօսում:
ԴԱՅԵԱԿ
Սըրտով և հոգով, եթէ սուտ ասեմ:
Երկուսն էլ չըքուին:
ԶՈՒԼԻՒՑ

Ա.մէն:

ԴԱՅԵԱԿ

Ի՞նչու համար:

ԶՈՒԼԻՒՑ

Ճիշտ որ դու ինձ լաւ մըխիթարեցիր:
Գնա ասա մօրըս, որ իմ հօրըս հետ
Վատ վարուած լինելով հիմա գընում եմ
Հայր Լորէնսի մօտ խոստովանելու
Եւ արձակուելու:

ԴԱՅԵԱԿ

Լաւ, կըդնամ իսկոյն:

Դու էլ լաւ ես անում:

(Դուրս է գնում):

ԶՈՒԼԻՒՑ

Նըզովեալ պառաւ,
Օհ, դե՛ զազրելի: Ո՞րն է մեծ լանցանք.—
Կամենալ որ ես ուխտադրո՞ւժ լինիմ,
Թէ չարաքանել իմ խեղճ ամուսնուս

Միւնոյն լեզուով՝ որով ըիւր անգամ
Գովել է նրան, երկինք հասցըրել:—
Գնա, խորհրդատու, գընա, ալսուհետ
Դու և իմ սիրտը զատ էք միմեանցից:
Ես պէտք է գընամ Հայր Լորէնսի մօտ,
Որ մի հնար գըտնէ, թէ ճար չըլինի՝
Ինքը զօրութիւն ունիմ մեռնելու:

(Դուրս է պնում):

Դաժմուկա՞ զա է նամակի ափ, ու
աշխարհի մաս զա պրեկանուու
մասն ու շահցի զանա այս զգի
մասը է նախառ ու մասնաւուու
զգի մասնաւուու պատուար է ու ու

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՈՐԴ

ՏԵՍԱՐԾՆ Ա.

Մանում հն ՀՈՅԻ ԼՈՐԷՆՍ և ՊԱՐԻՍ,

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Հինգշաբթի, տէր իմ. կարձ է միջոցը:

ՊԱՐԻՍ

Կապիւլէտ հօրըս փափագն այդպէս է.
Ես էլ խօսք չունիմ այդ ըշտապի դէմ:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Բայց դու ասում ես, որ դեռ չըգիտես
Հարսնացուի կամքը: Անհարթ է այդ ուղին.
Ես չեմ հաւանում:

ՊԱՐԻՍ

Չափազանցօրէն

Արտասում է նա Տիբալտի վերայ.
Եւ այդ պատճառով՝ ես սիրոյ մասին
Չեմ խօսած իր հետ. քանզի Աստղիկը
Չէ ժըստում մի տան մէջ՝ ուր արտասուք կայ:
Բայց նորա հայրը խիստ վըտանգաւոր
Համարում է այդ, որ նորա դուստրը
Թողնում է վիշտը մինչ այդ աստիճան
Իշխէ իր վերայ, և, խոհեմութեամբ,

Նա վութացնում է մեր հարսանիքը՝
Արտասուրքների այդ բուռն հեղեղին
Վերջ տալու համար: Վիշտը, որ այնքան
Առանձնութեան մէջ տանջում է նըրան:
Գուցէ փարատուի ընկերութեան մէջ:
Հիմա հասկացաք, ինչ է պատճառը
Այդ արտորանքի:

Հ. ՀՈՐԻՆՍ (Առանձին)

Երնէկ չիմանալի
Այն պատճառները, որոնք պարտ էին
Յապագեցնել այդ: — Բայց ահա, պարոն,
Տիկինն ինքն եկաւ դէպ իմ սենեակը:

(Մտնում է Զուլիւտ):

ՊԱՐԻՍ

Ուրախ եմ ձեզ տեսնել, իմ տիկին և կին:

ՀՈՒԼԻԷՑ

Տէր, այդ կըլինի՝ երբ ես կին լինիմ:

ՊԱՐԻՍ

Եւ այդ կըլինի, պէտք է որ լինի
Հինգշաբթի օրը, իմ անուշիկը:

ՀՈՒԼԻԷՑ

Ինչ լինելու է՝ կըլինի, տէր իմ:

ՀԱՅՐ ՀՈՐԻՆՍ

Ահա լստորդ խօսք:

ՊԱՐԻՍ

Եկել էք տէր հօր մօտ
Խոստովանելու:

ՀՈՒԼԻԷՑ

Գեղ պատասխանել՝
Կըլինէր ձեր մօտ խոստովանք անել:

ՊԱՐԻՍ

Յալտնեցէք նորան, ո՞ւ ինձ սիրում էք:

ՀՈՒԼԻԷՑ

Ես ձեզ կըյալտնեմ, որ նրան սիրում եմ:
ՊԱՐԻՍ

Ես վըստահ եմ, որ կըխոստովանիք,
Թէ ինձ սիրում էք:

ՀՈՒԼԻԷՑ

Թէ խոստովանիմ՝
Դա շատ առաւել յարգի կըլինի
Չեր չեղած տեղը՝ քան թէ ձեր առաջ:
ՊԱՐԻՍ

Խեղճիկ, ձեր դէմքը շատ աւերուած է
Արտասուրքներով:

ՀՈՒԼԻԷՑ

Նոքա չեն շահած
Շատ մեծ յաղթանակ. նա վատ էր արդէն
Երբ չէր աւերուած արտասուրքներից:

ՊԱՐԻՍ

Չեր խօսքն առաւել մեծ թըշնամանք է
Չեր երեսի դէմ՝ քան արցունքները:

ՀՈՒԼԻԷՑ

Զըրպարտանք չէ այդ, այլ ճըշմարտութիւն:
Ինչ որ ասացի՝ երեսիս ասացի:

ՊԱՐԻՍ

Չեր երեսն իմս է. և ձեր արածը
Զըրպարտութիւն է:

ՀՈՒԼԻԷՑ

Գուցէ այդպէս է, քանզի իմըս չէ:—
Ազատ էք, հայր սուրբ, թէ այս գիշեր գամ
Իրեկնապահի պատարագից յետ:

ՀԱՅՐ ԼՈՂԵՆՍ

Այն, ազատ եմ, մըտախնհ դուստը իմ:—
(Կոմս Պարիսին)

Տէր իմ, մեղ պէտք է առանձին լինել:

ՊԱՐԻՍ

Աստուած ոչ անէ, որ արգելք լինիմ
Բարեպաշտութեան:— Զուլիէտ, հինգշաբթի
Վաղ առաւօտեան կարթնացնեմ ես ձեզ:
Ցախ օր մնաք բարե. և պահեցէք դուք
Ոյս սուրբ համբուրբ:

(Պարիս դուրս է գնում):

ԶՈՒԼԻԷՏ

Օ՛հ, դուռը փակեցէք,
Եւ յետով եկէք և ինձ հետ լացէք:
Ոչ լոյս կայ, ոչ ճար կայ, ոչ օգնութիւն կայ:

ՀԱՅՐ ԼՈՂԵՆՍ

Ա՛հ, Զուլիէտ, արգէն ես ցաւըդ գիտեմ.
Դա ինձ լարում է առաւել սաստիկ՝
Քան բոլոր ոլժը իմ ունակութեանց:
Լըսում եմ, որ դու հինգշաբթի օրը
Պէտք է պըսակուիս այս իսկ կոմսի հետ,
Եւ ոչինչ չէ կարող այդ յետաձըգել:

ԶՈՒԼԻԷՏ

Մի ասեր, հայր սուրբ, որ լըսել ես այդ՝
Առանց ասելու, թէ ինչպէս անեմ
Որ այդ խափանեմ. եթէ հանձարըդ
Մի ճար չըգըտնէ՝ ապա ընդունիր
Որ իմաստուն է իմ որոշումը—
Եւ այս դաշունով իսկոյն ճար կանեմ:
Ես և Ռոմէօն կապուած ենք միմեանց.
Աստուած մեր սըրտերն իրար գուգորդեց,
Դու՝ մեր ձեռքերը. և նախ քան այս ձեռքը,

Որ դու ես կընքել Ռոմէօյի հետ,
Մի նոր դաշնագրի դրոշմիջը դառնալ,
Կամ աննենդ սիրտըս դաւաճանութեամը
Երես դարձընէ գէպ ուրիշ մի մարդ՝
Սա պէտք է սպաննէ այն երկուսին էլ:
Ուրեմըն իսկոյն մի խորհուրդ տուր ինձ
Քո երկարամեալ փորձառութիւնից:
Եթէ ոչ՝ ահա տագնապիս և իմ մէջ
Այս արիւնահեղ դաշոյնը կըլնի
Մեզ իրաւարար, դատելով մի վէճ,
Որ ոչ տարիքիդ իմաստութիւնը
Եւ ոչ արուեստըդ՝ պատուաւոր կերպով
Լուծել կարացին: Թէ՛հ, ինձ կարձն ասա:—
Թէ ասելիքըդ ինձ մի ճար չանէ,
Ես ունիմ մեռնելու մի անզուսպ փափագ:

ՀԱՅՐ ԼՈՂԵՆՍ

Ըսպասիր, դուստը իմ. Ես նըշմարում եմ
Դիու մի տեսակ յոյս, որ պահանջում է
Նոյնչափ յուսահատ մի գործադրութիւն՝
Որչափ յուսահատ է այն չարիքը,
Որին ուզում ենք գորանով վերջ տալ:
Եթէ պատրաստ ես անձնասպան լինել,
Քան ամուսնանալ կոմս Պարիսի հետ,
Թէ այդ ոյժն ունիս՝ գուցէ այդ գէպում
Դու կըձեռնարկես մահուան պէս մի բանի,
Այս անարգանքից խոյս տալու համար,
Դու որ յօժար ես նոյն իսկ բուն մահուան:
Թէ ունիս բաւական քաջամըրտութիւն՝
Ես կըտամ ճարը:

ԶՈՒԼԻԷՏ

Օ՛հ, հրամայիր ինձ
Յատկել կատարիցն այն աշտարակի,
Շըրջել գողերի շաւիղների մէջ,

Կամ սողալ մի տեղ, ուր օձեր վըխտան.
Բայց մի հրամայեր ինձ ամուսնանալ
Կոմս Պարիսի հետ։ Նըղթայիր դու ինձ
Աշեղամըունչ տրջերի հետ խառն,
Կամ թէ թագցըըու գիշեր ժամանակ
Գերեզմաննոցում, դիզիր իմ վերայ
Մեռեալ մարդերի շաշուն ոսկորներ,
Զազիր գարշահոտ և սև ոլոքներ,
Մըսերը թափուած, դեղնած կառափներ։
Կամ հրամայիր ինձ մըտնել նոր շինուած
Գերեզմանի մէջ, և թաքչել այնտեղ
Մի մեռեալի հետ, իր պատանի մէջ,
Այնպիսի բաներ, որ լըսելն անգամ
Ինձ դողացըել է. — և ես պատրաստ եմ
Անել բոլորը անվախ, անվարան,
Միայն թէ մընամ անարատ մի կին
Սիրածիս համար։

ՀԱՅՐ ԼՈՐԻՆՈՒ

Լըսիր ուրեմըն։
Տուն վերադարձիր, ուրախ ձեւացիր.
Հաւանութիւն տուր կոմս Պարիսի հետ
Ամուսնանալու. վաղն չորեքշաբթի է.
Եւ վաղը գիշեր այնպէս կարգադրիր
Որ մենակ քընես. մի թող դայեակըդ
Գայ սենեակիդ մէջ։ Առ այս սըրուակը,
Եւ երբ անկողին մըտած կըլինիս
Խըմիր այս բոլոր թորած հեղուկը.
Եւ անմիջապէս երակներիդ մէջ
Կըվազէ մի պաղ, թըմբեցուցիչ հիւթ։
Բազկերակդ ալլսու
Զի զարկիւ բնական շարունակութեամբ,
Ալլ կըդադարի. ոչ շունչ, ոչ ջերմութիւն
Չեն յալտնիլ որ դեռ դու կենդանի ես.

Քո շըրթունքներիդ, այտերիդ վարդերն
Իսկոյն կըխամըին, մոխրի գոյն կառնեն.
Կըգոցուին աչքերիդ լուսամուտները,
Որպէս թէ մահը արտաքսած լինէր
Կեանքի արել. ամեն մի մասնիկ,
Զըրկուելով ճապուկ իր գեկավարից՝
Կինի փայտացած, կարծը ու սառցալին.
Որպէս մահն ինքը։ Եւ մեռելային
Այս առերևոյթ նըմանութեան մէջ
Կըմընաս ամբողջ քառասներկու ժամ.
Յետոյ կըգարթնես զերթ անոյշ քընից։
Սրդ, առաւոտը, երբ որ փեսան գայ
Քեզ զարթեցնելու՝ նա քեզ կըգրտնէ
Մահճիդ մէջ մեռած։ Յետոյ, (մեր երկրի
Սովորութեան պէս), քեզ կըհագցընեն
Ամենասիրուն քո ըզգեստներդ,
Եւ երեսըդ բաց, քո դագաղիդ մէջ,
Քեզ կըփոխագրեն այն հին շերիմը՝
Ուր որ հանգչում են Կապիւլէտների
Տոհմակիցները։ Այդ նոյն ժամանակ,
Նախ քան ըսթափուիս՝ ես Ռոմէօլին
Նամակով լուր կտամ մեր հնարքի մասին,
Նա, ալստեղ կըգայ, և մենք միտօին
Կըհըսկենք մինչև դու քընից զարթնես.
Եւ հէնց նոյն գիշեր նա քեզ կըտանի
Իր հետ Մանտուա։ Սա քեզ կազատէ
Ներկայ ամօթից, եթէ սընոտի
Մի լողդողդութիւն կամ վախ կանացի՝
Սըրտաթափ չանէ արիութիւնըդ
Գործի ըոպէին։

ԶՈՒԼԻՀՑ

Տուր ինձ, օչ, տուր ինձ.
Մի խօսիր դու ինձ երկիւզի վերայ։

ՀԱՅՐ ՀՈՐԵՆՍ

Առ, գընա, անխախտ, բախտաւոր եղիք
Քո որոշման մէջ ես իսկոյն և եթմոխալ
Մեր եղբայրներից մէկին կուզարկեմ քոչոյ
Դէսի Մանտուա, տալով մի նամակ չքայլ
Ամուսնիդ համար:

ԶՈՒՀԻԼՀԸ

Դա ինձ կըփըրկէ:
Աշը, դու ինձ ոլժ տուր: Մնաս բարով,
Հայր սուրբ:
(Դուքս են զնում):

ՏԵՍԱՐԾԵՐ

Կապիւլէտի տանը.

Մանում են ԿԱՊԻՒԼԷՏ, ԼԵԳԻ ԿԱՊԻՒԼԷՏ, ԳԱՅԵՍԿ և ԾԱՌԱՆԵՐ.

ԿԱՊԻՒԼՀԸ (Ա. ծառային տալով մի թուղթ)

Պէտք է հրաւիրես բոլոր հիւրերին,
Որոնց անուններն ալսուել գըրուած են:
(Բ. Ծառային)

Իսկ դու, այ տըզալ, դու էլ գնա վարձիր
Մի քըսան հոգի ճարպիկ խոհարար:

Բ. ծԱՌԱՅ

Վատ խոհարար չէք ունենալ, տէր իմ. որովհե-
տւ առաջ կփորձեմ, թէ նոքա իրենց մատերը կարող են
լիզել թէ ոչ:

ԿԱՊԻՒԼՀԸ

Ալդ բնչ տեսակ փորձել է:

Բ. ծԱՌԱՅ

Բահ, տէր իմ. ինչ խոհարար որ իր մատերը չլիզէ
նա վատ խոհարար է. ալդ պատճառով ով որ մատերը
չլիզէ ես նրան չեմ բերի:

ԿԱՊԻՒԼՀԸ

Լաւ է, գնա: (Յառան զուրս է գնում),
Այս անգամ սաստիկ անպատճաստ ենք մենք:

(Գայեակին)

Աղջկըս գընաց Հայր Լորէնսի մօտ:

ԴԱՅԵՆԱԿ

Այս, գնաց այնտեղ:

ԿԱՊԻՒԼՀԸ

Շատ լաւ, նա գուցէ

Լաւ ազգեցութիւն գործէ նորա վրայ:

Ինչ յամառ խոռվկան մի քած է եղել:

(Մտնում է Զուլիէտ):

ԴԱՅԵՆԱԿ

Նայեցէք, ահա նա ուրախ դէմքով
Վերադառնում է խոստովանանքից:

ԿԱՊԻՒԼՀԸ

Հա, իմ յամառս. ուր էիր գնացել

Ալդպէս շըրջելու:

ԶՈՒՀԻԼՀԸ

Գնացել էի մի տեղ՝
Ուր սովորեցի զըրջալ մեղքիս վրայ՝

(միա) Որ գործել էի, ընդգիմանալով

Զեր հրամաններին: Այժմ Հայր Լորէնսը

Ինձ պատուիրել է ընկնել ձեր ոտքը

Եւ ներում իրնդրել: Ներող եղէք ինձ,

Պաղատում եմ ձեզ, և այսուհետեւ

Ես միշտ կըլինիմ հըլու և հնագանդ:

ԿԱՂՋԻՀԼԵՑ

Կանչեցէք կոմսին, յայտնեցէք նորան:

Եւ կամենում եմ, որ վաղն առաւօտ

Կապուի այս կապը:

ՃՈՒՀԼԻՀԼԵՑ

Ես հանդիպեցի

Դեռահաս կոմսին Հալը Լորէնսի մօտ

Եւ սէր յայտնեցի՝ որչափ պատշաճ էր,

Առանց գուրս գալու համեստութիւնից:

ԿԱՂՋԻՀԼԵՑ

Լաւ, շատ ուրախ եմ. այդ լաւ է. վեր կաց:

Հիմա այնպէս եղաւ՝ ինչպէս որ պէտք էր:

Բայց պէտք է կոմսին ես ինքըս տեսնեմ: —

Այ տղալ, եկ, գընա, բեր նըրան այստեղ: —

Առաջած է վըկալ, այդ սուրբ քահանան

Յարգելի մարդ է, և մեր քաղաքը

Նըրան շատ բանով երախտապարտ է:

ՃՈՒՀԼԻՀԼԵՑ

Դայեակ, եկ ինձ հետ, գընանք սենեակըս,

Եւ օգնիր դու ինձ, որ կարգի գընենք

Բոլոր զարգերը՝ որ վաղուան համար

Իմ արդուզարգին յարմար համարես:

ՀԵՂԻ ԿԱՂՋԻՀԼԵՑ

Ոչ, հարկաւոր չէ. մինչեւ հինգշաբթի

Ժամանակ շատ կար:

ԿԱՂՋԻՀԼԵՑ

Դնա, դայեակ, գնա հետը: —

(Լէղի կապիւթին)

Մենք պէտք է վաղը եկեղեցի գնանք:

(Գուրս են գնում Զուլիէտ եւ Դայեակը):

ՀԵՂԻ ԿԱՂՋԻՀԼԵՑ

Մենք պատրաստ չենք լինի. արդէն գիշեր է:

ԿԱՂՋԻՀԼԵՑ

Բահ, ես կըշտապիմ. ամեն ինչ, այ կեն,

Շատ լաւ կըլինի. Ես երաշխաւոր:

Դու վեր կաց, գընա Զուլիէտտալի մօտ

Եւ օգնիր նորան, որ լաւ զարդարուի:

Այս գիշեր չեմ քնի. — առանձին թող ինձ,

Այս մէկ անդամը ես եմ տանտիկին: —

Հօ, տրդերք, ուր էք: Բոլորը գնացել են:

Լաւ, ինքըս կըդնամ կոմս Պարիսի մօտ,

Որ վաղուան համար պատրաստեմ նըրան:

Հրաշալի կերպով թեթև է սիրտը՝

Քանի որ այն նոյն յամառ աղջիկը

Նըրու է դարձել:

(Գուրս են գնում Կապիւթիտ եւ Լէղի կապիւթի):

ՏԵՍԱՐԱԿԱՎՈՐ

Զուլիէտի սենեակը.

Մտնում են Զուլիէտ և ԴԱՅԵԱԿ:

ՃՈՒՀԼԻՀԼԵՑ

Այս ըզգեստները ամենից լաւ են: —

Բայց աղաչում եմ, սիրելի դայեակ,

Որ ինձ այս գիշեր առանձին թողնես.

Շատ աղօթքների կարեք ունիմ ես,

Որ կակղացընեմ երկընքի սիրտը,

Որպէս զի ժըպտայ իմ վիճակի վրայ,

Որ ինչպէս գիտես՝ ժանտ է, մեղսալից:

(Գալիս է Լէղի կապիւթի):

ՀԷԴԻ ԿԱՊԻԻԼՀԵՑ

Ի՞նչ, ըզբաղուած էք. կուզէք ձեզ օգնեմ:

ԶՈՒՀԻԼՀԵՑ

Ոչ, տիկին, հարկ չկալ. արդէն զատել ենք
Բոլոր հարկաւոր արդուզարդերը,
Որոնք պատշաճ են վաղուայ հանդէսին:
Ուրեմն, խընդրեմ, ինձ մենակ թողէք.
Դալեակն էլ այս գիշեր թող ձեզ մօտ մընալ,
Քանզի, վըստահ եմ, գուք շատ գործ ունիք
Ալսպիսի ստիպող պարագալի մէջ:

ՀԷԴԻ ԿԱՊԻԻԼՀԵՑ

Լաւ, գիշեր բարի. անկողին մըտիր
Եւ հանգըստացիր. դա քեզ շատ պէտք է:
(Գնում են Լէդի կապիւլէտ եւ Դայիսկը):

ԶՈՒՀԻԼՀԵՑ

Օ՛չ, երթաք բարով: Աստուած միայն գիտէ,
Թէ երբ մենք միմեանց կըտեսնենք կըրկին:—
Մի սառն երկիւղ սարսում է կարծես
Երակներիս մէջ, որ սառեցնում է
Նոյն իսկ կենսական իմ ջերմութիւնը:
Յետ կանչեմ նըրանց, որ խրախուսեն ինձ:—
Դայեակ: — Բայց այստեղ նա ի՞նչ գործ ունի.
Ինձ հարկաւոր է մէն-մենակ խաղալ
Զարհուրեցուցէ իմ տեսարանը:
— Եկ, սըրուակ:—
Վահ, ի՞նչ կըլինի, թէ այս ըմպելին
Բնաւ չըներգործէ. միթէ կոմսի հետ
Պէտք է բըսնութեամբ ինձ ամուսնացնեն:
Ո՛չ, ո՞չ, սա չի թողնիլ:

(Մի դաշոյն դնելով իր կողքին)

Դու այստեղ մընա.

Եւ կամ, ո՞վ գիտէ, գուցէ սա թոյն է,
Որ խաբէութեամբ քահանան տըւաւ:

Որ ինձ մեռցընէ, մի գուցէ նա ինքն էլ
Սյս ամուսնութեամբ խալտառակ լինի.

Քանզի ինքն է ինձ Ռոմէօլի հետ
Առաջ պըսակել. օչ, վախենում եմ
Որ այդուս լինի: Բայց ո՞չ. այդպէս բան
Սնկարելի է. քանզի մինչև ալժմ
Նա ճանաչուած է որպէս մի սօւրբ մարդ.

Ո՛չ, այդչափ անարդ մի մըտածութիւն
Չպէտք է ունենամ: — Լաւ, ի՞նչ կըլինի,
Այն ինչ պառկած եմ գերեզմանի մէջ
Եթէ ըսթափուիմ նախ քան Ռոմէօն

Դայ ինձ փըրկելու. — այդ է սոսկալին:
Չեմ խեղդուի արդեօք այն շերիմի մէջ,

Որի գարշ բերնում չէ երբէք մըտել
Առողջարար օդ. և այնտեղ չեմ մեռնի

Խեղդամահ եղած՝ նախ քան Ռոմէօն
ինձ օգնութեան գայ...:

Կամ, թէ ասրիմ էլ, հաւանական չէ,
Որ զարհուրելի ներկայութիւնը

Մահու և գիշերի, և նօրա հետ կից
Այնտեղի սոսկանքը...

Մի շերիմի մէջ, հին ըշտեմարան,

Ուր հարիւրաւոր ամերից ի վեր

Իմ բոլոր թաղուած նախահայրերի

Ոսկերքն են գիզուած. ուր Տիբալտն արիւնոտ,

Դեռ թարմ, հողի մէջ նեխուում է այնտեղ

Իր պատանի մէջ. ուր, ինչպէս ասում են՝

Կէսգիշերացին ինչ-ինչ ժամերում

Ոգիներ գալիս են...

Վայ ինձ, ախ, վայ ինձ. հաւանական չէ,

Որ ես զարթնելով այնքան վաղաժամ...

Վայ, այն նողկալի և գարշ հոտերը...

Եւ աղաղակներ, նըման ճիչերին

Այն արմատախիլ մանրագորների,
Որ եթէ կենդանի մահկանացուները
Լըսեն՝ կըգըժուին... Օ՛հ, եթէ զարթնիմ,
Չեմ խելագարուի, երբ շուրջըս գըտնեմ
Այս բոլոր ահուելի զարհուրանքները.
Արդեօք չեմ խաղալ, իբրև խելագար,
Նախահայրերիս կըմախքների հետ.
Չեմ քաշի արդեօք լոշոտած Տիբալտին
Իր պատանից դուրս, և, ալսպէս կատաղած,
Չեմ առնի ոսկը մի մեծ նախահօրս
Եւ որպէս յախտով ցըրուեմ ուղեղըս
Յուսահատութիւնից... Օ՛հ, ինձ թըրում է
Մօրեղօրորդուս ոգին եմ տեսնում.
Կարծես փընտռում է նա Ռոմէօլին,
Որ ոըրով ծակեց նըրա մարմինը:—
Կեցիր, Տիբալտ, կեցիր:— Ռոմէօ, գալիս եմ.
Ահա քո կենաց ըմպում եմ ես այս:

(Մոհում եւ ընկնում է անկողնի վրայ):

Տ Ե Ս Ը Ր Ա Ն Պ

Կապիլէտի տունը.

Մտնում են Լէդի ԿՍՊԻՒԼԵՏ և ԴԱՅԵԱԿԸ.

Լէդի ԿԱՊԻՒԼԵՏ

Բընիր, առ, դայեակ, բանալիները,
Եւ դարձեալ համեմ բեր:

ԴԱՅԵԱԿ

Խմորեղէնի համար

Արմաւ են ուզում և սերկեիներ:

(Մտնում է Կապիլէտ):

ԿԱՊԻՒԼԵՏ

Համարէ, վեր կացէք, վեր կացէք, վեր կացէք.
Երկրորդ աքլորը արդէն կանչել է.

Հըրաթաքոյցի զանգը զարկուել է.
Ժամը երեքն է: Փուռին մէկ նայիր,
Բարի Անջելիկա, ծախքին մի խնայեր:

ԴԱՅԵԱԿ
Գընացէք, գընացէք. Բնչ էք խառնըւում
Կանանց գործերին. գընացէք քընէք.
Վաղը, հոգիս վկայ, կըհիւանդանաք,
Քանզի ալս գիշեր մի քիչ անքուն էք:
ԴԱՅԵԱԿ
ԿԱՊԻՒԼԵՏ

Ոչ, երբէք, երբէք. սորանից առաջ
Նատ է պատահել, որ ամբողջ գիշեր
Անքուն եմ մնացել, աւելի չընչին
Պատճառի հս մար, այնուամենայնիւ
Չեմ հիւանդացել:

ԼԷԴԻ ԿԱՊԻՒԼԵՏ

Լաւ է, լաւ. գուք էլ
Չեր ժամանակին մուկն էք որսացել:
Բայց հիմա աչքըս բաց եմ պահելու,
Որ էլ այսուհետ բաց աչքով չանցընէք
Չեր գիշերները:

(Դնում են Լէդի Կապիլէտ եւ Դայեակը):

ԿԱՊԻՒԼԵՏ

Նախանձ է, նախանձ:—

Ա՛յ մարդ, Բնչ է ալդ:
(Մտնում են երեք-չորս ծառաներ, շամփուր-ներով, փայտի կտորներով եւ զամբիւղներով):

Ա. ԺԱՄԱՅՑ

Ալ և ալ բաներ
Խոհարարի համար. բայց չըգիտեմ Բնչ:

ԿԱՊԻՀԱԼԼՏ

Ըշտապիր, ըշտապիր, այ մարդ, չոք փայտ տար.
Կանչիր Պետրոսին. Նա տեղը ցուց կըտալ:

Բ. ԺԱՌԱՅՑ

Ես ինքըս գլուխ ունիմ, և փայտի տեղը
Ինքըս կըգըտնեմ, առանց Պետրոսին
Գըլխացաւ տալու:

(Դուրս է զնում).
ԿԱՊԻՀԱԼԼՏ

Կեցցես. լաւ ասաց.

Ի՞նչ ուրախ մարդ է թըլշուառականը.
Հա՛, հա՛, պէտք է քեզ փայտապահ կարգեմ:—
Բա՛հ, լուսացել է. կոմսն ալժըմ կըգայ
Երաժիշտներով:

(Ներսից երաժշտութիւն).

Նա ալդպէս խոստացաւ:
Ահա լըսում եմ որ մօտենում է:

— Պայեակ, կնիկ, հօ, հօ, դայեակ, որտեղ ես:

(Մտնում է Պայեակը):

Գընա, զարթեցրու Զուլիէտին, գընա,
Եւ լաւ հագցըրու: Ես էլ գընում եմ
Պարիսի հետ խօսիմ:— շուտ, շուտ, ըշտապիր,
Ըշտապիր. փեսան արդէն եկել է.
Շտապիր, ասում եմ:

(Դուրս են զնում):

ՏԵՍԱՐԱԿԵ.

Զուլիէտի սենեակը. Զուլիէտ անկողնի վրայ տարածուած.

Մտնում է ԴԱՅԵԱԿԸ:

ԴԱՅԵԱԿԸ

Տիկին, տիկին, տիկին. Զուլիէտ, վահ, Զուլիէտ:
Սիս ինչ խոր քուն է. հայրէ գառնուկը,
Հայրէ, տիրուհիս. ամօթ է, վեր կաց.
Ի՞նչ ծովն ես եղել. հայրէ, սիրական.
Վեր կաց, ասում եմ. տիկին, անուշիկս.
Վեր կաց, հարսնիկը: Կարծես թէ քունը
Փողով է գընել. քընիը մէկ շաբաթ:
Միամիտ կացիր, կոմս Պարիսն ալս գիշեր
Վըճռել է չըթողնել, որ ալդքան քընես:
Վահ, Տէր ողորմեա. ալսքան էլ խոր քուն:
Բայց պարտաւոր եմ զարթեցնել նըրան:—
Տիկին, տիկին, տիկին. վահ, թող կոմսը գայ
Մահձի մէջ բըռնէ քեզ: Հահ, ես իմ հոգիս,
Նա տինալէս քընից քեզ վեր թըռցընէ:

(Վարագոյր քաշում է, և զնում է Զուլիէտին
անշարժ եւ անկողնի վրայ տարածուած):

Վահ. այս ի՞նչ բան է. ըզգեստներդ հագել
Կըրկին քընել ես. պէտք է զարթեցնեմ.
Տիկին, տիկին, տիկին: Վահ ինձ, վահ հոգուս.
Օգնեցէք, օգնեցէք. տիկինս մեռած է:
Վահ, հողը գըլխիս. երնէկ չէի ծընուել:
Հօ, եկէք, հասէք. քիչ օղի բերէք:—
Հասէք, տէք, տիկին:

(Մտնում է Լէդի Կապիւթիւն):

ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Այս ինչ աղմուկ է:

Օ՛Հ, սե՞ օր մեր գլխին:

ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Ինչ է պատահել:

Նախիր, տես, օ՛Հ, սե՞ օր:

ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Իմ միակ կեանքըս. վեր կաց, աչքըդ բաց,
Եթէ ոչ ես էլ քեզ հետ կըմեռնեմ:
Օգնութիւն, օգնութիւն. օգնութիւն կանչիր:
(Մտնում է կապիւէտ).

ԿԱՊԻԻԼԵՑ

Ի սէր Սատուծոլ, բերէք զուլիէտին.
Փեսան եկել է:

ԴԱՅԱՐ

Մեռել է, վախճանուել, մեռել է, ախ, վալ:
ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ
Վայ ինձ, մեռել է, մեռել է, մեռել:

ԿԱՊԻԻԼԵՑ

Թողէք մէկ տեսնեմ: —Ա՛խ, վերջացած է.
Մարմինը պաղ է. արիւնը կանգնել է.
Անդամքը կըծկուել. այս շըրթունքներից
Վաղուց է թըռել կենդանութիւնը:

Մահը եկել է փըռուել նըրա վրայ՝
Որպէս վաղահաս սառնամանիքը
Թաշտի ամենից սիրուն ծաղկի վրայ:
Անիծուած ժամանակ. օ, անբախտ ծերուկ:

ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Օ՛Հ, սոսկալի օր:

ԴԱՅԱՐ

Օ՛Հ, չարագուժ օր:

ԿԱՊԻԻԼԵՑ

Մահը, որ նըրան խըլել է ինձնից՝
Լեզուս կապել է, չէ թողնում խօսիմ:
(Մտնում են Հայր Լորէնս և Պարիս, երաժիշտների հետ):

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Պատրաստ է հարսը եկեղեցի գնալու:
ԿԱՊԻԻԼԵՑ

Պատրաստ է գնալու, բայց ոչ դառնալու:—
(Պարիս)

Օ՛Հ, որգիս, հարսնիքիդ նախորդ գիշերը
Մահն է մուտք գործել հարսիդ մահճի մէջ:
Տես, ահա այստեղ ընկողմանած է,
Ծաղիկ որպէս էր՝ այժըմ ծաղկամեռ
Մահու ճիրանով: Մահն է իմ փեսաս,
Մահն է ժառանգը. մահն է պըսակուել
Իմ աղջրկայ հետ. և ես կըմեռնեմ,
Եւ ամենայն ինչ նորան կըթողնեմ:
Երբ կեանքը գընաց՝ ամեն ինչ մահուանն է:

ՊԱՐԻՍ

Ո՛րչափ ժամանակ կարօտ քաշեցի
Տեսնել երեսը այս առաւօտուալ.
Եւ ինչի համար, այս տեսարանի:

ՀՀԴԻ ԿԱՊԻԻԼԵՑ

Անիծուած, անբախտ, տեկի, ժանտ օր,
Ամենաչափ ժամ, որ ժամանակը
Երբ և է տեսած է իր բազմավաստակ
Մըտընջենական ճամպորդութեան մէջ:
Մի միակ, մի ինդ, մի ինդ քաղցր գաւակ,
Մի միակ էակ ինձ ըստոփելու

Եւ յընծացնելու. — և անգութ մահը
Այդ էլ շատ տեսաւ, խըլեց իմ աչքից:
ԴԱՅԻՆԱԿ

0'հ, բօթ, բօթաբեր, բօթաբեր, ժանտօր.
0'հ, ողջակ օր, ամենաբօթաբեր,
Որ երբէք, երբէք դեռ տեսած լինիմ:
Սև օր, սև օր, սև օր, վայ, սոսկալի օր.
0'հ, երբէք, երբէք չէ տեսել ոչ ոք
Այսչափ սև մի օր: 0'հ, բօթաբեր օր,
0'հ, բօթաբեր օր:

ՊԱՐԻՍ

Խաբուած, պսակալոյն,
Կեղեքուած, տանջուած, սպանուած զուլիէտ:
Ով մահ տտելի, խաբեցիր նըրան.
Անգութ, անգութ մահ, գետին զարկեցիր: —
Ով իմ սէր, իմ կեանք. բայց ոչ կեանք...
ԱՌ սէր մահուան մէջ:

ԿԱՊԻՀԻԼԾ

Անարգուած, չարչարուած,
Ատուած, ըսպանուած, մարտիրոսացած:
Վշտալից ժամանակ, ինչո՞ւ եկար այժմ
Ըսպաննել, ըսպաննել մեր ուրախ տօնը: —
Զտւակըս, զաւակըս. հոգիս, ոչ զաւակս: —
Ի՞նչ, մեռար, աւաղ, զաւակըս մեռաւ,
Եւ զաւակիս հետ թաղուեցան նաև
Ցընծութիւնները:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Լոեցէք, ամօթ է.
Յուսահատ ցաւերի բըժըշկութիւնը
Չէ դըրուած յուսահատ վայնասունի մէջ:
Երկինքը և դուք բաժին ունէիք
Այս սիրուն կոյսից. հիմա երկինքը

Բոլորին տիրացաւ: Գրա լաւագոյն է
Այն կոյսի համար. դուք ձեր բաժինը
Անկարող էիք մահից զերծ պահել.
Սակայն երկինքը պահում է իր մասը
Յաւերժութեան մէջ ընդ միշտ կենդանի:
Ձեր տեսնչն էր նըրան բարձրացած տեսնել,
Ձեզ համար երկինք էր, որ նա բարձրանար:
Ել ինչո՞ւ էք լալիս այժմ որ տեսնում էք
Նըրան բարձրացած ամպերից վերև
Այնչափ բարձր, որչափ ինքը երկինքը:
0'հ, այս սիրոյ մէջ դուք ձեր զաւակին
Այնչափ վատ էք սիրում, որ խենթանում էք
Երբ որ տեսնում էք նա այնքան լաւ է:
Ոչ թէ երջանիկ ամուսնացողը
Է ամուսնացած երկար ապրողը.
Հապա երջանիկ պսակուողը նա է
Ով որ մեռնում է նոր ամուսնացած:
Դէհ, ցամաքեցրէք ձեր արցունքները,
Այս չըքնաղ մարմնի վրայ, և ինչպէս ծէս է
Ամենից սիրուն իր արգուզարդով
Տարէք եկեղեցին քանզի թէպէտւ
Փափկասիրտ բնութիւնը մեզ ըստիպում է
Ողբ ու կոծ անել՝ սակայն բընութեան
Արտասուքները բանականութեան
Ժըլտալ են տալիս:

ԿԱՊԻՀԻԼԾ

Ամեն բաները,
Որ տօնի համար մենք պատրաստեցինք՝
Փոխակերպուեցաւ սև մեռելութի.
Մեր նուագարանքը՝ տըխուր զանգերի,
Եւ հարսանեկան մեր հացկերութը
Փոխուեցաւ տըխուր մեռելածաշի.
Մեր հանգիսաւոր օրհներդութիւնքը՝

Սուգի երգերի. հարսնեկան ծաղիկներն
Ալժըմ պըճնում են մի մեռեալ դիակ:
Եւ ամեն բաներն այսպէս փոխուեցան
Դէպ հակառակը:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Տէր իմ, ներս գնացէք:—
Եւ դուք էլ, տէկին, գնացէք նորա հետ:—
Թուք էլ, տիար Պարիս: Ամենքը պատրաստուին
Յուղարկաւորել սիրուն դիակը
Դէպ իր դամբանը: Աստուծոյ ձեռքը
Պէտք է ձեր վերար մի մեղքի համար
Ծանրացած լինի. մի շարժէք դարձեալ
Նորա ցասումը՝ ընդգիմանալով
Իր բարձը կամքին:

(Պուրս են զնում Կապիլէտ, Լէդի
Կապիլէտ, Պարիս եւ հայր Լորէնս):

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Լաւ է, հաւաքենք

Մեր սըրինգները և թողնենք գընանք:

ԴԱՅԵԱԿ

Ա՛չ, ժողովեցէք, դուք ազնիւ մարդեկ.

Գիտէք, ողբալի մի կացութիւն է: (Պայեակը զնում է)

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Այս, հոգիս վկայ, Աստուծ վերջը բարի անէ:

(Մտնում է Պետրոս):

ՊԵՏՐՈՍ

Երաժիշտներ, օ, Երաժիշտներ. Սրտի ցնծութիւն,
Սրտի ցնծութիւն *): Օ՛, Եթէ կամենում էք որ ես ապրեմ
նուագեցէք «Սրտի ցնծութիւնը»:

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Ինչո՞ւ «Սրտի ցնծութիւնը»:

*.) Մի երգի տիտղոսն է եղած. Ծանօթ. Ալէք. Շմիդտ.

ՊԵՏՐՈՍ

Օ՛, Երաժիշտներ, որովհետև սիրտս ինքնին նուագում
է «Սիրտս տըտում է»: Օ՛, ինձ համար նուագեցէք մի ու-
րախ տըտմերգ, ինձ մխիթարելու համար: Այսուհետեւ մարդիկ
Բ. ԵՐԱԺԻՇՏ

Ոչ մի տըտմերգ չենք նուագի. Հիմա նուագելու ժա-
մանակ չէ:

ՊԵՏՐՈՍ

Ուրեմն չէք ուզում նուագել:
ԵՐԱԺԻՇՏԾՆՅՐ

Ո՛չ:

Ուրեմն ինձնից մի լաւ կուտէք:

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Ո՛չ կուտենք: ՊԵՏՐՈՍ

Ոչ թէ փող, այլ մի լաւ ապտակ. անպիտան նուա-
գածուներ:

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Անպիտան ծառայ: ՊԵՏՐՈՍ

Անպիտան ծառայի դաշոյնը հիմա կդնեմ ձեր վզին.
Ես ձեր երգերը լսողը չեմ, ձեզ այնպէս ֆայեմ, այնպէս
սօլեմ...

Ա. ԵՐԱԺԻՇՏ

Մենք ձեր սօլերը ձեզ կհագցնենք:

Բ. ԵՐԱԺԻՇՏ

Խնդրեմ, դաշոյնդ գեր տեղը և լեզուդ դուրս բեր:

ՊԵՏՐՈՍ

Ուրեմն առ քեզ իմ լեզուով. Ես ձեզ ծեծ կտամ իմ
երկաթի լեզուով, և պատեան կդնեմ երկաթէ դաշոյնս:—
Տղամարդու նման պատասխան տուէք ինձ:

Երբ սըրտում ունինք մի մեծ տըրտմովթիմ,
Եւ մեր հոգու մէջ կան վըշտեղ խորին՝
Յայնժամ մուզիկան արծաթահնչիմ...

Ինչու համար արծաթահնչիմ, ինչու են ասում մու-
զիկան արծաթահնչիւն. ինչ ես ասում, Սիմոն Աղքափելար:
Ա. ԵՐԱԾԻՇՏ

Նորա համար, պարոն, որ արծաթը մի գեղեցիկ հըն-
չիւն ունի:

ՊԵՏՐՈՎ

Նատ լաւ.—դու ինչ ես ասում, Հիւդ Զութակ:

Բ. ԵՐԱԾԻՇՏ

Ես ասում եմ. արծաթահնչիւն նորա համար են ասում,
որ նուագածուները արծաթի համար են հնչիւն հանում:

ՊԵՏՐՈՎ

Այդ էլ վատ չէր.—դու ինչ ես ասում, Զէմս Սառնդ-
Պոստ:

Գ. ԵՐԱԾԻՇՏ

Զգիտեմ ինչ ասեմ:

ՊԵՏՐՈՎ

Օ՛, ներողութիւն եմ խնդրում. գուխմբի երգիչն ես.
քո փոխարէն ե՞ս կասեմ: Սառւմ են «Մուզիկան արծաթա-
հնչիմ», որովհետև ձեզ պէս մարդիկ ոսկի չունին հնչե-
ցնելու համար:—

Յայնժամ մուզիկան արծաթահնչիմ,
Թող մըխիթարանք տայ մեր սըրտերին:
(Երգելով դուրս է գնում):

Ա. ԵՐԱԾԻՇՏ

Ի՞նչ գրողի տարածն է այս անպիտանը:

Բ. ԵՐԱԾԻՇՏ

Թող գնայ սատկի: Եկէք, տղերք դուրս գնանք, սպա-
սենք սգաւորներին, և մնանք ընթրիքի:
(Դուրս են գնում):

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱԿԱ

ՄԱՆՏՈՒԱ.

Մի փողոց.

Մանում է ԹՈՄԻՕ:

ՌՈՄԻՕ

Եթէ պէտք է ինձ հաւատ ընծայել
Քընի փաղաքուշ հաւաստիքներին՝
Իմ երազներըս ինձ աւետում են
Ցընծառիթ լըրեր. սըրտիս իշխանը
Թեթև է նըստել իր գահի վերալ.
Սնսովոր մի աշխոյժ այս տմբողջ օրը
Ինձ թոփչք է տալիս ուրախ մըտքերով:
Երազում տեսայ, սիրուհիս եկաւ
Մեռած գըտաւ ինձ, (տարօրինակ երազ,
Որ թուլ է տալիս մեռեալին խորհել),
Եւ համբուրներով շըրթունքներիս մէջ
Նա կետնք ներշընչեց. ես կենդանացայ,
Եւ մի կայսր էի:

Ա. ին, որքան պէտք է սէրն անոյշ լինի,
Երբ ըստուերն անգամ այսքան անոյշ է:
(Մանում է Բաղդասար):

Լուր Վերոնալից: — Ի՞նչ կայ, Բաղդասար.
Նամակ չես բերել դու Հայր Լորէնսից.
Տիկինս ի՞նչպէս է. Հայրըս առողջ է.
Ի՞նչպէս է Զուլիէտտան. կըրկին հարցնում եմ.
Քանզի չէ կարող ոչինչ վատ լինել
Եթէ նա լաւ է:

ԲԱՂԴԱՍԱՐ

Նա լաւ է, և ոչինչ
Չէ կարող վատ լինել. նորա մարմինը
Կապիւլէտների դամբարանի մէջ
Նընջած է հանգիստ, և անմահ հոգին
Հրեշտակների հետ ապրում է հիմա:
Ես նըրան տեսալ իբր աւանդ դըրուած
Իր ազգատոհմի տապանատան մէջ.
Եւ անմիջապէս պոստարով եկալ
Որ ձեզ լայտնեմ այդ: Օ՛հ, ներեցէք ինձ,
Որ տըխուր լըրեր բերեցի ես ձեզ.
Պուրք էիք տըւել ինձ այդ պաշտօնը:

ՐՈՄԵՈ

Այդպէս: — Ա՛խ, աստղեր, արէք այսուհետ
Ի՞նչ որ կարող էք: (Բաղդասարին)
— Դու դիտես տունը.
Թուղթ ու թանաք բեր, և գընա վարձիր
Պոստալի ձիանք: Այս գիշեր պէտք է գնամ:

ԲԱՂԴԱՍԱՐ

Ներեցէք, տէր իմ. բայց ես չեմ կարող
Ձեզ թողնել գընալ այս վիճակի մէջ.
Ձեր դէմքը տըժգոյն և սոսկալի է,
Եւ գուշակում է չարաշուք մի բան:

ՐՈՄԵՈ

Բահ, սըխալում ես. թող ինձ և գընա
Իմ ասածս արա: Նամակ չես բերել
Ինձ Հայր Լորէնսից:

Ես մինչև անգամ չըկարողացալ
Թըղթատար գըտնել՝ որ ձեզ հասցընէ.
Այնպէս բոլորը սարսափել էին
Ժանտախտից:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Վահ, չար բախտ. մեր ուխտը վըկայ,

Չէր այդ նամակը աննըշան մի բան,
Ալ շատ կարեսոր բովանդակութեամբ:
Այդ յապաղումը կարող է առթել
Սաստիկ մեծ վըտանգ: Դէհ, Հայր Յովհաննէս,
Գնա իսկոյն գըտիր երկաթէ մի ձող
Եւ բեր իմ խոցը:

Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍ

Գընում եմ բերեմ:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Պէտք է ալժմ մենակ մըտնեմ շիրմի մէջ:
Երեք ժամից յետ սիրուն Զուլիէտտան
Կըսթափուի քընից. ինձ շատ կանիծէ
Որ ցարդ Ռոմէօն լուր չէ ըստացել
Սիս գիպուածներից. պէտք է Մանտուա
Նորից գիր գըրեմ, և Զուլիէտտալին
Խուցիս մէջ պահեմ՝ մինչ Ռոմէօն գայ:
Խեղճ գիտակ կենդանի, որ ամփոփուած է
Մի մեռեալ մարդու գերեզմանի մէջ:

(Դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Մի եկեղեցու ըակ եւ նորա մէջ Կապիկէտների շիրիւր.

Մտնում են ՊԱՐԻՍ Շիր ՄԱՆԿԱՐԻԿԱ մի ջահով:

ՊԱՐԻՍ

Տնւր ինձ այդ ջահը, տըղալ, և ինքը
 Գնա հեռու կանգնիր. բայց ոչ, հանգըլընու:
 Զեմ ուզում ինձ տեսնեն. գնա ախտել պառկիր
 Այն գեղձերի տակ, և հըպիր ականջդ
 Փուք գետնի վըրալ, ախնպէս որ ոչ մի ոտք
 Չըդըպչի ժամատան փուխը ու թոյլ գետնին՝
 Որ գու ըըլըսես. և երբ գու տեսնես
 Որ մարդ է գալիս՝ իսկոյն սուլիր ինձ:
 Տնւր ինձ ծաղկունքը: Գնա, ասածս արա:

ՄԱՆԿԱՐԻԿԱ

Ես վախենում եմ միայնակ մընալ
 Ալս ժամատան մէջ. բայց պէտք է սիրտ անեմ:
 (Դուրս է գնում):

ՊԱՐԻՍ

Ով անոյշ ծաղիկ, ծաղիկներ սըփուեմ
 Քո հարսանեկան անկողնիդ վըրաւ:
 Վայ, տուագաստըդ քար է և փոշի,
 Որ ամեն գիշեր պէտք է ոռոգեմ
 Ես անոյշ ջըրով, կամ, երբ այդ չըկայ:
 Հեծեծանքներից թորած արտօսըով:
 Սուզըս քեզ համար այն պէտք է լինի՝
 Որ ամեն գիշեր դամբանըդ պըճնեմ
 Թարմ ծաղիկներով, և ցողեմ ես այն
 Իմ արցունքներով:

(Մանկարիկը սուլում է):

Տըղան սուլում է. մարդ է մօտենում:
 Ի՞նչ անիծեալ ոտք շըրջում է այս կողմ,
 Խափան լինելով իմ անկեղծ սիրով
 Տըրտում ծէսերին: Ի՞նչ, ջահ էլ ունի: —
 Պատիր ինձ, գիշեր, մի քիչ ժամանակ:
 (Մտնում են Բոմես և Բաղդասար մի ջահով եւն):

ՌՈՄԷՅԾ

Տնւր ինձ այդ բըիչը և ոլորիչը.
 Առ այս նամակը. վաղ առաւօտեան
 Յանձնես անպատճառ լարգելի հօրըս:
 Տնւր ինձ ճըրագը: Տես, ի գին կեանքիդ
 Հրամայում եմ քեզ, որ ինչ որ տեսնես
 Կամ ինչ որ լըսես՝ գու հեռու կենաս,
 Եւ չըխառնըւիս իմ գործերիս մէջ:
 Եթէ իջնում եմ մահուան մահճի մէջ՝
 Նորա համար է մասամբ, որ դիտեմ
 Իմ տէկնոջ դէմքը. ստկալն մանաւանդ
 Ուզում եմ հանել նրա մեռած մատից
 Մի թանկ մատանի, որ պէտք է գործածեմ
 Մի շատ կարեսը պարագայի մէջ:
 Ուրեմն հեռացիր, գընա այստեղից:
 Բայց եթէ երբէք, կասկածից գըրդուած,
 Յետ գաս զըննելու թէ ինչ եմ անում
 Աստուած վըկալ է, քեզ մաս մաս կանեմ
 Եւ յըրիւ կըտամ քո կըտորներըգ
 Այս սովալըլուկ գերեզմանատնում:
 Խիստ վալրենի են թէ ժամանակը
 Թէ դիտումներըս. աւելի սոսկալի,
 Աւելի անողոք՝ քան սոված վագրեր,
 Կամ ծով մըոքնչուն:

ԲԱՂԴԱՍԱՐ

Ես կըդնամ, տէր իմ,
 Զեզ չեմ խանգարիլ:

ՐՈՌՄԷԾՈ

Բարեկամութիւն արած կըլինիս: (Զգելով նորան իր քսակը)
Առ այս, քեզ լինի. բախտաւոր եղիր: Մնաս բարով, բարի մարդ:

ԲԱՂԴԱՍԱՐ (Առանձին)

Այս շըրջակալքում ես կըթագնըւիմ:
Ես գախենում եմ նորա այդ դէմքից,
Ես կասկած ունիմ իր դիտումներից:
(Գուրս է գնում Բաղդասար)։

ՐՈՌՄԷԾՈ

Ո՞վ փող զազրելի, որովայն մահու,
Որ երկրի ամենից թանկագին բանը
Լափել ես. ալսակէս կըբըռնադատեմ
Փրտած ոսկորըդ՝ որ բացուի կըրկին:
(Շիրիմը կոտրելով)։

Եւ բըռնի կերպով կըխըճողեմ քեզ
Մի նոր կերակով:

ՊԱՐԻՄ

Սա այն աքսորուած
Խրոխտ Մոնտէգիւն է, որ իմ սիրուհու
Մօրեզբօրորդուն զարկեց ըսպաննեց:
Ասում են՝ գեղանի այն մանկամարդը
Այդ ցաւից մեռաւ: Նա կըրկին գալիս է
Որ մի խալտառակ անարդանք գործէ
Մեռած մարմիններին. ես նրան կըբըռնեմ:—
Թոնդ այդ պիղծ գործըդ, անարդ Մոնտէգիւ.
Կարող է վրէժը տևել մահից յետ.
Աքսորուած սրբկալ, ես քեզ բըռնում եմ.
Հնազանդիր, եկ ինձ հետ, դու պէտք է մեռնես:

ՐՈՌՄԷԾՈ

Ճիշտ է, պէտք է մեռնեմ. հէնց դորա համար
Գալիս եմ այստեղ:— Բարի պատանի,
Գընա, մի փորձեր յուսահատ մարդուն.
Փախիր, և թող ինձ: Մըտածիր սրանց վրայ
Որ այստեղ հանգչում են. վախեցիր սրանցից:—
Աղաչում եմ քեզ, ով երիտասարդ,
Մի գըներ նոր մեղք իմ գըլխիս վըրայ,
Ինձ զայրացնելով: Օ՛, թող ինձ, գընա.
Աստուած է վըկայ, ես քեզ սիրում եմ
Առաւել քան ինձ. եկել եմ այստեղ
Ինքս իմ դէմ զինուած. մի կանգնիր, գընա:
Ապրիր և ասա, որ մի գիտ մարդու
Ողորմութիւնը քեզ վախչել ստիպեց:
ՊԱՐԻՄ

Ես չեմ երկընչում քո կախարդանքից *).
Եւ բըռնում եմ քեզ որպէս մեղապարտ:

ՐՈՌՄԷԾՈ

Գըրգըռում ես ինձ. դէհ, տըզայ, առ. քեզ:
(Մենամարտում են. Պարիս ընկնում է):

ՄԱՆԿԱՀԻՒԿ

Աստուած իմ, կըռւում են. գնամ պահակ կանչեմ:
ՊԱՐԻՄ

Օ՛, ըսպանուեցայ. եթէ վեհանձն ես՝
Բացիր դամբանը և զուլիչտի մօտ
Դիր իմ մարմինը:
(Մեռնում է):

*.) Պարիս կարծում է, որ Ռոմէօ մտել է շիրիմը մի անարդ գործ կատարելու համար մեռեալ զիսկների վրայ, ինչպիսի գործեր են կախարդաներին վերագրում էին, և այս պատճառով ասում է, որ ես չեմ երկնչում քո կախարդանքից: Վ. Թ.

ՐՈՒՄՔՕ

Աստուած գիտէ, կանեմ:

(Զննելով Պարիսի դիակը)

Տեսնեմ այս դէմքը: —Վախ, Մերկուտիօնի
Մի ազգականն է, ազնիւ կոմո Պարիսը:
Ի՞նչ ասաց ծառաս, երբ հեծած էինք.
Փոթորկուած հոգիս չէր լըսում նորան:
Կարծեմ նա ասաց, որ Պարիս կոմոը
Ուզում էր պսակուիլ Զուլիէտտայի հետ:
Այսպէս չասաց նա. թէ երազել եմ,
Կամ թէ լըսելով, որ նա խօսք ասաց
Զուլիէտի մասին՝ այդպէս եմ կարծում:
Միթէ գըժուել եմ: —Օ՛, տուր ինձ ձեռքըդ,
Դու, որին դառըն ձախորդութիւնը
Գըել է իր գըլքում ինձ հետ միասին:
Ես քեզ կըթաղեմ մի լաղթականի
Գերեզմանի մէջ: Գերեզման, օհ, ոչ,
Այլ մի լուսարան, սպանուած պատանի
Քանզի Զուլիէտը նիրհած է այստեղ,
Եւ նորա պայծառ գեղեցկութիւնը
Այս գերեզմանը փոխակերպում է
Դէպ լուսաճաճանչ մի խնջուքի սրահ:
Մահ, պառկիր այստեղ, մեռեալի ձեռքով
Ի հող ամփոփուած:

(Դնելով Պարիսին շիրմի մէջ):

Շատ անգամ մարդիկ հոգեվարքի մէջ
Յանկարծ ըզզում են մի ուրախութիւն.
Այդ բանը նոցա խնամարկուները
Կոչում են փայլակ մահուանից տռաջ.
Օ՛հ, ինչպէս ես այս փայլակ անուանեմ: —
Օ՛հ, իմ սէր, իմ կէն. մահը, որ ծըծեց
Քո շընչիդ մեղքը՝ չէ ազգել գեռեսս
Քո այդ հրաշալի գեղեցկութեան վրայ,
Դու գեռ չես տիրուած. գեղեցկութեան զրոշմը

Բոսոր է շընթունքիդ և թըշերիդ վրայ,

Դեռևըս մահուան գունատ դըօշակը

Զէ հասել ալնտեղ: — Տիբալտ, այստեղ ես

Արիւնաթաթաւ քո պատանիդ մէջ.

Օ՛հ, ինչ աւելի շընորհ անեմ քեզ,

Քան այս նոյն ձեռքով, որ գերանդիեց

Ծաղիկ հասակըդ՝ յօշոտեմ նըրան

Որ թըշնամիդ էր. ներիր ինձ, Տիբալտ,

Մօրեղբօրդոդի: — Ա՛հ, քաղցրիկ Զուլիէտ,

Ինչո՞ւ տակաւին ալգքան սիրուն ես:

Օ՛հ, եկ դու պառկիր բազուկներիս մէջ: —

Հաւատամ արդեօք: — Պէտք է հաւատամ

Որ աննիւթ մահը սիրահարուած է.

Եւ այն նիհարած սոսկալի հըէշը

Նորա համար է քեզ այստեղ պահում

Այս խաւարի մէջ՝ որպէս զի լինիս

Նորա տարփածուն, և այդ երկիւղից՝

Ես այստեղ քեզ հետ կըմընամ ընդ միշտ,

Եւ այս պալատից չեմ մեկնի ալես:

Այստեղ, միշտ այստեղ կըմընամ ես միշտ.

Քո որդերի հետ, քո նաժիշտներիդ:

Օ՛հ, այստեղ, այստեղ պէտք է հաստատեմ

Յաւիտենսկան իմ հանգըրսուանըս,

Եւ ցընցեմ լուծը գըժպիհ աստղերի:

Աշխարհից տաղտկացած մարմնիս վերայից: —

Աչքեր, նայեցէք մի վերջին անգամ.

Բազուկներ, մէկ էլ գըլկախառնուեցէք.

Ելրթունքներ, ով դուք, շընչի գըոնակներ,

Կընքեցէք անկեղծ աննենգ համբուրով

Համագրաւ մահի հետ մի դաշինք անվերջ:

(Բոնելով սրուակը):

Եկ, դառն ուղեցուց, Եկ, ժանտ առաջնորդ,

Անլոյս զեկավար. Եկ, զարկիր մէկէն

Զախջախիչ ժայռերին քո հողմահալած
Տաղտուկ նաւակըդ: — Աշա քո կենաց,
Ուր և լինի ալժմ ոտքըդ ժայթաքած:
Սիրուհուս կենաց: (Խմում է:)

Ո՞վ գեղավաճառ,
Դու ինձ չես խաբած. թունըդ շատ խիստ է:
Այսպէս մեռնում եմ ես մի համբոլով...
(Մեռնում է ջուլիէտին համբուրելով):
(Մեռնում է Հայր Լորէնս, մր լապտե-
րով, մի երկաթէ ծողով եւ մի բանով):

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Օգնիր, սուրբ Ֆրանսուա. որքան ծեր ոտքը
Գերեզմանների հրպան ալս գիշեր: — *)

Ո՞վ է:

(Մտնում է Բաղդասար):

ԲԱՂԴԱՍԱՐ

Բարեկամ, և մի մարդ որ ձեզ
Լաւ է ճանաչում:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Աստուած օրհնէ քեզ:

Բայց ասա դու ինձ, ազնիւ բարեկամ,
Ի՞նչ ջահ է այնտեղ, որ անօգուտ տեղ
Լոյս է տարածում անաչք գանկերի,
Որդերի համար. որչափ տեսնում եմ
Կապիւլէտների շիրմի մէջ է այդ:

ԲԱՂԴԱՍԱՐ

Այդ ձիշդ է, հայր սուրբ. տէրըս այնտեղ է,
Նա, որին սիրում էք:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ

Ո՞վ է:

ԲԱՂԴԱՍԱՐ

Բոմէօ:

*) Դա մի չարաշուք նշան էր համարում:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ
Որչափ ատեն է, որ նա այնտեղ է:
ԲԱՂԴԱՍԱՐ

Ամբողջ կէս ժամ է:
ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ
Եկ ինձ հետ շիրմը:
ԲԱՂԴԱՍԱՐ

Եմ կարող, հայր սուրբ, չեմ համարձակում.
Տէրըս կարծում է գնացել եմ արդէն:
Սոսկալի կերպով ինձ մահ ըսպառնաց՝
Եթէ մնամ այստեղ և նայեմ նորան:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ
Մընա ուրեմըն. ես մենակ կերթամ: —
Սարսափ է գալիս իմ մարմնի վըրայ: —
Օհ, շատ եմ վախենում, մի չարտշուք բան
Պատահած լինի:

ԲԱՂԴԱՍԱՐ
Մինչ նընջում էի
Այս գեղձի ներքեւ՝ ես երազեցի

Որ տէրըս, հայր սուրբ, և մի ուրիշ մարդ
Մենամարտում են, և թէ իմ տէրըս
Նըրան ըսպաննեց:

ՀԱՅՐ ԼՈՐԷՆՍ
Բոմէօ... վայ, վայ,
Այս ի՞նչ արիւն է, որ բիծ է ձըգել
Այս դամբարանի քարուտ մուտքի վրայ.
Ի՞նչ են այս անտէր արիւնոտ սրերը,
Որոնք ընկած են այսպէս շաղախուած,
Այս խաղաղութեան կալարանի մէջ: —
Բոմէօ, Բոմէօ. օհ, ի՞նչ դըժգոյն է: —
Այս ով է. ի՞նչ է, Պարբսն էլ այստեղ

Եւ արիւնաշաղախ: — Ա՞հ, ի՞նչ դըժպիհ ժամ
Գործել է ողբալի այս աղէտները:
Տիկինը շարժում է:

ԶՈՒՀԻԼԻՔԾ (Զարթնելով)

Օ՞հ, հայր գըթասիրտ, ուր է իմ տէրը.
Ես լաւ լիշում եմ, ուր պէտք է լինիմ,
Եւ ահա այնտեղ եմ: Ուր է Ռոմէօս:

(Զայն ներսից):

ՀԱՅՐ ԼՈՌԵՆՍ

Նըշուկ եմ լլուռմ: — Տիկին, գուրս արի
Մահու, վարակման, անքնական քընի
Սկդ անարդ բոյնից: Մի իշխանութիւն,
Աւելի ուժեղ մեր դիմադրումից՝
Ի դերև հանեց մեր դիմումները:
Եկ գընանք, եկ գընանք. քո ամուսինը
Պառկած է ալդտեղ քո կուրծքի վըրայ,
Պարիսն էլ միւս կողմ: Եկ, քեզ կըդընեմ
Սըրբակեաց կոյսերի մի մենաստանում:
Եկ, էլ մի հարցներ: պահակ է գալիս:
Եկ, բարի Զուլիէտ:

(Զայնը մօտենում է):

ԶԵՄ Համարձակում

Առաւել մընալ:

ԶՈՒՀԻԼԻՔԾ

Դընա, գուրս գընա:
Իսկ ես ալստեղից գուրս չեմ ելնելու: —
Այս ի՞նչ է. մի բաժտոկ սիրածիս ձեռքում:
Վահ, ես տեսնում եմ, որ թոյնն է եղել
Տարաժամ վախճանը... — Ի՞նչ, ալդքան ադահ,
Բոլորը խըմել, և ինձ չըթողնել
Կարեկից մի կաթիլ, որ ինձ էլ օգնէ: ||
Ես կըհամբուրեմ քո շըրթունքները.

Գուցէ մի քիչ թոյն գեռ նըրանց վըրայ
Մընացած լինի, որ ինձ մահացնէ
Մի կազզուըիչով:

(Համբուրում է նրան):

Շըրթունքներդ տաք են:

ՊԱՀԱԿ (Դրսից)

Ճանապարհ ցոյց տուր, տըղալ որ կողմն է:

ԶՈՒՀԻԼԻՔԾ

Ի՞նչ է այս... աղմուկ... Ուրեմն ըշտապենք: —
(Խլելով Թոմէօյի գաշոյնը):

Երջանիկ դաշոյն, ահա քեզ պատեան.

(Ինքն իրան գարկում է):

Ժանգոտուիր ալգտեղ և թող ինձ մեռնել:

(Մտնում է Պահակը Պարիսի մանկաւիկի հետ):

ՄԱՆԿԱՐԻ

Այնտեղ է, այնտեղ, ուր ջահն է վառւում:

ՊԱՀԱԿ

Այս գետնի վերայ արիւն է թափուել:

Հետազօտեցէք գերեզմանները.

Գընացէք, տըղերք, և ում որ գըտնէք՝

Զերբակալեցէք:

(Մի քանի հոգի գուրս են կնում):

Մըրտառուչ տեսարան:

Կոմսը ըսպանուած ընկած է ալստեղ,

Եւ Զուլիէտ, արիւնոտ, տաք և նոր մեռած,

Այս ի՞նչ թազուած էր երկու օր առաջ: —

Գնա, ասա, իշխանին, և վազիր իսկոյն

Կապիւլէտների մօտ. զարթեցրու քընից

Մոնտէգիւներին: Թող ուրիշները

Խուզարկեն ամեն կողմ. տեսնում ենք տեղը՝

Ուր որ գիզուած են այս աղէտները.

Բայց թէ ի՞նչ է այն, որ տեղի է տուած

Այս աղիողորմ պատահաբներին՝
Չենք կարաղ լուս հանել տուանց քըննութեան:
(Մտնում են մի քանի հոգի Պահակ-
ներ, բերելով Բաղդասարին):

Բ. ՊԱՀԱԿ

Սա Ռոմէօի ըսպասաւորն է.

Մենք նըրան գըտանք գերեզմանատնում:

Ա. ՊԱՀԱԿ

Լաւ, ըգդուշութեամբ պահեցէք նըրան,
Մինչև իշխանը ինքը գալ այստեղ:
(Գալիս է մի այլ Պահակ, Հայր Լորէնսի հետ).

Գ. ՊԱՀԱԿ

Ահա մի կրօնաւոր, որ դողդողում է,
Հառաջում, լալիս. մենք նորա ձեռքից
Առինք այս ձողը և այս բըրիչը՝
Այնինչ գալիս էր գերեզմանատնից:

Ա. ՊԱՀԱԿ

Եստ կասկածելի. դրան էլ պահեցէք:
(Մտնում է Իշխանը, նետեւորդներով):

ԻՇԽԱՆ

Արդեօք ինչ աղէտ, այդքան վաղ արթնած,
Մեր առաւոտեան հանգըստութիւնից
Մեզ դուրս է քաշում:
(Մտնում են կապիւէտ եւ Լէդի կապիւէտ):

ԿԱՊԻՒԷԼՅԾ

Ինչ պէտք է լինի, որ տմեն կողմից
Ալքան ճըսում են:
Լէդի ԿԱՊԻՒԷԼՅԾ

Մարդիկ փողոցում գոչում են, Զուլիէտ,
Ոմանք՝ Ռոմէօ, և ոմանք՝ Պարիս:
Բոլորն էլ բարձրաձայն տղաղակներով
Վազում գալիս են մեր գամբարանը:

ԻՇԽԱՆ

Ի՞նչ սոսկանք է այս, որ սարսեցնում է
Մեր ականջները:
Ուստի պահանջանակ մասնաւութեամբ
առաջարկ իշխանը մասնաւութեամբ
Ահա կոմս Պարիս ընկած դիտապաստ,
Ռոմէօն մեռած, Զուլիէտ, որ վաղուց
Մեռած էր՝ դեռ տտք, և նոր ըսպանուած:

ԻՇԽԱՆ

Փընտռեցէք, բըռնեցէք և տեղեկացէք,
Թէ ինչպէս եղաւ այս կոտորածը:

ՊԱՀԱԿ

Ահա մի կրօնաւոր, և Ռոմէօի գաղաքար
Ըսպասաւորը. և նորանց վերայ աշխատած Յարմար
Յարմար գործիքներ՝ այս մեռեալների
Գերեզմանները բանալու համար:

ԿԱՊԻՒԷԼՅԾ

Օ՛հ, երկինք: Օ՛հ, կին, տես ինչպէս մեր դուստրը
Արիւնի մէջ է: Դաշոյնը սխալուած է.
Նալիք, պատեանը դատարկ է մնացել
Մոնտէգիւի մէջքին. նա մոլորուած է
Աղջըկաս կըծքի մէջ:

Լէդի ԿԱՊԻՒԷԼՅԾ

Տէր Աստուած, մահուան այս տեսարանը
Մի զանգ է կարծես, որ հրաւիրում է
Իմ ծերութիւնը գէպի գերեզման:
(Մտնում են Մոնտէգիւ եւ Ռոբիշներ):

ԻՇԽԱՆ

Եկ, ով Մոնտէգիւ, դու վաղ ես զարթել՝
Ու տեսնես որդուգ վաղաժամ մահը:

ՄՈՒՑՑԵԴԻՀԻ

Աւազ, վեհապետ, կինըս այս գիշեր
Հոգին աւանդեց: Որդուս տքսորի
Պատճառած վիշտը նըրան ըսպաննեց:
Ի՞նչ մի նոր աղէտ դաւ է դրել արդեօք
Իմ ծերութեան դէմ:

ԻՇԽՆԱՆ

Նալիր, կըտեսնես:

ՄՈՒՑՑԵԴԻՀԻ

Օ՛չ, անբարեկիրթ, մթթէ վայել է
Կանխել քո հօրըդ դէպի գերեզման:

ԻՇԽՆԱՆ

Գոցեցէք պահ մի ողբի բերանը,
Մինչև որ պարզենք այս գաղտնիքները,
Ճանաչենք աղբիւրը, գործի սկիզբը
Եւ ճիշդ դէպերը. և այն ժամանակ
Ինքըս կըլինիմ ձեր սուգի պետք
Եւ ուղեցոյցը նոյն իսկ դէպի մահ:
Ուրեմն առ այժըմ զըսպեցէք դուք ձեզ.
Թող համբերութեան ծառայէ վիշտը:—
Բերեցէք այստեղ կասկածեալներին:

ՀԱՅՐ ԼՈՌԵՆՍ

Կասկածեալների մեծը հէնց ես եմ,
(թէւ ամենից անկարող մարդը),
Քանի որ տեղը և ժամանակը
Այս սարսափելի ըսպանութիւնը
Ինձ են վերագրում: Գալիս եմ ահա
Թէ ինձ մեղադրել, թէ արդարացնել,
Դատապարտել ինձ և անմեղացնել:

ԻՇԽՆԱՆ

Ուրեմն ասա շուտ ինչ քեզ լալտնի է:

Ես կարձ կըխօսիմ, քանզի կարձ շունչը
Որ մնացել է ինձ՝ չէ այնքան երկար
Որքան տաղտկարեր մի մեծ պատմութիւն:—
Ռոմէօն, որ ահա ընկած է մեռեալ՝
Էր ամուսինը այս Զուլիէտտալի:
Զուլիէտ, որ ահա ընկած է մեռեալ՝
Էր Ռոմէօյի կինն հաւատարիմ.
Ես եմ կատարել նոցա պըսակը:
Եւ նոցա գաղտնի ամուսնութիւնը
Հէնց խեղճ Տիբալտի մեռնելու օրն էր,
Որի վաղաժամ մահըն աքսորեց
Նորապսակ վեսալին այս քաղաքից դուրս:
Նորա համար էր, ոչ թէ Տիբալտի,
Որ Զուլիէտ մաշում էր:
(Կասիւլլոյն)
Եւ դուք, նորանից
Վանելու համար պաշարող վիշտը՝
Նշանեցիք նըրան, և ուզում էրք
Բըռնի պըսակել կոմս Պարիսի հետ:
Նա եկաւ ինձ մօտ և յուզուած դէմքով
Ինդըրեց աղաչեց, որ մի ճար գըտնեմ
Նըրան այս երկրորդ ամուսնութիւնից
Փըրկելու համար. թէ ոչ՝ ուզում էր
Հէնց իմ խուցիս մէջ անձնասպան լինել:
Ես նորան տըւի, տրուեստիս հըմտութեամբ,
Քընաբեր մի դեղ, որ նորա վերայ
Գործեց իմ ուզած ազգեցութիւնը
Եւ տըւաւ նորան մահու երկոյթ:
Եւ նոյն ժամանակ՝ ես Ռոմէօյին
Նամակ գըրեցի, որ այս ժամտ գիշեր
Գալ ինձ օգնելու, և հանենք նըրան
Իր անբընական դամբանի միջից.

Քանզի այս գիշեր պէտք է վերջանար
 Այն գեղի ոյժը: Բայց նա, որ պէտք է
 Նամակը տանէր, Հայր Յովհաննէսը՝
 Դըժբախտ գիպուտածով արգելքի հանդիպեց,
 Եւ երէկ գիշեր նամակս յետ տըւաւ:
 Յայնժամ ես մենակ, նորա զարթնելու
 Որոշուած ժամին եկայ այն դիտմամբ,
 Որ նըրան հանեմ իր դամբարանից
 Եւ պահեմ նըրան իմ սենեակի մէջ՝
 Մինչև կարենամ, լարմար ըոպէին,
 Մի մարդ ուզարկել Ռոմէօյի մօտ:
 Բայց երբ ես եկայ, մի քանի ըոպէ
 Նորա զարթնելու ժամանակից շուտ՝
 Այստեղ վաղաժամ տարածուած էին
 Ազնիւ կոմս Պարիս և հաւատարիմ
 Ռոմէօն, մեռած: Զուլիէտ ըսթափուեց:
 Ես պազատեցի, որ թողնէ դուրս գայ
 Եւ աստուածային այս պատուհասին
 Համբերութեամբ տանէ. բայց այդ ժամանակ
 Մի աղմուկ լսելով սարսափած ելալ
 Այն գերեզմանից. և նա, յուսահատ,
 Զուգեց գալ ինձ հետ, այլ երեսում է
 Ինքն իրան սպաննեց: Ա.հա ինչ որ գիտեմ:
 Նորա գայեակն էլ տեղեակ է նոյնպէս
 Այդ ամուսնութեան: Եթէ կայ մի բան,
 Որ իմ յանցանքով չարիք է ծընել՝
 Թող իմ ծեր կեանքըս, մի քանի ժամ վաղ,
 Զոհուի օրէնքի բոլոր խըստութեան:

ԻՇԽՆԱՆ

Մենք քեզ մի սուրբ մարդ ճանաչել ենք միշտ:—
 Ուր է Ռոմէօյի ըսպասաւորը,
 Ի՞նչ ունի ասելու:

ԲԱՂԳԱՍՎՐ

Ես տարի գոյժը
 Զուլիէտի մահուան՝ իմ տիրոջ համար:
 Նա Մանտուայից պոստայով եկաւ
 Ուղեղ հէնց այստեղ, հէնց այս շիրիմը:
 Եւ ինձ հըամայեց՝ վաղ առաւօտեան
 Գընալ և իր հօր տալ այս նամակը:
 Նա ինձ մահ սպառնաց, երբ որ ներս գընաց՝
 Թէ չըմեկնէի և նըրան այնտեղ
 Մենակ չթողնէի:

ԻՇԽՆԱՆ

Տուր ինձ նամակը.
 Ես պէտք է կարդամ: Ո՞րտեղ է կոմսի
 Այն մանկաւիկը որ պահակ կանչեց:—
 Տըղայ, քո տէրըդ բնէ էր անում արտեղ:

ՄԱՆԿԱՀԻՒ

 Ծաղիկներ բերեց, որ իր սիրուհու
 Գամբանը պըճնէ, և ինձ հըամայեց
 Գնալ հեռու կանգնել. ես էլ այդպէս արի:
 Յանկարծ երևաց մի մարդ, մի ջահով,
 Այն գերեզմանը բանալու մըտքով:
 Նատ չանցաւ, տէրըս սուր քաշեց նրա դէմ,
 Եւ ես վազեցի պահակ կանչելու:

ԻՇԽՆԱՆ (Նամակը կարդալով)

Ստ հաստատում է տէր հօր խօսքերը,
 Եւ նոցա սէրը, Զուլիէտի մահուան
 Գոյժի հասնելը. և գըում է այստեղ,
 Որ մի չըքաւոր գեղափաճոից
 Նա թոյն է գընել և իսկոյն եկել
 Այս դամբարանը՝ Զուլիէտի կողքին
 Նընջելու համար: (Նայելով չօրս կողմ):

Հիմա որտեղ են

Այն սսոխները: — Կապիւլէտ, — Մոնտէգիւ,
Տեսէք ինչ պատժով պատուհասուած է
Չեր թշնամութիւնը: Աստուած ըսպաննեց
Չեր երջանկութիւնը սիրոյ միջոցով:
Եւ ես, աչք կապելով ձեր գժտութեանց վրայ՝
Ես էլ կորցրեցի մի զոլոց ազգական.
Իւրաքանչիւր ոք պատիժն ըստացաւ:

ԿԱՊԻՒԼԵՏ

Օ՛, եղբայր Մոնտէգիւ, տուր ինձ քո ձեռքըդ,
Այս է իմ աղջկաս ըստացած մահը. *)
Սրանից աւելի ես չեմ պահանջում:

ՄՈՆՏԷԳԻՒ

Բայց ես կարող եմ առաւել տալ քեզ.
Ես կըկանգնեցնեմ զուտ ոսկի արձան
Քո գըստեր համար: Ցորչափ Վերոնան
Այդ անուամբ կոչուի՝ չի լինիլ մի դէմք
Այնքան յարգելի՝ որչափ որ անկեղծ
Եւ հաւատարիմ Զուլիէտի դէմքը:

ԿԱՊԻՒԼԵՏ

Եւ նոյնչափ հարուստ կլինի Ռոմեոն
Սիրուհու կողքին: Աւաղ, խեղճ զոհեր
Մեր թշնամութեան:

ԻՇԽԱՆ

Այս առաւօտը
Մըուայլ հաշտութիւն բերում է իր հետ:
Արևը, վըշտից, չէ ուզում ցոլց տալ

Իր կերպարանքը: Գընտնք այստեղից
Եւ այս տըրտմառիթ դէպքերի վըրայ
Դեռ պէտք է խօսինք: Ոմանք պէտք է ներուին,
Ոմանք պատժըւին: Քանզի չէ եղել
Երբէք պատմութիւն այնչափ ցաւագին՝
Քան վէպը Զուլիէտի և Ռոմեօի:

(Ամենքը դուրս են գնում):



*) Մահը այն ստացուածքը կամ դրամն է, որ մի ամուսին նախապէս վերապահում է իր կնոջ համար, իր մահուան պարագայում: Բառը առնուած է արաբական «մէհրից»:

ppnson h
Inressu

1. Ապահով է առաջ պատճենաբառը ու
այս ժամանակ ի պահանջման ուր և
առանձ է զարդ պահանջման և զարդ ամ
շահ է պահ ու պահանջման պահանջ
պահանջման մաստինաբառը չ այս
պահ է զարդ պահանջման պահ

առանձ պահանջման

ՀՀ Ազգային գրադարան



NL0177467

